



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

792


447

Б
22842

ԱՇՈՏ ՀԱՅՐԱԴԵՏՅԱԷ

792

2-30



Handwritten notes in Armenian script at the top of the page.

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏԱՆ

Ե

222842

Handwritten note: -17 10/10/58

ԳՐԱԿԱՆ և ԹԱՏԵՐԱԿԱՆ Դ Ե Մ Ք Ե Ր



ՀՏՏԻՆ N 1554

Архивное Управление
МВД Армянской ССР
НАУЧНО-БИБЛИОТЕКА
СНОВАРИЯ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ
« ՍԱԲՃՈՐԱ ՍԱԲԱՐԹՎԵԼՈ »
ԹԲԻԼԻՍԻ
1958

Ծ Ե Ր Ո Ւ Ն Թ Ո Ր Գ Ո Մ Յ Ա Ն

Վրաստանի սովետահայ արձակագիրների մեջ Մերուն Քորգոմյանը ավագագույն և բեղմնավոր գրողն է: Գրական ասպարեզ մտնելով 1917 թվականին, նա տվել է բազմաթիվ պատմվածքներ և վեպեր, որոնք տպագրվել են սովետական թերթերում, պարբերականներում և առանձին գրքերով:

Հեղինակն առանձին գրքերով հրատարակել է «Նրկերի» 1-ին և 2-րդ հատորները (1926—1930 թ. թ.), «Աղալի մեղքեշը» (1927 թ.), «Մոսկու օրերից» (1935 թ.), «Ժպտացող կյանքը» (1936 թ.), «Կանաչ բարձունքներ» (1931 թ.), «Խրնդուլյուն» (1936 թ.), «Բնության գրկում», «Քլզան ջուրը» (1939 թ.), «Արծաթե ժապավեն» (1940 թ.), «Հարազատ լարեր» (1947 թ.), «Նրկեր» (1948 թ.), «Պատմվածքներ» (1951 թ.), պատմվածքների ժողովածուներ և «Կապուտակ ջրերի մոտ» (1936 թ.), «Հորձանքում» (1931 թ.) ու «Անմար կրակներ» (1955 թ.) վեպերը: Սախելզամիի հրատարակությամբ 1948 թվականին լույս է տեսել պատմվածքների ժողովածուն՝ վրացերեն լեզվով:

Մ. Քորգոմյանի թեմատիկան հարուստ է և ազատ միօրինակությունից: Ունենալով պատմելու էպիկական պարզ ոճ և սահուն լեզու, նա կարողանում է հարնգատորեն բացահայտել մովետական կյանքի բոլոր մանրուքները: Կյանքի ոլորտներն ու նրա նրբությունները նկարագրելու բարձր կարողությամբ և մարդկային ներքնաշխարհը գեղարվեստորեն դրսևորելու նուրբ ձիրքով օժտված գրողը հանդես է գալիս ոչ միայն սոսկ նկարագրողի դերում, այլև կյանքի կենճոտ և հերոսներին այրող հարցերը ակտիվորեն լուսաբանողի, փիլիսոփայորեն լուծողի դերում:

Մ. Քորգոմյանը նյութը հարստացնում է ժողովրդական խոսքի, ֆոլկլորի բազմաբղետ գույներով: Դիմելով Վեղիկյան:



1512-2003

արտահայտչական պարզ ձևերի, նա չի մոռանում ժողովրդ-
դայինը, որը ոչ թե թուլացնում, այլ ավելի արտահայտիչ ու
հուզական է դարձնում պատմվածքի գեղարվեստական կող-
մը:

Մերոն Թորգոմյանը ծնվել է Վանում, 1897 թվականին:
Միջնակարգ կրթությունն ստացել է քաղաքի Երևմյան դպրո-
ցում, սովորել է նաև մանկավարժական բարձրագույն քա-
ռամյա դասընթացներում:

1915 թվականի ամառը հայ ժողովրդի մեծ բանաստեղծ
Հովհաննես Թումանյանը ճանապարհորդում է Վան: Պատա-
նի Թորգոմյանը առիթ է ունենում ծանոթանալու նրա հետ, որ
և վճռական դեր է խաղում Թորգոմյանի գրական կյանքում:

1916 թվականին Մ. Թորգոմյանը տեղափոխվում է
Անդրկովկաս և բնակություն հաստատում Թբիլիսիում: Հայ-
րը որպես բանվոր աշխատում է «Կոմեստ» ձխախուսի գոր-
ծարանում, իսկ ինքն զբաղվում է մանկավարժությամբ: Թ-
բիլիսիում՝ հայ որբերի տեղափոխման և խնամքի գործում
Մերոն Թորգոմյանը Հովհաննես Թումանյանի ղեկավարու-
թյամբ հոգատար, կուլտուրական մեծ աշխատանք է կատա-
րում:

1916 թվականի վերջերին Թորգոմյանը ծանոթանում է
բանաստեղծ Վահան Տերյանի հետ, որը հաջողեցնում է
Բաքվում լույս տեսնող «Գործ» ամսագրում Թորգոմյանի
«Լալակ» գլխից՝ վերնագրով պատմվածքի տպագրումը:
«Գործ»-ում տպագրվում է հեղինակի նաև «Անթառամ ծա-
ղիկներ» վեպը:

1918—20 թվականներին Մերոն Թորգոմյանը որպես
մանկավարժ աշխատում է Հյուսիսային Կովկասում: Քաղա-
քացիական կռիվների ետևն շրջանում էա ակտիվորեն մաս-
նակցում է նորաստեղծ պրոլետարական կուլտուրայի զար-
գացման գործին: 1921 թվականին վերադառնում է նորից
Թբիլիսի և աշխատակցում է հայ պրոլետարական գրակա-
նության հիմնադիր Հակոբ Հակոբյանի գլխավորած «Բարբ-
նոց» ամսագրին:

1922 թվականին բանաստեղծ Հ. Հակոբյանի նախադա-
հությամբ Վրաստանի Արճմիությունների մեծ դահլիճում
տեղի ունեցավ Մ. Թորգոմյանի գրական գործունեության
նամակներն նվիրված հանդիսավոր երեկո: 1957 թ. մայի-
սին Թբիլիսիի գրական հասարակայնությունը հանդիսավոր

կերպով նշեց Մերոն Թորգոմյանի գրական գործունեության
40-ամյա և ծննդյան 60 ամյակը:

Չնայած տկարությանը, Մերոն Թորգոմյանը ստեղծա-
գործական ավյունով չի շարունակում է իր գրական գործու-
նեությունը:

* * *

Մերոն Թորգոմյանը իր անդրանիկ պատմվածքով և
«Անթառամ ծաղիկները» վեպով աչքի ընկավ որպես կազ-
մակերպված գրող: Գրական հասարակայնությունը շերմորին
ընդունեց երիտասարդ գրողին, որը մինչև այդ հանդես էր
եկել. պարբերականներում իր մի քանի բանաստեղծություն-
ներով, պատմվածքներով ու հրապարակախոսական, բանա-
սիրական հոդվածներով:

«Անթառամ ծաղիկներ» վեպը, լինելով հեղինակի առա-
ջին ծավալուն երկը, գրված է արևմտահայ լեզվով: Նա ըս-
կրգրենական շրջանում գրում էր արևմտահայ լեզվով, հետա-
գայում անցավ արևելահայ լեզվին:

«Անթառամ ծաղիկներ» վեպում հեղինակի շոշափած
թեման նորություն չէր մեր գրականության մեջ: Ընտանե-
կան հարցի, անհամապատասխան գույզերի մասին շատ են
գրել մեր արձակագիրները, բայց Մ. Թորգոմյանը յուրովի է
մտնեցի այդ հարցի լուծմանը, — և դա է գրականը, ողջու-
նելին: Այդ վեպում հեղինակը դատապարտում է վաճառա-
կան Ստեփան Մարգարյանի և Աստղիկի ոչ միայն բռնի ա-
մուսնությունը, այլև քայլ առ քայլ ցույց է տալիս հերոսու-
հու խոր ներքին ապրումները, որը, արհամարհելով հասարակ-
ական կարծիքն ու հարադատների հորդորանքը, վերջնակա-
նապես խզում է կապերը Մարգարյանից և կապվում է Գուր-
գենի հետ, որին սիրել է մանկությունից և անգամ ամուս-
նության յոթ տարիների ընթացքում հոգով ու սրտով նվիր-
ված է եղել նրան: Վեպի բովանդակությունից երևում է, որ
հեղինակը նկարագրում է 1917 թվականին Ռուսաստանում
տեղի ունեցած մեծ դեպքերի նախօրյակը, երբ առաջին հա-
մաշխարհային իմպերիալիստական պատերազմը դրսևորեց
մի կողմից՝ ցարիզմի և բուրժուազիայի նեխվածությունը,
անանկությունը և քայքայումը, մյուս կողմից՝ աշխատավո-
րական լայն մասսաների պայծառ ապագայի հավատով լրց-
ված հոգու վեհությունը, ցարիզմի, բուրժուազիայի, կալվա-

ծատերերի և նրանց բարոյական նորմաների դեմ պայքարելու պոռոչ ձգտումները: Վաճառական Մարգարյանի խորտակումով Մ. Թորգոմյանը տվել է հին աշխարհի, բուրժուազիայի և նրա բարբերի անկումը, իսկ ընտանեկան դաժան կապանքներից ազատագրված Աստղիկի կերպարով, նրա հետագա բախտի նկարագրությամբ հեղինակը, ճիշտ է, ոչ խտացրած, բայց պայծառ գույներով տվել է բարոյական, իր ուժերին վստահ կնոջ զարթոնքը և հոգու ելևէջները:

Ծերուն Թորգոմյանի ստեղծագործության սկզբնական շրջանի պատմվածքների թեման ընդգրկում է նախառևոյացիոն հայ իրականությունը: Հեղինակը թանձր գույներով է նկարագրում հին, մոռյլ կյանքը: Խավարն է թագավորում ոչ միայն հասարակական կյանքում, այլև ընտանիքում: Նախառևոյացիոն կյանքը իր դաժան օրերով, ծուռ ոսկոններով, ձեթ ծախող ակոններով, աղաներով այն միջավայրն է, որը հեղինակը ոչ միայն դիտել է, այլև ապրել, անձամբ ճաշակել նրա դառնությունները:

Այդ կյանքը այսօր չկա, անհետացել է, բայց Մ. Թորգոմյանի պատմվածքների ընթերցումով կարող ենք վերականգնել մեր հիշողության մեջ: Այդ պատմվածքներից յուրաքանչյուրը մի-մի ցայտուն հուշարձան է, որ մարմնավորում է հին աշխարհը՝ իր այլանդակություններով և մարդու իրավունքները ոտնահարող բիրտ օրենքներով:

Մ. Թորգոմյանի պատմվածքների սյուժեն պարզ է, բովանդակությունը ռեալիստական, բնական: Նրա պատմվածքների հերոսներից օտտոոր հրահանում ետել են, ոտրծել այնպես, ինչպես տրված է հեղինակի մոտ: Հեղինակը միայն փոխել է նրանց անունները:

Ահա Վան քաղաքը, Այգեստանը. նա գիտե գարնան հրաշալիքներով զուգվել ու պճնվել: Բնության այդ հրաշալի անկյունում ապրում է դերձակ Արշակը: Նա փոքր հասակից սիրում է թաղամասի ընդհեցկուհիներից մեկին — Ծրանուհուն: Վաղուց կճանչնար Ծրանուհուն: Հարևաններ էին, մանկության խաղընկերներ: Քանի-քանի անգամ պահվտուր էին խաղացել պարտեզի ծառերի տակ, ջուրերի եզրերը, ընդբրձակ բակի մեջ, իսկ երբ Ծրանուհին մեծ աղջիկ դարձավ, հասունացավ, Արշակի սրտում գրավեց ամենեն զգայուն տեղը և ամենանգամ, Ծրանուհու անունը հնչելիս, սիրտը կխշար ու կթրրթրար, ինչպես լարը ջուլթակիս: Սակայն Ծրանուհուն ամուսնացնում են Արշակի եղբոր՝ Աշոտի հետ: Արշակը տխրում է:

Դառնում է մտածկոտ, կարծես ինչ-որ վատ բան է կատարվել: «Ձեռքես ելավ, գնաց...» դառնացած մտածում էր Արշակն ու թաղվում մտքերի մեջ: Արշակը դժվարանում է միևնույն հարկի տակ եղբոր հետ միասին ապրել: Աշոտի պսակվելուց մի ամիս շանցած, Արշակը խոսք բացեց այդ մասին, առարկելով, որ տունը նեղվածք է և եղբորը չի ուզում անհանգստություն պատճառել: Արշակը եղբորից բաժանվեց: Մայրը՝ Մարիամ խաթունը սկզբում վշվշաց, տրտնջաց, հետո վարժվելով նոր կյանքին, լրջորեն սկսեց մտածել տղու ապագայի, այն է՝ ամուսնության մասին: Արշակին համոզեցին ամուսնանալ:

— Որդի, քեզ չպսակած գլուխս հողի տակ դնելու չեմ, լավ ժամանակն է, տուն շենցնող հարս է պետք: Մարիամ խաթունը աշխույժ գործի անցավ և վերջը վճռեց Արշակին ամուսնացնել Մանիշակենց Ոսկոյի հետ: Արշակը հարց ու փորձով իմացավ Ոսկոյի մասին, բայց վատ բան չսեց: Համաձայնեց, բայց «նշանտուրը Արշակի համար անցավ ինչպես մի մշուշապատ անուրջ»: Ամուսնանալուց հետո Արշակը փոխվեց, դարձավ էլ ավելի մոռյլ ու մտածկոտ: Ոսկոն դարձավ «ինչպես աղախին»: Սակայն դարնանը նրանց տանը մեծ փոփոխություն կատարվեց: Վար ու ցանքով զբաղվող Աշոտը մի անգամ գլուղ գնաց և այլևս չվերադարձավ: Ավագակներն սպանել էին նրան ճանապարհին: Արտիացած Ծրանուհին գալիս է Արշակենց տանը ապրելու: Մարիամ խաթունը մեծ հարսին ընդունում է սիրալիր, Արշակն առավել ևս: Ոսկոյի համար ստեղծվում է ողբերգական վիճակ, որն ի վերջո նրան հասցնում է խելագարության: Արշակն ու Ծրանուհին իրենց վաղեմի թաղված սերը բացում են միմյանց առաջ, գաղտնի ապրում իրար հետ, ճրնշելով մի անմեղ էակի՝ Ոսկոյին: Հիմա Արշակը շուտ է տուն գալիս: Նա ապրում է Ծրանուհու: Հաճախակի հանդիպում են այգում: Ծրանուհին վավաշոտ անձնատուր է լինում Արշակին և օձի պես գրկույմ Արշակի մեջքը... Ոսկոն տեսնում է այդ, զգում է, որ Ծրանուհու օձանման գալարումը խեղդում է իրեն: Մտածմունքից խելագարվում է: Ոսկոն կոտրում է մոռյլ իրականության մեջ, իսկ Արշակը Ծրանուհու հետ միասին տեղափոխվում է Ամերիկա:

Ահա պատմվածքը, որը բռնում է 50 էջից ավելի և գրված է 1918 թվականին, սոցիալ-կենցաղային մի դրամա, որտեղ խտացրած գույներով հեղինակը տալիս է նահապետական հայ ընտանիքի քաղքերի ստվերոտ կողմերը, կնոջ ստրկական վիճակը: Ոսկոն այդ բարբերի զոհն է: Հնազանդ այդ բիրտ

սովորութիւններին, նա իրեն պահում է կծկված, մեռցնելով հոգու խորքում իր ազատութիւնն ու խոհումները: Նա հազարավոր այն նահատակ կանանցից մեկն է, որը զրկված է ընտանիքում սեփական իրավունքներից, եսից, որպէս կին կաշկանդված է հին սովորութիւններին և լուռ տանում է ինչպէս սկեսրոջ, այնպէս էլ ամուսնու արհամարհանքը:

Ծերուն Թորգոմյանը միաժամանակ ցույց է տալիս, թե ինչպէս աստիճանաբար քայքայվում են հայ ընտանեկան նահապետական բարքերը: Արշակի կողմից օրինական կնոջը լքելը, մի հարկի տակ հարազատ եղբոր կնոջ հետ կենակցելը, բարքերի ապականացման նշան է: Թորգոմյանը Ոսկոյի մեջ տեսնում և զարբացնում է մի խուլ բողոք, մի ճիշ, որը ուղղված էր խավարի մոռալ թագավորութեան դեմ, կնոջ ստրկական վիճակի դեմ: Այդ բողոքը սկզբում անզոր, դուսպ ու անպաշտպան էր: Ոսկոն, որպէս նահապետական բարքերին հյու-հնազանդ արարած, համոզված էր, որ արևելյան կինը ծնված է հեղու-թեան համար: «Օրեր կանցնեին, այսպէս, — գրում է հեղինակը, — իսկ Ոսկոյի բերանից դժգոհութեան խոսք չէր թռչում: Անբարբառ թռչուն, արդեն աղջիկ ժամանակ էլ շխտական էր»:

Խեղդելով իր մեջ դառն անարգանքները, Ոսկոն հասնում է խելագարութեան և միայն այդ վիճակում, նա համարձակվում է սկեսրոջը հանդիմանել, որ օձը կանգնել է օղակ-օղակ և հանգիստ չի տալիս իրեն: Այդ օձը այն բիրտ իրականութիւնն էր, ստոր բարքերը, որոնք իր պատիվը, իրավունքը պաշտպանող հայ կնոջ բողոքը խեղդեցին և նրան խելագարութեան հասցրեցին:

Ծերուն Թորգոմյանի այդ պատմվածքը կենցաղային մի խոր ու հուզիչ ողբերգութիւնն է: Հեղինակը նկարագրել է հին բարքերի սովորոտ կողմերը, թեև սուր ընդհանրացումներ չի կատարել: Այդ է պատճառը, որ խավարի թագավորութեան դեմ պայքարի ելնող Ոսկոյի ճիշը մնում է անարձագանք:

Խավարի թագավորութիւնը Ոսկոյով չէր վերջացնում իր խրախճանքը. նա իր թեքի տակ էր առել նաև Ակոյին, Մարտիրոսին, Մուստաֆային, որոնց դառն ճակատագրի նկարագրութեանն է անցել հետագայում Թորգոմյանը իր «Ձեթ ծախող Ակոն», «Մոռալ օրերից» և «Աղայի փեշքեշը» պատմվածքներում:

* * *

Ակոն, գյուղից եկել է դավառական քաղաք և ձեթ է ծախում ձիթահանի տեր Սամսոն աղայի համար: Ակոն սուս-վտոյից մինչև ուշ գիշեր աշխատում է ու դարձյալ ձեռնունայն մնում: Ակոն ուզում է տուն ու տեղ դառնալ, չի կարողանում: «Շատ ծանոթներ պսակվեցին, տուն-տեղ սարքեցին, բայց Ակոն մնաց նույն անբուն թռչունը՝ ծառի շոր ոստին կպած... Իսկ անհոգի Սամսոն աղան՝ ամեն երեկո հաշվում էր Ակոյի աշխատանքը ու հաճախ է՛վիթ լինում:

— Սամսոն աղան կթողնի՞, որ դրամ մտնի գրպանդ, աղքատի սև գրողն է նա, — ասում է Ակոյին մի ջահել բանվոր: «Աշխարհը էլի էն հին գինին է, հին կարասի մեջ, հին սայլը հին սոնին, էլի դառն ու գելը միասին են ապրում ու անխիղճ գելը ծվատում է, լափում, չի կշտանում», — փիլիսոփայում է մի ուրիշ բանվոր:

Խավարի թագավորութեան մեջ լսվում են հատ ու կենտ ըննադատական շրուկներ, խիստ անհամարձակ ու սահմանափակ: Չկան ըմբոստացողներ: Եթե Ոսկոն օձը տեսավ և թույլ ճիշ արձակեց, Ակոն և նրա ընկեր մշակները տեսնում են անարգարութիւնը, բայց ձայն-ծպտուն չեն հանում: Դա արևելյան շարքաշ աշխատավորի, կծկված կյանքով ապրող մշակի ներքին տրագեդիան է: Այդ մշակը ճնշված է նահապետական բարքերի և ֆեոդալական կարգերի ծանր լծի տակ, դանդաղորեն է դասակարգային դիտակցութեան հասնում:

Ակոն պետք է ամուսնանա Լուսոնի հետ, ընտանիք կազմի: Դա նրա երազանքն է: Սակայն քաղքենի մոռալ իրակա-նութիւնը նրան հալածում է: Լուսոնը նախընտրում է ամուսնանալ քաղաքացի հարուստ Մուխսի Սահակի հետ:

Ակոն մի պահ, կարծես, ուզում է իր հուզմունքը, արդար բողոքն արտահայտել բոլորին լսելի ձայնով, բայց վարանում է: Ի վերջո իր ցասումնալից բողոքը նա արտահայտում է կուժը դեմանին զարկելով: «Մի ինչ-որ ցանկութիւն հեղեղի պես վարարեց բովանդակ էութիւնը: Մի բուրբ սպանական հայացքով առաջ վազեց դեպի Լուսոնենց դուռը և կյանքի մեջ վերջին անգամ բոլոր ուժերով ձայնեց:

— Ձեթ առեք, ձե՛թ...

Եվ ուսից վար առնելով կուժը, մոլեգին ցասումով զարկեց գետին:

«... Ակոն նայեց իր կուժի ջարդված կտորներին՝ աչքերն

ատելութեան ու բարկութեան կայծերով բոցկալուուն և շուտ
գալով ձյունների միջից արագորեն քայլեց փողոցի երկայնքն ի
վար, հաղթ մարմինն առաջ ծռած, դեմքի մկաններն ուռած ու
կապույտ, ձեռներն բռունցք սպառնական»:

Սակայն թորգոմյանի հերոսները միշտ չէ, որ հանդես են
գալիս հնազանդ մարդու դերում: Հեղինակը, ճիշտ է, ոչ ակ-
տիվորեն, բայց երբեմն խուլ կերպով այդ խավար աշխարհում
հնչեցնում է բողոքի շեշտեր:

Մուստաֆան որպես բատրակ աշխատում է Իբրահիմ ա-
ղայի կալվածքում: Չնայած նրա տնտեսական ծանր կացու-
թյանը, Մուստաֆան իրեն երջանիկ է զգում և Ֆաթիմեի սի-
րով երջանիկ՝ ապրում է գոհ ու խաղաղ: Պատմվածքում տըր-
ված է նախառնույնցիոն ադրբեջանական գյուղի առօրյա
կյանքը: Կալվածատեր Իբրահիմը դաժան է վարվում բա-
րակների հետ: Այդ գիտեն բոլորը, այդ մասին մտածում է
ինքը՝ Մուստաֆան: «Հըմ, աղան բոլորիս համար էլ մեկ է,
բոլորիս արյունն էլ որ խմի, չի կշտանա»:

Մուստաֆան նման չի Ակոյին, նա գիտակցում է, որ ինքը
շահագործվում է դասակարգային թշնամու ձևերի տակ: Եթե
Ակոն կողմնակի մարդկանց հուշելով է իմանում իր իրա-
վունքների ոտնահարումը, Մուստաֆան ինքն է պրոպագան-
դում, որ «աղաները բոլորի արյունը խմողներ են»: Նա այդ
բանը գիտակցում է, սակայն, չնայած դրան, դարձյալ հյու-
հնազանդ աշխատում է աղայի կալվածքում, առանց մի տըր-
տունը արտահայտելու: Երկար չի տևում նրա պասսիվությունը:
Իբրահիմ աղան դաժան շահագործման հետ միաժամանակ
գողունի տիրել է Մուստաֆայի կնոջը՝ գեղեցիկ Ֆաթի-
մեին: Այս բանը արեկոծում է Մուստաֆային, որը աղայի
կողմից Ֆաթիմեին ուղարկած փեշքեշների մեջ տեսնում էր
անպատված կնոջ արյան շիթերը, ուստի առանց տատանվելու
վերցնում է հրացանը և հետապնդում աղային: Հանդիպելով
աղային, նա հրացանի փողը ուղղում է նրա կրծքին և, մի
հատիկ «մուխանաթ» բառով արտահայտում է իր սրտում ա-
ղաների հանդեպ կոտակված ատելութեան հուրը: Աղան իրեն
հավաքում է, փորձում է խորամանկել՝ մեղմել Մուստաֆայի
զայրույթը:

— Արա, գժվել ե՛ս, գյադա, էտ ինչեր ես անում, կաց-
բալամ, քեզ համար մի լավ փեշ...

Աղան իր վերջին բառը չի ավարտում: Մուստաֆան ա-

ղայից պահանջում է ոչ թե փեշքեշներ, այլ Ֆաթիմեի պատի-
վը, ուստի հաշիվը մաքրելով աղայի հետ, դառնում է ղաշաղ:

Մուստաֆան ուրիշ էլք չուներ: Նա կովում է աղայի դեմ
իր պատվի, բայց ոչ սոցիալական անարդարության համար:
Չլինեք Ֆաթիմեն, նա կշարունակեք աղայի մոտ իր շար-
քած կյանքը: Այդպիսին էր Մուստաֆայի շրջապատը: Նրա
նման շատերը առավոտից երեկո աշխատում էին և հաշտվում
իրենց դառն վիճակի հետ: Գյուղի շքավորները դասակարգային
պայքարի դիտակցականությունից հեռու էին կանգնած:
Մուստաֆային թվում էր, որ կյանքը այդպես սկսվել է, այդ-
պես էլ վերջանալու է: Պետք է ասել, որ այդ շրջանում Մե-
րուն թորգոմյանը դեռ գուրկ էր երևույթները դասակարգային
ասպեկտով դրսևորելու, ընդհանրացնելու կարողությունից:
Նրան հետաքրքրում էր սոսկական փաստը և այդ փաստի
արձանագրումը: Եթե նա խորանար սոցիալական այդ
դաժան երևույթները ծնող բուն պատճառների մեջ, նրա հե-
րոսները կլինեին ոչ թե Մուստաֆայի և Ակոյի նման լոկ ի-
րենց արժանապատվության, եսի համար խուլ բողոքողներ,
այլ դասակարգային պայքարի ուղին բռնած, բոլոր տառա-
պողների համար մարտնչողներ:

«Աղայի փեշքեշը» պատմվածքում Մերուն թորգոմյանը
Ադրբեջանի գյուղացիության դառն վիճակի հետ միասին
ցույց է տալիս նաև նրա արթնացումը:

Աշխատավորի ծանր վիճակի նկարագրությանն է նվիրված
նաև հեղինակի «Մուսլ օրերից» պատմվածքը, որտեղ ցուցա-
դրված է Մարտիրոսի տառապանքներով լի կյանքի մի դրվագը:

Մարտիրոսը աշխատում է վաճառական Սարգիս Ասլա-
մագյանի մոտ: Քանի ամուսնացած չէր Մարտիրոսը, նա չէր
զգում այն վիճը, որ կա իր և վաճառականի միջև, բայց
օրերից մի օր, երբ ամուսնացավ Բուրաստանի հետ, նա-
իր կաշու վրա զգաց ասլամագյանների ծաղր ու ծանակը,
հալածանքը: Գեղեցիկ էր Բուրաստանը և առողջ: Լեռնաշ-
խարհում ծնված գեղեցկուհին իր բարեմասնություններով շար-
ժել էր քաղքենիական հակումներով դաստիարակված աղայի
կնոջ և տնային տնտեսուհի՝ Աշխենի նախանձը: Այդ նա-
խանձը էլ ավելի բորբոքվում է, երբ Մարտիրոսի ընտանե-
կան հարկի տակ մեծանում էին Մարտիրոսի գեղեցիկ ու ա-
ռողջ երեխաները:

Նախանձը հետապնդում է Մարտիրոսին, հալածվում է

ոչ միայն նա ինքը, այլև գերդաստանը: Ուժեղ է պատմը-
վածքի վերջավորութունը, երբ ոստիկանը բռնի ուժով փողոց
է շարտում Մարտիրոսին մեռած երեխայի դիակի հետ միա-
սին: Ընտանիքը մնում է անօթևան: Այդ ծանր պահին
աղայի գործակատարը Ասլամազյանի անունից Մարտիրոսին
մեկնում է մի քանի ուրբի՝ երեխային թաղելու համար:
Մարտիրոսը գործակատարի երեսին է շարտում փողը, ասե-
լով ձեռք փողը տարեք և Սերգեյ Պետրովիչի թաղման վրա
ծախսեցեք, երբ նա գյուրեգյուր լինի: Սա Մարտիրոսի
ամենաազդու խոսքն էր, որը երբևիցե նա ասել էր իր կյան-
քում: Մինչև այդ հյու-հնազանդ Մարտիրոսը չի մացավ էլ
ինչպես իրենից անկախ կատարվեց այդ գործողությունը:
Մարտիրոսի այդ քայլը, անշուշտ, դասակարգային գիտակ-
ցության արտահայտություն է:

— Ապրես, Մարտիրոս, — դիմում է նրա բարեկամ
Սահակ քեռին, — լավ վարվեցիր, տղամարդու պես: Թող
նրա ուղարկած դրամը գլխին հարամ լինի, կրակ դառնա և
ունեցած շունեզածը վառի, մոխիր դարձնի:
Ոսկոն և Ակոն դասակարգային պայքարի բովում կոփ-
ված և հասունացած հերոսներ չէին:

Մուստաֆան, ինչպես տեսանք, մի քայլ առաջ անցավ
Ոսկոչից և Ակոչից, արյան վրեժ լուծեց աղայից, Ֆիզիկապես
ոչնչացնելով դասակարգային թշնամուն, իսկ Մարտիրոսը,
որի վրա խոր ազդեցություն էր թողել բուրժուական քաղաքի
բանվորական շարժումը, բարոյապես մերկացրեց Ասլամազյա-
նին և նրա գործակալներին: Ահա այսպես աստիճանաբար
գաղափարապես հասունանում են Թորգոմյանի հերոսները,
նախապատրաստվում դալիք մարտերի համար: Իր հերոսների
հետ միասին աստիճանաբար դասակարգային պայքարի ու-
ղին էր թևակոխում նաև հեղինակը:



Համաշխարհային առաջին իմպերիալիստական պատե-
րազմի թեման միշտ էլ հուզել է գրողներին, որոնք ստեղծել
են հազարավոր գողտրիկ պատմվածքներ, պոեմներ, վեպեր
ու վիպակներ: Թորգոմյանն էլ է անդրադարձել այդ թեմա-
յին: Եվ բնական է: Նա, ինչպես նաև շատ տասնյակ հազա-
րավոր հայեր, տուժել են այդ պատերազմից, պեղահան եղել
իրենց հայրենի օջախից, կարոտ մնացել մայրենի երկրի

հող ու ջրին: Արևմտահայ բնակչության մասսայական ջար-
դերն ու կոտորածները, որոնք տեղի ունեցան 1914—16
թվականներին թուրքական կառավարության ռազմական
մինիստր էնվեր փաշայի, ներքին գործերի մինիստր
Թալեաթ բեյի և զորահրամանատար Զեմալ փաշայի
անմիջական ղեկավարությամբ և դերմանական, անգլիական
ու Ամերիկայի Միացյալ Նահանգների ռեակցիոն ուժերի
օգնությամբ ու հովանավորությամբ, հեղինակը ոչ միայն
տեսավ, ապրեց ու զգաց, այլ ինքն էլ որպես մի զոհ,
հարյուր հազարավոր գաղթական հայերի հետ միասին բռնեց
ռուսական ազատարար հողի ճամբան: Թշնամու հետա-
պնդումը, սովը, հիվանդությունները հնձում էին հայ ժողո-
վրդի սովոր հատվածը դեռևս կես ճանապարհին: Պատ-
կեքը զարհուրելի էր, անպատմելի:

Հեղինակը իր աչքով տեսել է բազում որդեկորույս մայ-
րերի հառաչանքներն ու կոծը, որք մանուկների հեծեծանք-
ները, որոնք քաղցած ու բոկոտն խուճապահար գնում էին
գաղթականների շղթայի ետևից, շունենալով ոչ հույս, ոչ
ապավեն և ոչ էլ անպագայի հեռանկար: Երիտասարդ ա-
ռևանգված աղջիկները, որպես թուրքական վանդալիզմի ան-
պաշտպան զոհեր, խելակորույս հաճախ իրենց պցում էին
ձորերն ու գետերը, անմուրազ թաղելով վառ երազներն ու
հույսերը: Հայրերը կիսախելազար վիճակում փնտրում էին
իրենց կանանց, որդիներին, ամբողջ դերդաստանին և հույսնե-
րը կորցրած, հոգեկան մեծ ցնցումներով բնազդաբար առաջ
էին շարժվում, այնքան գարհուրելի էր թշնամին և նրա պատճա-
ռած վնասները: Նրանցից ամեն մեկը անտերունչ շարժվում էր,
փրկելով իր անձը մեծ տաքնապից, որ լեռնային վարար-
դետի նման հետապնդում էր մարդկանց և կլանում իր պղտոր
ալիքների ցեղ:

Պատերազմի այդ սարսափների և նրա հետագա զար-
հուրելի հետևանքներից ստացած իր առաջին տպավորու-
թյունները Մերուն Թորգոմյանը մարմնավորել է «Աշալակ-
գլխիք» և «Սուկար Մինասը» գեղարվեստական գողտրիկ
պատմվածքներում:

1914 թվականն է: Հիտլերի նախորդների—Վիլհելմի ստոր-
գործակալների, թուրքական ռեակցիոնիկների ձեռքով հայ ժո-
ղովուրդը սրախոխող և տեղահան եղավ Թուրքիայից: Հազա-
րավոր հայ գաղթականներ բռնեցին ռուսական ազատարար
հողի ճամբան: Հարուստ իր ընտանիքի հետ պետք է անցնի

գեսը: Դարասակալ թշնամին հետապնդում է նրանց: Հանկարծ նրանք ճառանց հաշիվ տալու ձգվեցին ջուրը: Չիմացավ Հարութը, թե ինչպես գետի այս ափն անցավ, երեսային թողնելով մյուս ափին: Հարութը կնոջ նախատինքով մտնում է գետը Զավենի կյանքը փրկելու համար, բայց գնդակները սուլոց լսելով՝ ետ է դառնում: Եվ ահա այստեղ Ռեհանը նախատում է նրան ասելով. «Աչալակ գլխիդ լինի թող, կինարմատի սիրտ ունես» և ինքը ճեղքելով գետի ալիքները, անցնում է մյուս ափը, վերադառնում է երեսան կրծքին, բայց տեղ չհասած՝ թշնամու գնդակի հարվածով մեռնում է, գետի ալիքներին հանձնելով տղային՝ Զավենին:

Երեկ Հարութը այդ դեպքից հետո մեռավ կամ խելագարվեց: Դա բնավ չի հետաքրքրում հեղինակին: Հարութի գործած ճնխարկը՝ սոցիալական շարիք չէր: Բայց այդ ճնխարկը՝ ծնող պատերազմը սոցիալական շարիք էր, — ահա պատմվածքի եզրակացությունը: Սա է գլխավորը, որը և բարձրացնում է պատմվածքի գեղարվեստական, գաղափարական արժեքը: Պատմվածքը գրված է վերին աստիճանի կենդանի, ջերմ, հուզիչ պատկերներով և կարգացվում է մեծ հետաքրքրությամբ: Պատերազմի արհավիրքը, ինչպես վերը հիշատակեցինք, շոշափված է նաև «Սուլկար Մինասը» պատմվածքում:

Առաջին համաշխարհային պատերազմի մռայլ օրերին դարասակալ թշնամին շեղտակի հարվածով կիսում է հայ փախբատականների շղթան: Ժողովուրդը գայլահալած հոտի պես ցիր ու ցան է լինում, ամեն մեկն իր գլխի հարը տեսնում:

Մինասը շալակեց վեց տարեկան որդուն՝ Վազգենին ու փախավ խելակորույս, իսկ կինը՝ Գյուլնազը մնաց թշնամու օղակում:

Այդ օրից անցնում է հինգ տարի: Մինասը ճառավորից մինչև իրիկուն մեջը ծռած աշխատում է, յուստ կարում, կամ սրա-նրա մաշված կոշիկները կարկատում: Տունը հավաքող, մաքրող, կերակուր եփող ձեռք չկար: Ինքն ու տղան անխնամ էին, կեղտոտ: Որդին, մանավանդ, հոգացող ձեռքից և ուշադիր աչքից զուրկ՝ թափառում էր փողոցից-փողոց, անպաստան երեսաներին ընկեր դառել, հայ ու մայ էր լինում:

Մանթները և բարեկամները, խղճալով Մինասին, խորհուրդ էին տալիս ամուսնանալ, բայց մեծ հոգու տեր Մինասի համար նման քալ կատարելը այնքան էլ հեշտ չէր: «Պսակվելը կրպակվեմ, բավական է օջախս փարիշան մնաց, մեղքեմ, երեսի տեր: Բայց եթե Գյուլնազը՝ որտեղից որ վերադառնա...»

մըտմտում էր Նինասը և դառնորեն հիշում պատերազմի արյունոտ օրերը, հայրենի երկիրը ծխի ու մրի մեջ կորած, ժողովրդի փախուստը, Գյուլնազին, իր ծննդավայր շեն գյուղը, որ ավերակ դարձրին արյունարբու թշնամիները: Մինասի մեջ եռում է ապրելու տենչը, ուստի որոշեց ամուսնանալ:

Անցան տարիներ: Նոր կնոջից՝ Եղսանից ունեցավ երեսուսուներեք ընթանում էր նորմալ, սակայն այդ խաղաղ կյանքը երկար չի տևում: Մի օր երևան է գալիս Գյուլնազը, Վազգենը հիշում է մորը: Մանկան վառ հիշողությունը և հարազատ մոր գործվալից դեմքը փոթորկում են նրան: Եղսանը հասկանում է իրերի դրությունը և իրեն հավաքելով՝ փորձում է դուրս վաճառել Գյուլնազին: Մինասը քարացած դիտում է այդ պատկերը:

— Տո, իշի մուրթ, քեզ շասի՞ն, որ քոն մարդն ուրիշ տեղ է ապրում: Սուլկար Մինաս ուրիշ տեղ էլ կա, դնա և գտիր. ի՞նչ ես դեկ պես ցցվել և աներես-աներես կանգնել. — դուրաց Եղսանը կրկին ոտնաձուլ դեպի Գյուլնազը:

— Մինաս... — հծծեց Գյուլնազը դառնազին, — կլսե՞ս ինչ կըսեն, կուզես երթամ ջո՞ղքն ընկնեմ, խիղճ ունեցիր, Մինաս...

Մինասը քարացել է, հարվածը մեծ է ու խոր: Գուցե այդ հարվածի հեղինակը ինքն է, դրա ստույգ պատասխանը չի կարողանում տալ: Չկարողանալով իրեն արդարացնել և հեռանալ խայտառակությունից՝ ազատվելու համար Մինասը նախընտրում է փախուստը:

Ուր կորավ Մինասը, Սուլկար Մինասը, իր աշխատանքի դառը քրտինքով ապրող այդ նահապետական մարդը, ոչ ոք չիմացավ: Մեզ հայտնի է միայն, որ Գյուլնազը և Եղսանը ռխերիմ թշնամիներ դարձան: Նրանցից ամեն մեկը իր տանը սպասում է Մինասին: Սակայն տարիներն անցնում են և նա չի վերադառնում:

Ի՞նչ եղավ Սուլկար Մինասը. խելագարվե՞ց, մեռա՞վ, թե՞ փորձանքի մատուցեց: Հեղինակին այդ հարցը չի որոշեցնում: Թ. Թորգոմյանին զբաղեցնում է իմպերիալիզմի ճիրաններում գայարվող աշխատավոր մարդու կյանքի փլուզման պատճառները, մարդկանց հուզաշխարհը:

Վերոհիշյալ երկու պատմվածքներով հեղինակը դատապարտում է իմպերիալիստական պատերազմը, որը ծնում է սոցիալական նորանոր շարիքներ և որի զոհերը հանդիսացան Հարութը և Մինասը: Որքան շատ ենք կարդում «Սուլկար Մինասը» և «Աչալակ գլխիդ» պատմվածքները, այնքան խոր

կերպով ենք ատում իմպերիալիստական պատերազմը և նրան ծնունդ տվող՝ ռեակցիոն ուժերը: Մինասները և հարուսները այդ պատերազմի անմեղ զոհերն են, — ահա հեղինակի նպատակադրումը: Մինասները անմեղ են, նրանց պետք է փրկել կործանումից: Բայց ո՞վ կարող է փրկել: Մ. Թորգոմյանը դեռ չի տեսնում մարդկությանը այդ դժոխքից փրկող ուժը՝ բանվոր դասակարգին: Հեղինակին սթափեցրեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեոլյուցիան, որի ազատարար կանչը նա զգաց Հյուսիսային Կովկասում ապրած տարիններին: Մ. Թորգոմյանը այստեղ ականատես եղավ, թե ինչպես ռեոլյուցիայի դրոշակակիր բանվոր դասակարգը, մեծ լենինի ստեղծած ու կոփած Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ խորտակելով բոնակալների աշխարհը, մինասների և հարուսների համար ստեղծեց նոր կյանք, սոցիալիստական կյանք:

Հեղինակի ապրած ռեոլյուցիոն, փոթորկոտ օրերի հույզների արդյունքը հանդիսացավ «Հորձանքում» վեպը:

* * *

Մ. Թորգոմյանի «Հորձանքում» վեպը նվիրված է քաղաքացիական կռիվին: Հեղինակը գլխավոր հերոս Արամի բերանով նկարագրում է 1919—20 թվականներին Սկստերինոգորում և ընդհանրապես Կուբանում տեղի ունեցած իրադարձությունները, Կարմիր Բանակի և դենիկինյան բանդայի իրարամերժ կռիվները, որոնք վերջանում են Կուբանում սովետական կարգերի փառապանծ հաղթանակով: Քաղաքացիական կռիվի ֆոնի վրա հեղինակը տալիս է կոմունիստների և Կուբանի կուլակային տարրերի ներքին պայքարը, սպիտակների հետախուզական բաժնի վարիչ Շելչենկոյի, հայ առևտրական Ավագովի, Ուստինեի, Նյուրայի, ռեոլյուցիոն մեծ գաղափարների համար մարտնչող Ջինայի, Գոլմանի, գրաշար Իլյուշկինի, ինչպես նաև Նվգենիայի, Վառվառա Նիկոլանայի կերպարները, նրանց հոգեկան խոր ապրումներն ու ակնկալությունները:

Վեպում մենք տեսնում ենք իրենց դասակարգային շահերից ելնող երկու աշխարհների պայքարը, մեռնող, իր դարձ ապրած կուլակային, վաճառական և նրանց շահերը պաշտպանող սպիտակ գվարդիականների պայքարը մի կողմից՝ և նորի,


առաջավորի, ապագայի վառ հույսերով ու ակնկալություններով ապրող սովետական մարդկանց պայքարը՝ մյուս կողմից:

Երկու աշխարհների ներկայացուցիչները յուրովի են հասկանում կյանքը, յուրովի բացատրում քաղաքացիական կռիվ էությունը, յուրովի ընկալում իրարամերժ դեպքերի ընթացքը և յուրովի կողմնորոշվում, ցույց տալիս իրենց դեմքը, անհատականությունը:

Քաղաքացիական կռիվ դրվագներին զուգընթաց Թորգոմյանը լիբրիկական զեղումներ է կատարում: Հեղինակը վեպի գլխավոր հերոս Արամին դնում է այնպիսի սիտուացիաների մեջ, որոնց շնորհիվ նախ ընթերցողը իմանում է Սովետական իշխանության, կոմունիստական գաղափարների նկատմամբ Կուբանի աշխատավորների վերաբերմունքը, և ապա հերոսի՝ Արամի գաղափարական վերակառուցումը, որը առաջանում է սպիտակների անօրինակ ոճրագործությունների ազդեցությամբ:

Արամը անպարտիական երիտասարդ ուսանող էր, դեպքերի բերումով զանվում էր Կուբանում. նա ուզում էր վերադառնալ Անդրկովկաս, սակայն ճանապարհների փակ լինելու պատճառով մնում է այնտեղ: Ջինային հանդիպելով, վերջինիս մեջ նա տեսնում է ռուս ազնիվ հատկություններով օժտված մի կնոջ, որը իր ամբողջ էությամբ նվիրված է առաջավոր նոր գաղափարներին, աշխատավոր ռուս ժողովրդին: Ջինայի պատճառով Արամը նստում է բանտ, ճաշակում է սպիտակ գվարդիականների բանտային դաժան պայմանները, տեսնում նրանց կաշառակերությունը, անմարդկային վերաբերմունքը, իրենց հոգին սև կոպեկին ծախած լրտեսներին, որոնք, հաճոյանալով Դենիկինի բանդաներին, անմեղ մարդկանց դատապարտում էին մահվան: Արամի հիշատակարանով հեղինակը տալիս է ոչ միայն հերոսի աստիճանական վերափոխումը, դասակարգային գիտակցության գալուստը, այլև ունևոր կազակների, կուլակային տարրերի դեպի Սովետական իշխանությունը ունեցած բուռն ատելությունը: Ծիշտ է, այդ վերաբերմունքի շեշտերը վեպում տրված են սխեմատիկ, սակայն դա հասկանալի է, որովհետև ինչպես Արամը, այնպես էլ Մ. Թորգոմյանը դեռևս լավ չէին ըմբռնում Հոկտեմբերյան Մեծ ռեոլյուցիայի խոշոր իրադարձությունները, նորի, առաջավորի խոր նշանակությունը, հնի մահվան պատմական անխուսափելիությունը: Արամի աստիճանական վերափոխման մեջ մենք տեսնում ենք հեղինակի՝

1519-2003



Մ. Թորգոմյանի գաղափարական աստիճանական էվոլյուցիան:

Վեպի առանցքը Ձինյան է: Նա ունի հարուստ կենսափորձ, անցել է բանվորուհու շարքաշ ուղի: Ինչուս դպրոցական շրջանից նա կապվել է մարքսիստական խմբակներին ու ժանոթացել մարքս-լենինյան ուսմունքին: Հոկտեմբերյան սևուցիտից հետո Ձինյան ակտիվ աշխատանքի է լծվում, իր ամբողջ էությունը ծառայում սոցիետական կարգերի ամրապնդման գործին:

Նկատելիորակում Ձինյան ունի անդամ է: Առավելուց երեկո կազմակերպում է մասսաներին, մասնակցում է քաղաքում ուսուցիչին իրավունքների իրականացմանը, աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործին: Կարմիր Բանակի նահանգից հետո կոմունիստներ Ձինյան, Գոլմանը, բանվոր էվոլյուցիոն անցնում են խոր ընդհատակյա աշխատանքի: Կոմունիստական պարտիան անլիզալ պայմաններում չի դադարեցնում ազիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքը աշխատավորական լայն մասսաների մեջ, տարածում է թուղիկներ, հանգստացնելով ազգաբնակչությանը, որ մոտ է վերջնական հաղթանակը: Կոմունիստներին հետապնդում են. մի փոքր կասկած է մարդկանց բանտ են նկատում: Պրոֆեսիոնալ ուսուցիչներ Ձինյան, արհամարհելով վտանգը, օր ու գիշեր աշխատում է: Շուտով պիտակները բանտարկում են Ձինյանին, բայց նա բանտից ազատվում է ուսանող Արամի միջոցով: Արամը կոմունիստ չէ: Նա հերու է կանգնած ուսուցիչից, սակայն ինչպես Արամը, այնպես էլ ֆիլիոնավոր արամներ, պատրաստ են մի գիշերում կոմունիստ դառնալ, մեռնել բուլյուցիայի համար, այնքան դաժան է այն իրականությունը, որտեղ բազմել են սպիտակ բանդաները և քաղաքի կառավարիչները: Արամը համակրում է Ձինյանին և նրա գաղափարը, սրտի խորքում սիրում է Ձինյանին՝ այդ ոտա կնոջը, որը պատրաստ է ամեն քայլափոխում մեռնել ժողովրդի ազատագրման համար: Արամը դեմիկիլիստների դաժան իրականությունը ավելի քան լավ ճաշակում է այն ժամանակ, երբ նրան բանտարկում են որպես ուսուցիչների: Սպիտակներն օրնօրին կորցնում են իրենց հեղինակությունը մասսաների մեջ, միացմանակ ավելի ուժեղացնում կոմունիստների հետապնդումը, տեղորը: Սպիտակ գվարդիականները Ձինյանին երկրորդ անգամ ձերբակալելուց հետո բնդակահարում են բանտում: Շուտով Կուրանը դառնում է

սոցիետական: Կոմունիստ Գոլմանը դառնում է սեփական կապառ: Արամը ցավով է իմանում Ձինյանի սպանությունը: Հաղթանակած Կուրանի աշխատավորությունը, ազատագրվելով պորտաբույծներից, անցնում է խաղաղ, շինարար աշխատանքի:

Քաղաքացիական կռիվների իրադարձությունների ֆոն վրա հիդինակը ցույց է տալիս, թե ինչպես ուսուցիչին հորձակը իր մեջ է առնում մանր բուրժուական տարրերին, Արամին և բոլոր արամներին:

Արամը կոմունիստ դարձավ թե ոչ, մենք չենք իմանում, չգիտենք նույնպես, թե նա ինչ դեր խաղաց Սովետական իշխանության խաղաղ շինարարության պայմաններում: Մենք գիտենք, որ նա մեծ համակրանքով է ընդունում Կուրանյան սովետական կարգերի հաստատումը, ամուսնանում է Նվգանիայի հետ, որը կուլնպես վերափոխվում է: Անկասկած, ներանք հետագա իրենց գործունեության ընթացքում կապվելու էին էվոլյուցիոն, Գոլմանի հետ: Դեռևս Ձինյան ասել էր Արամին, որ նա արժանի է պարտիայի շարքերում լինելուն: Դրան հավատացած էին նաև Գոլմանը, էվոլյուցիոն, որոնց Արամը առանց վարանման ժամանակին ցույց էր տվել իր նվիրվածությունը: Հայտնի է մի բան, որ հեղինակը «Հորձակը» վեպով ընդմիջտ հաղթահարեց մանր բուրժուական տարրերը իր մեջ և, միանալով ուսուցիչի փոփոխող հորձանքին, հետագայում երգեց ուսուցիչի, սոցիալիստական շինարարությունը գյուղում և քաղաքում:

Վեպը գերծ չէ թերություններից: Ամենից առաջ, այն սխեմատիկ է, կերպարները չեն ամբողջականացված, նրանց չենք տեսնում իրենց գործունեության ընթացքում: Հեղինակը ինքն է հուշում դեպքերի և դեմքերի զարգացումը, այդ պատճառով էլ նրա կերտած կերպարները դարձել են անարյուն:

Իր պակասություններով հանդերձ վեպը կարդացվում է հետաքրքրությամբ:

«Հորձակը» վեպին զուգահեռաց, Մ. Թորգոմյանը հրատարակեց «Բորիս Չերաչևը խրամատում», «Տեր-Սիմոնը», «Բիրժևիկը», «Մասնագետը» և այլ պատմվածքներ:

Նորն այդ պատմվածքներում ամեն է, որ նկարագրում է, թե ինչպես քաղաքայինները հարմարվում են և կամ փորձում են հարմարվել սովետական կարգերին, անբնորոշակ լինելով

մինչև վերջ ծածկել իրենց մանր բուրժուական էությունը: Հեղինակը ծաղրում է բուրժուական կենցաղի այլանդակ կողմերը:

* * *

Մերոն Թորգոմյանը չի մոռացել ժողովրդի ծոցից դուրս եկած այն տաղանդներին, որոնք հրաշքներ են գործում արտադրության և գյուղատնտեսության մեջ: Այդ մարդիկ երեկվա մոտաֆաները, մարտիրոսները, ակոններն են, որոնք թոթափելով բռնակալների ծանր լուծը, մեր դաշտերում աշխատում են... առանց կալվածատերերի, կուլակների, իսկ գործարաններում, հանքերում աշխատում են՝ առանց կապիտալիստների:

Հաղթանակած սոցիալիզմի երկրում մեր բանվորները, կոլտնտեսականները ապրում են ուրախ ու երջանիկ և ցույց են տալիս աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի պանծալի օրինակներ:

Մերոն Թորգոմյանի այդ կարգի պատմվածքների մեջ աչքի է ընկնում «Ուստա Մարգարի մտմտուքը», «Ենդությունը», «Անօրյան», «Ժպտացող կյանքը» և «Ստախանովական Մայրանուշը»:

«Ուստա Մարգարի մտմտուքը» պատմվածքում հեղինակը առաջին անգամ հայ գրականության մեջ շոշափում է սոցիալիստական սեփականության պաշտպանության թեման:

Ուստա Մարգարը գործարանի ամենահին և աշխատանքին նվիրված բանվորներից մեկն է: Դեպի աշխատանքը և սոցիալիստական գույքն ունեցած կոմունիստական վերաբերմունքով Մարգարը տարբերվում է շատ-շատերից: Աշխատանքից ու գործարանից դուրս նա իրեն չի պատկերացնում: «Աշխատանքը վերջացել էր և բանվորները ցրվել էին տուններին: Մնացել էր միայն ուստան, գործարանը պահպանող այդ հինավուրց, հավատարիմ գամփուր: Մորուքի թելեքը մինչև կուրծքն անխնամ իջած մի լայնաթիկուճը մարդ, որի դեմքին աշխատանքն այնքան կնճիռ է քանդակել, որքան բնությունն ընկույզի կճեպին»:

Ուստա Մարգարը ոչ միայն գործարանի աչքն է, այլև աչքի լույսի պես պահպանում է սոցիալիստական գույքը:

— Էսենց էլ անհողություն, սղոցի բերանը վեր են գցել, իբր դեն շարտելու բան լինի: Բերանը կա, կոթը ոչ, կոթն ամ-

րացրիր, կարգին սղոց կդառնա, կորչելու բան չունենք, ախպեր...»:

Այսպես մտմտում է ուստա Մարգարն ու բոլորին խրատում. «Ամեն մի կտորած ու ժանգոտած բան եթե դեն շարտենք, ո՞ր պիտի հասնենք...»:

Ի՞նչն է ստիպում ուստա Մարգարին վարվել այդպես: Էսենք իրեն — ուստա Մարգարին:

— Եթե էսպես լավ չպահենք մեր տունը, քարը քարին կմնա: Մինչև հիմա աչքս ջղր դարձավ էս բոլորը պահպանելով: Մրանք կաթիլ-կաթիլ հավաքած, մեր ջրտինքով շինած ապրանք են, աշխատավորի ապրանք, իմ կամ քո սեփականությունը խոմ չի՞, ախպեր ջան, որ ինչպես սիրտդ ուզեց, վարվես հետը, աշխատող մարդը գիտե միայն, թե ինչ ծանր դատում-բանումից հետո է ստեղծվում ամեն մի իր, թեկուզ դա ամենաշնչին բան լինի, օրինակ, էս բեռնի կտորը: Պետք է մեր աչքի լույսի պես պահենք...»:

Ուստա Մարգարը մարդկանց մոտենում է առանձին գուրգուրանքով: Ասենք, նա մեքենային նույնպես առանձին խանդաղատանքով է վերաբերվում, իսկ բանվորներին առավել ևս: Աշխատանքը վերջանալուց հետո բոլորը դնում են տուն, ուստա Մարգարը շրջում է գործարանում, կարգի է բերում հաջորդ օրվա աշխատանքի համար անհրաժեշտ գործիքները:

— Ամեն ինչ պատրաստ պահեմ, որ լուսածեղին բանվորները գան ու զուր ժամանակ չկորցնեն: Թող աշխատանքը կարգին առաջ դնա, խեր-բարաքյաթ շատ լինի մեջը... — փիլիսոփայում է ուստա Մարգարը:

Մեր հտհոկտեմբերյան գրականության մեջ նկարագրված աշխատասեր բանվորների մեջ ուստա Մարգարի կերպարը, որը հեղինակը կերտել էր դեռևս 1921 թվականին, կարելի է ասել, ամենազեղարվեստականն է:

Աշխատանքի հերոսության մարմնացումն է նաև ստախանովական Մայրանուշը:

Մնողներից զրկված, ապրում էր Մայրանուշը քրոջ հետ Լենինականում: Չկարողանալով վերջացնել միջնակարգ դրպրոցը, Մայրանուշը տեղափոխվեց Լենինականի տեքստիլ ֆաբրիկա: Շատ կարճ ժամանակում տիրապետելով աշխատանքի տեխնիկային, Մայրանուշը չզգաց, թե ինչպես կամաց-կամաց անցավ, կանգնեց առաջավորների շարքում: «Անցյալ տարի հարվածային դարձա, կարմիր տախտակին

գրեցին ինձ, պատվո գործընդուն եմ ինչ: Այս տարի գործարանի արտադրական խորհրդի անդամ եմ, այժմ ահա անցնում եմ ստախանովականների շարքը...», — մտածում է Մայրանուշը և ցեխի ավազ վարպետից պահանջում, որ մի ուրիշ դազազ էլ դնեն իր արամագրության տակ: Նրա խնդիրը հարգվում է: Մայրանուշը դառնում է բազմադազահային: Այս անգամ նա ավելի լարված է աշխատում:

Ծերուն Թորգոմյանի նկարագրած բանվորները ապրում են լիարյուն կյանքով, լավագույն հույսերով ու հեռանկարներով: «Ննդուկներն» պատմվածքում գլխավոր ճարտարապետը, ներկա լինելով երիտասարդ ճարտարապետ Լևոն Սարգսյանի և Շուշիկի ամուսնական երեկոյին, հրճվում է, որ իր շնորհալի աշխատակիցներն այդպես երջանիկ կյանք են ստեղծել իրենց համար:

Այսպես են Ծերուն Թորգոմյանի սոցիալիստական շինարարության ճակատում աշխատող բանվորները, ինժեներները և ծառայողները: Բոլորը միմյանց նկատմամբ հոգատար են և կարեկից: Մեր աշխատավորների կյանքի բարելավմամբ, այդ աշխատավորների խնդրյալմբ առաջին հերթին անկեղծորեն ապրում է ինքը՝ Ծերուն Թորգոմյանը:

* * *

Ծ. Թորգոմյանի սիրած թեմաներից մեկն էլ գյուղն է: Գյուղական թեմատիկային է նվիրված հեղինակի «Սոնա», «Է՛յ, կանաչ սարեր», «Կադոյի պատմածը», «Քարափի մարդիկ», «Անվանի կթվորը», «Արև աղջիկը», «Ծովագյուղը», «Հոսող ջրերը» պատմվածքաշարը, որտեղ հին գյուղի հետ միասին դրսևորված են նոր սոցիալիստական գյուղի անվանի մարդիկ՝ գյուղատվետի նախագահներ, դաշտավարներ, անվանի կթվորներ, որոնք, խորտակելով հնի մնացորդները, պայքարում են նորի համար, ամրապնդում են սոցիալիստական կարգերը գյուղում:

Հեղինակը ապրում է սոցիալիստական գյուղի նոր կենցաղով: Գրեթե բոլոր պատմվածքներում հեղինակը հանդես է գալիս որպես նոր գյուղի ջերմեռանդ պաշտպանը, նոր կենցաղն ու մարդկանց հակադրելով հին գյուղին ու մարդկանց: Նոր գյուղին նվիրված պատմվածքներում Ծ. Թորգոմյանը լավատես է, հաստատ իմանալով, որ վերակառուցվող սով-

տական գյուղը գնում է դեպի լուսաշող ապագան, դեպի կոմունիզմի ոսկեղեն հեռուն:

Ահա մեր առջև է Ծինանդալի գյուղը, որտեղ մինչև սովետական կարգերի հաստատումը մարդիկ անօդնական վիճակում ապրում էին թավազ-աղնաուրների լծի տակ: Սովետական կարգերի հաստատումով գյուղը փոխեց իր դեմքը: Գյուղի վերածնունդը սկսվեց այն օրից, երբ կոլտնտեսական կարգը հաստատուն դիրք գրավեց: Գյուղի նախկին չքավոր եկաղվիլու ընտանիքը, որը իշխան Դաթիկոյի հետապնդողներին ու կալվածատերերին շահագործման պատճառով հազիվ էր տնտեսությունը ծայրը-ծայրին հասցնում, առաջավոր կոլտնտեսության շնորհիվ ներկայումս ապրում է երջանիկ և ունևոր կյանքով:

— Հանդուցյալ եկաղվիլու ընտանիքը, գեներացվալե,— պատմում է Լադոն,— հիմա շատ լավ է ապրում: Երեխաները մեծացան, մեծ տղան գյուղատնտես է, մեզ մոտ է աշխատում, փոքրը դեռ սովորում է, իսկ աղջիկը մեր դպրոցում դասեր է տալիս: Մի խոսքով՝ շատ լավ են:

Հեղինակը ժլատ է, հարուստ տվյալներ չի տալիս ունեվոր և երջանիկ կյանքով ապրող կոլտնտեսականների մասին, բայց այդ սեղմ տողերի մեջ էլ ընթերցողը իմանում է սոցիալիստական գյուղում ունևոր կյանքով ապրող գյուղացիների մասին:

«Մեր երկրի պես գեղեցիկ և բարեբեր երկիր հեշ չկա աշխարհում,— շարունակում է Լադոն:— Նրա հողին մեռնեմ, ոսկի հող է... Այն տարին, երբ գինին առատ է լինում, մեր քեֆին քեֆ չի հասնում: Դե՛ մենք, գեներացվալե, Կախեթի խալխ ենք, մեր ծնող հողը շատ է բարի, իսկ գինին մեր խմելու ջուրն է...»:

Ծինանդալին եզակի երեկոյթ չէ մեր իրականության մեջ: Հեղինակը այդ ապացուցելու համար ընթերցողին տանում է լեռնային Ախալքալաքի շրջանի Զակ գյուղը, որի կովաբուծական ֆերմայի անվանի մարդիկ իրենց քրտնաջան աշխատանքով ստեղծել են ունևոր կյանքի բոլոր պայմանները: Անվանի կթվորուհի Նախշունի և ֆերմայի հարվածային կոլտնտեսական Մուշեղի կյանքի օրինակով Ծ. Թորգոմյանը ցույց է տալիս սոցիալիստական գյուղի առաջընթացը, նոր գյուղի մարդկանց կենցաղում տեղի ունեցած փոփոխությունները: Ահա թե ինչ է պատմում իր կյանքի մասին Մուշեղը:

— Էստից տասնօխտը տարի առաջ, ճիշտ է, դարգերս շատ էին: Չունքի գլուխ դնելու, ոտքս երկարելու տեղ շունեի: Նման էի թափառական հավքի, անտուն ու անբուն: Մեղքոն բիծի քովը բանեիկը, էնոր տավարը քշեիկը արտը: էնոր սուսիբի փշորանքներուն կաշեի ու ջուրը բերնես կերթար-կը... Հիմա լավ է, ոչ աղպ կա, ոչ քոխվա: Երկուան էլ գյու-բեգյոտ եղան: Ճակտիս քրտինքովը կապրեմ, քուրս, ու հլա շոտ ըսող կամ աչքիդ վերև հոնք ունես ըսողը չէ եղել: Հա-շիվդ վերցրու, էս տարի 400 աշխօր եմ վաստակել: Հլա տես ինչ առլան-թառլան կովեր կմեծացնեմ, հլը փորներուն աշե, դոշերուն աշե, յուղի մեջ թապըլտիկը, պա՛հ-պա՛հ:

Կոլտնտեսային ունեոր կյանքով է ապրում նաև Արմե-նակի ընտանիքը, որի կինը՝ Ֆերմայի կթվորուհի Նախշունը իր օրինակելի աշխատանքի համար բարձր գնահատականի է արժանացել ռեսպուբլիկայի թերթի կողմից: Նախշունը և Ար-մենակը նույնպես գո՛հ են սովետական կարգերից, կոլտնտե-սովթյունից, որ նրանց բերեց ունեոր կյանք: Նախշունի երե-խաները՝ Սիրանը, Տիրանը, Լիանը սովորում են դպրոցում, ամուսինը՝ Արմենակը աշխատում է դաշտավարական բրիգա-դայում: Նա հին սերնդի մարմնացումը չէ, թեպետ մինչև ոսկորները ճաշակել է անհրապույր անցյալի ու հին կենդացի աշխարհակոթյունները: Արմենակը գտում է կնոջ առաջավոր դերը սոցիալիստական հասարակարգում, տեսնում է նրա լուսանկարը լրագրում և իր ուրախությունը արտահայտում է հետեյալ բառերով. «Միշտ էդպես նախշուն մնաս, այ կնիկ... ազիդ արևուղ մեռնիմ»:

Մ. Թորգոմյանի գյուղական թեմային նվիրված պատ-մըվածքների հերոսուհիները նման չեն Թումանյանի Մարոյին, կամ իրեն՝ հեղինակի սկզբնական շրջանի պատմվածքների հերոսուհիներին: Հեղինակի նկարագրած սոցիալիստական գյուղի աճման հետ միասին աճել են նաև կանայք: Ահա Սո-նան, որին քոխվի տղան՝ Մուշեղը աչք է պահել: Անցյալում, երբ Մուշեղը խոսք էր բացում ամուսնովթյան մասին, «Սո-նայի այտերը կարմրում էին, ամոթից աչքերը խոնարհվում, և նա փախչում էր գոմը մաքրող հոր մոտ»:

Գյուղում սովետական կարգեր հաստատվելուց հետո Սո-նան դառնում է ակտիվ կանանցից մեկը: Մուշեղը ցանկա-նում է օգտվել Սոնայի և նրա հոր (Սոնայի հայրը գյուղսովե-տի նախագահն էր) դիրքից, օրինական կնոջից բաժանվում է

Սոնայի հետ ամուսնանալու նպատակով, սակայն Սոնան մերժում է Մուշեղին և համարձակորեն պատասխանում.

— Գնա, աննամուս, ժամանակի հետ ուզում ես շա-պիկդ փոխել, ես զորբանների հետ գործ չունեմ...

Սոնան քաղաքական իրադարձությունները կշռադատող կանանցից մեկն է, որը շատ լավ է հասկանում իր դասակար-դային շահերը և զորբանների դեմ պայքարելու անհրաժեշտու-թյունը: Հին կենցաղի մղձավանջից ազատվել և նոր կյանքի ուղին է բռնել նաև Մարոն՝ «Հոսող ջրերը» պատմը-վածքում: Լոռվա անառիկ լեռներում ծնված դեղջիկուհի Մարոն սիրում է գրանիտի դորժարանի մեքենավար Կորյունին: Մա-րոյի հայրը՝ Սաքոն դեմ է, նա ուզում է աղջկան ամուսնացնել մի մարդու հետ, որը, Մարոյի առելով, իրենից երկու անգամ մեծ է: Թումանյանի սիրած Լոռին, կառչած հին աղաթից դի-մադրում է աղջկան: Սովետական շրջանի Մարոն Թումանյա-նի նկարագրած հնադանդ Մարոն չի: Զգալով վտանգը, նա փախչում է Կորյունի մոտ: Տարիները սահում են: Կոլտնտե-սային կյանքը գյուղում ոչ միայն վերափոխում է Մաքոյի տնտեսական կյանքը, բարելավելով նրա ընտանեկան դրու-թյունը, այլև փոխում նրա մեջ արմատացած հին սովորությունները: Սաքոն գղջում է իր արածը և մի գեղեցիկ օր գնում է աղջկան տեսություն:

Չնայած գյուղի թեման Մերուն Թորգոմյանի սիրած թեմաներից մեկն է, բայց նա դեռևս իր վճռական խոսքը չի ասել մեր սոցիալիստական գյուղի և նրա առաջավոր մարդ-կանց մասին:

* * *

«Կապուտակ ջրերի մոտ», «Ստեփան քեռին» վիպակնե-րում և «Պոլխիդա», «Մարգարտաշար երկիր» և այլ ակնարկ-ներում ու պատմվածքներում Մերուն Թորգոմյանը փորձել է շոշափել գյուղի և քաղաքի սոցիալիստական կյանքի այրող հարցերը: Հեղինակին հաջողվել է հնի ու նորի պայքարի ֆոնի վրա դրսևորել սովետական նոր ընտանիքնե-րի հարաբերությունները, ամուսինների սերտ միասնու-թյունը և սոցիալիստական շինարարության ճակատում գոր-ծող սովետական նոր մարդու կերպարը: Այդ կարգի պատ-մըվածքներում և ակնարկներում հեղինակը հարցերը վեր է հանում օպտիմիստորեն, դրական հերոսներին նկարագրում է կենդանի և աշխույժ: Նրանցից յուրաքանչյուրը գործին նը-

վերված ազնիվ քաղաքացի է, հրճվում է մեր երկրի առաջընթացով, քայլում նրա հաջողություններին համընթաց և աշխատում ետ շինել առօրյա ետ ու դեռից: Այդ պատմվածքներում Մ. Թորգոմյանը հանդես է գալիս նաև որպես բնութիան վարպետ նկարագրող:

«Կապուտակ ջրերի մոտ» վիպակում տրված են Սևանա լճի ձկնարդյունաբերության գիտական հիմնարկության մեջ աշխատող անձնավեր մարդկանց աշխատանքի դրվագները և հանձինս Հասմիկի և Սուրենի սովետական նոր ընտանիքի համար պայքարող երիտասարդ զույգերի առօրյան: Վիպակն սկսվում է Սուրենի նամակով, որն ուղղված է Հասմիկին: Այդ նամակում Սուրենը գղջում է իր սխալները և խնդրում է Հասմիկի ձեռքը:

Հասմիկը և Սուրենը համաշխարհային պատերազմի գոհերից են: Զրկվելով ծնողներից, նրանք Թորքիայից փախչում են և տեղավորվում կենիսականի որբանոցում, որտեղ մեծանում են ինչպես քույր ու եղբայր: Ավարտելով միջնակարգ դպրոցը, Սուրենը մեկնում է Երևան և սովորում է համալսարանի պատմա-գրական ֆակուլտետում: Հասմիկը սկզբում ուսուցչություն է անում, իսկ հետո շարունակում է բարձրագույն կրթությունը կենսաբանական ֆակուլտետում: Երևանում Սուրենը ամուսնանում է մի քաղցինուհու հետ, որը, սակայն, շատ շուտով տեղիք է տալիս ընտանեկան անվերջ կոփմների: Ընտանեկան անախորժություններից ազատվելու համար Սուրենը բաժանվում է կնոջից, գալիս է Սևան՝ Հասմիկի մոտ: Հասմիկը տեսնելով իր վաղեմի ընկերոջ անկեղծ գղջումը, ներում է նրան և ամուսնանում Սուրենի հետ:

Ինչպես տեսնում ենք, վիպակը սկսվում է երկու սիրող անձների կյանքի համառոտ պատմությամբ:

Ո՞վ է Հասմիկը: Նա գյուղական ազնիվ, բայց տանջված աշխատավորի զուտոր է, որն իր կյանքի երիտասարդական տարիները ապրել է սովետական ջերմ արևի տակ: Նրա հայրը բատրակ էր կալվածատիրոջ մոտ, օրն ի բուն աշխատում էր բուստանում և հազիվ էր ընտանիքի գոյությունը պահպանում: Առաջին համաշխարհային պատերազմը Հասմիկին դարձրեց փախստական և նա մեծացավ որբանոցում, առանց ծնողների: Հայաստանում սովետական կարգերի հաստատումից Հասմիկը դիմավորեց որբանոցում: «Մենք բոլորս ուրախացել էինք, — ասում է Հասմիկը Արուսյակին: — Նախ՝ կոփ-

վը վերջացավ և տիրեց խաղաղություն, որին այնքան կարիք ուներ ավերակների կույտի նմանվող մեր երկիրը: Հետո՝ քաղցի ձանկերում դաշնակների բռնակալ լծից հալ ու մաշ դարձած ժողովուրդը շունչ էր առնում և կարգավորում իր տնտեսությունը և, որ գլխավորն էր, մեզ ասում էին, թե նոր պետությունը բանվորների ու գյուղացիների, մի խոսքով չքավորների իշխանություն է, իսկ որբերից ավելի չքավոր ու խեղճ կարելի է երևակայել...

Եվ մեր ուրախությանը շափ շկար»:

Հասմիկը իրավունք ուներ ուրախանալու: Սովետական իշխանությունը նախկին որբին հնարավորություն տվեց ավարտելու միջնակարգ և բարձրագույն դպրոցները: Նա դարձավ գիտական աշխատող: Բանվորների և գյուղացիների կառավարությունը կատարեց իր պարտքը: Բայց ինչպես էր հատուցում իր պարտքը Հասմիկը: Նա, ինչպես որբանոցում, այնպես էլ ուսումը ավարտելուց հետո դպրոցում՝ ուսուցչուհու պաշտոնում և Սևանի ձկնարդյունաբերության մեջ գիտական աշխատանքում իրեն դրսևորեց որպես սովետական ազնիվ քաղաքացի: Պրոֆեսոր Ասքանազ Համբարձումյանը բարձր էր գնահատում Հասմիկի աշխատասիրությունը և վախենում էր, որ չլինի թե նրան որևիցե մեկը թոցնի:

Հասմիկը համեստ, լուրջ, պատրաստված աղջիկ էր, խոսում էր հավասարակշռված, ինքնամփոփ էր: Նրան սիրում էին բոլորը, նա կարեկցում էր բոլորին: Նա մեծ ապրումներ ունեցավ, երբ հաշատրյանին մերժեց, ասելով, որ ամուսնանում է իր սիրած տղայի հետ, եղավ մի պահ, երբ նա դժվարացավ մերժել Խաչատրյանին, մի մարդու, որը մինչև իր հոգու խորքը սիրում էր նրան:

Հասմիկը մեծ հայրենասեր է: Նա իր այդ հայրենասիրությունը ցույց է տալիս գործով: Գործի մեջ նա էնտուզիաստ է: Առանց գործի ու աշխատանքի նա չէր պատկերացնում իր կյանքը:

Ո՞վ էր Սուրենը: Նա Հասմիկի համագյուղացիներից էր, մեծացել էր Հասմիկի հետ: Սուրենը զբաղվում էր գրականությամբ: Կոռավարությունը հրատարակում է նրա բանաստեղծությունների ժողովածուն: Կոմերիտականության շարքերում նա ստանում է կոփվածք: Բայց երիտասարդական անփորձությունը նրան մի պահ շեղում է կենցաղային ճիշտ ուղուց: Սուրենը ենթարկվում է քաղցրեհիական բարբերի ազդեցության:

նը, ամուսնանում է մի քաղցրենուհու հետ, որ, ինչպես տեսանք, լավ վախճան չի ունենում:

«Օ, ես ծանր, դժնդակ օրեր ապրեցի, շղայնություն, վեճերով ու հակառակություններով փ օրեր: Թույնով ու մաղձով լեցուն էր մեր ընտանեկան կյանքը: Մենք սկսեցինք միմյանց ատել, ինչպես անհայտ հակառակորդներ»: Սուրենը խնդրում է Հասմիկին մոռանալ իր գործած բոլոր սխալները և ներել իրեն: «Քեզանից հեռացա, — գրում է Սուրենը Հասմիկին, — և իմ կյանքի ընկերը դարձրի մեկին, որ ինձ բոլորովին չէր հասկանում ու ըմբռնում, չէր գնահատում իմ ձիրքերը, չէր ոգևորվում ու խանդավառվում մեր ժամանակի հույզերով ու քաղաքացիական կյանքով: Սուրենը գգում է, որ կխորտակվի իր ապագան, եթե կապված մնա այդ քաղցրենուհու հետ:

Սուրենը կյանքի դառն փորձությունը ճաշակելուց հետո միայն զգում է, որ իրեն կհասկանա միայն և միայն Հասմիկի: Վերջինս էլ իր վերջնական համաձայնությունը տալիս է այն ժամանակ, երբ տեսնում է, որ Սուրենի մեջ դեռևս առողջ է մնացել ապրելու, գործելու և պայքարելու սովետական մարդուն հատուկ բարձր հատկությունները:

Բացի Հասմիկից և Սուրենից, վիպակում նկատում ենք սովետական ազնիվ շատ աշխատողների, որոնք իրենց սրբաբարձրություններով խանդավառում են շրջապատը: Օրինակ, վերցնենք պրոֆեսոր Ասքանազ Համբարձումյանին: Նա վերին աստիճանի աշխատունակ գիտնական է և հայտնի է որպես գիտական աշխարհի նորություններին հետևող: Նրա ջանքերով Սևանա լճում բուծվեցին ձկների նորատեսակներ, որոնք ոչնչացրին ջրային միսաստու կենդանիները: Հանձին ինժեներ Գուրգեն Նաչատրյանի՝ Մ. Թորգոմյանը տվել է մի խանդավառ հայրենասերի, որը առավտից մինչև ուշ երեկո աչքովում էր իր աշխատանքում, երբ մի դժվարին գործ էր լինում: Նրան էին հանձնում: Ինժեները ապրում է շինարարության եռ ու զեռը: Երեք տարի աշխատում է Սևանում, բայց հողածություն չի զգում: Նա եկել է քաղաքից, բայց չի կարողանում քաղաքը: Նա զգում է միայն աշխատանքի կարիք, իսկ որտեղ աշխատանք՝ այնտեղ էլ կյանք, ահա նրա դեմքը: Գուրգենը մեծ հուզմունքով է խոսում Հայաստանի շինարարական օբյեկտների, Սևանի կասկադի օգտագործման, լճի բնական հարստությունները շահագործելու մասին:

Անհատը պետք է կապված լինի հասարակական կյանքին, ապրի մեր ժամանակի շնչով, ոգևորվի մեր լայնածա-

վալ շինարարության պաթոսով, — ահա հեղինակի առաջ քաշած գաղափարը: Նրա դրական հերոսները ոչ միայն կապված են հասարակական կյանքին, շինարարությանը, այլև ապրում են շինարարության եռ ու զեռով: Այդպիսիք՝ են նաև Մամիկոնը և Անահիտը, որոնք աշխատում են գյուղում որպես կուլտաշխատողներ. այդպիսին է Սևանի կղզու հանգստյան տան վարիչ Վահրամ Ասլանյանը, կուլտսեսության նախագահ Բրոն և ուրիշներ: Բոլորը տոգորված են աշխատանքային խանդավառությամբ, յուրաքանչյուրը ուզում է ետ չմնալ մյուսից և իր արդար, ազնիվ գործով ամրապնդել սովետական հասարակարգը, սոցիալիզմի մեծ աշխարհաշեն կարգերը:

* * *

«Ստեփան քեռին» պատմվածքում Մ. Թորգոմյանը ցույց է տալիս հնի և նորի պայքարը: Մեռնող հինը՝ անհատական տնտեսությունը իր տեղը զիջում է զարգացող կաթնապրանքային սովխոզին:

Սոցիալիստական տնտեսության աճման ֆոնի վրա քայքայվում են մասնավոր սեփականատիրության հիմքը կազմող անհատական տնտեսությունը և հին կենցաղը, որոնք խանգարում էին անհատի զարգացումը:

Ստեփան քեռին ուռճացած տնտեսություն ունի: Նա մեծ թրվով կովեր է պահում, զբաղվում կաթի առևտրով, պահում է բատրակներ: Շրջանում բոլորը դողում են նրանից: Բայց ամենից շատ վախենում է բատրակ Հարութը: Ստեփան քեռին խավարի թագավորության վերջին մոհիկանն է, նա հոգին ավանդում է սովետական կարգերում:

Սովետական կարգերը ազատեցին չթավորներին և ուղնչացրին շահագործումը: Անհատի զարգացումը նոր թափ է ստանում: Նախկին բատրակները մարդավայել կյանք են ըստեղծում: Կամաց-կամաց ոչնչանում է Ստեփան քեռու տնտեսությունը: Նա տեսնում էր, թե ինչպես օրեցօր ամրանում է սովետական տնտեսությունը, և չտանելով այդ բոլորը, մահանում է: Իսկ նրա նախկին ծառան Հարութը մտնում է սովխոզ ծառայության: Հարութի համար քացիվում են աշխատելու և սովորելու, աճելու բոլոր պայմանները:

Ստեփան քեռին տիպիկ կուլակ էր: Նա ատելությամբ էր լցված սովետական կարգերի և կոմունիստների նկատմամբ: Այդ ատելությունն այնպես միս ու արյուն էր դարձել նրա մեջ:

որ նա դիմադրում էր ազգիկա մտնանությունը կոմունիստի հետ, չնայած գիտեր, որ աղջիկը սիրում էր տղային և նրա հետ կապրի երջանիկ ու բախտավոր նա ատում էր փոքրիկ աղջկան՝ Նվարդին, որ համարձակվել էր իր ձառում պաշտպանել սովետական իշխանությունը: Նա ատում էր իր ընտանիքի այն անդամներին, որոնք ատելություն էին լցված բոլոր հարստահարիչների դեմ: Ստեփան քեռին երկրորդ էլիզբարովն է: Նա կոռուպցիայի ինչ, ընտանիքը, որդուն, միայն թե անձեռնմխելի մըհար իր հարստությունը, որը ձեռք էր բերվել բատրակների պրյուն - քրտինքով: Ժամանակին նա ատել է իր ազգական Առաքելին նրա հարբեցողության համար: Բայց երբ տեսնում է, թե ինչպես Առաքելը ատելություն է լցված դեպի սովետական իշխանությունը, Ստեփան քեռին սկսում է մեծ գոհունակությամբ Առաքելին ընդունել իր հարկի տակ և երկար գիշերներ ուրախությամբ գինով լի բաժակներ էր դատարկում նրա հետ:

Հետաքրքիր տիպ է Հարութը, կրոնական նախապաշարմունքներին գերի Հարութը, որը երկար տարիներ աշխատել է Ստեփան քեռու մոտ:

Հարութը կարծում է, որ ինքը ծնվել է միայն և միայն Ստեփան քեռուն ծառայելու, նրա կովերը պահելու համար: Առանց կովերի նա կյանքը չէր պատկերացնում: Այնքան կովերի հետ նստել, վեր էր կացել, որ Ստեփան քեռու արտահայտությամբ, Հարութն էլ կով էր դարձել: Համեստ է Հարութը: Նրա համեստությունը հասնում է կատարելության: Նա շատ նման է ծուռ Ոսկոյին իր խոնարհ բնավորությամբ: Նա ապրում է ճնշված, խամբեցնելով իր կյանքի լավ օրերը: Տիրոջ կամքին ընդդիմանալը նա շարիք է համարում: Ստեփան քեռին այդ շատ լավ էր հասկանում, ուստի օրն ի բուն շահագործում էր Հարութին:

Բայց դա երկար չտևեց: Սովետական կարգերը, ճիշտ է, համեմատաբար ուշ, բայց, այնուամենայնիվ, բացեցին Հարութի աչքերը: Նոր, երջանիկ, ունևոր կյանքը թևակոխելու խնդրում նրան օգնեցին նախկին բատրակ Մուշեղը և իր կինը՝ Շուշանը:

Մուշեղը ըմբոստ է, նա հարկ եղած դեպքում պատասխանում է Ստեփան քեռուն, պահանջում է, որ իր հետ վերաբերվեն մարդավայել: Ժամանակին մտնելով կոմերիտմիության շարքերը, Մուշեղը հասկանում է կյանքի շարն ու բա-

ղին, սովորում բանակում, աշխատանքի մտնում որպես հրահանգիչ: Նա այն աճող երիտասարդներից մեկն էր, որոնց ամեն քայլափոխում Սովետական իշխանությունը առաջ է քաշում երկրի ղեկավար աշխատանքներում: Եթե «Մուշեղներից» պատմվածքում Մարտիրոսը Ասլամաղլանի գործակատարի երեսովը տվեց կապիտալիստի շնորհած գումարը, հասավ դասակարգային պայքարի անհրաժեշտության գաղափարին, չնայած չմասնակցեց այդ պայքարին, ապա Մուշեղը Մարտիրոսի ավարտված կերպարն է: Նա դասակարգային պայքարի տեսակետի վրա կանգնած կազմակերպված սովետական մարդ է:

* * *

Վերջին տարիները Մերուն Թորգոմյանը մեծ սիրով սկսեց գրել պաշտպանական («Մեր պահակները»), «Սահմանապահ Հրայրը», «Այլոսենանտը»), եղբայրական ժողովուրդների բարեկամության («Հարևաններ»), մանկական թեմաներով պատմվածքներ ու ակնարկներ:

Ինչպես պաշտպանական, այնպես էլ եղբայրական ժողովուրդների բարեկամության թեմատիկայով գրած պատմվածքներն ու ակնարկները հեղինակի՝ մակերեսորեն գրված առաջին գործերն են: Հեղինակը այդ գործերում չի խորանում, գեղարվեստական ընդհանրացումներ չի կատարում: Համեմատաբար ավելի հաջող են մանուկների համար գրած պատմվածքները, որոնց մասին արժե մի քանի խոսք ասել:

Մերուն Թորգոմյանը նախկինում եղել է մանկավարժ: Նա լավ ծանոթ է մանկանը, այդ պատճառով էլ նրա մանկական պատմվածքները իրենց հուզիչ թեմատիկայով կարդացվում են հետաքրքրությամբ: Մ. Թորգոմյանի «Բնության դրկում» մանկական պատմվածքների ժողովածուն սիրով են կարդում մեր դպրոցականները: Բնությունը իր հրաշալիքներով, կենդանական աշխարհով միշտ էլ հուզել է ընթերցող պատանիներին: Զուր չէ, որ բնության սիրահար ու մանկական աշխարհին քաջամանոթ Պուշկինի և Թումանյանի հեքիաթներն ու պատմվածքները երեխաները կարդում են մեծ հափշտակությամբ: Հազար անգամ իրավացի էր Մաքսիմ Գորկին, երբ «Թեմաների մասին» հոդվածում մանկական գրողներին կոչ էր անում՝ գրադվել բնության երևույթները գեղարվեստորեն մշակելու գործով:

Այդ բանը լավ է հասկացել Մերուն Թորգոմյանը: Նրա մանկական պատմվածքների ընթերցումով մեր երեխաները ծանոթանում են խորամանկ աղվեսի, ոչխարների թշնամի գայլի, բզեզի, օձի, ոզնու, եղջերուի հետ: Հեղինակը լեզու է տալիս այդ կենդանիներին, խոսեցնում է նրանց ու այդ կենդանիների վարքն ու բարքը շոշափելի, հասկանալի դարձնում երեխաներին: Հեղինակի այս մոտեցումը գովելի է: Մանկական պատմվածքներում Մերուն Թորգոմյանը մնում է նույն օպտիմիստը: Նրա պատանի հերոսները խիզախ են, անվեհեր, մարտնչող ու խելոք: «Մի փոքրիկ շիրիմ» պատմվածքում փոքրիկ Ալեքսեյը երևան է գալիս որպես քաղաքացիական կռիվների դաժան փորձություններում կոփված պատանի հերոս: Նա մեռնում է սպիտակ գվարդիականների զրնդակով, որպես պատանի կոմունար: «Յամաքաբերդցի Աշոտը» պատմվածքում փոքրիկ հերոսը իրեն դրսևորում է որպես սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակից:

Մերուն Թորգոմյանը պետք է շարունակի այդ ուղղությամբ իր աշխատանքը և դրսևորի պատանիների հոգեկան բարձր հատկություններն ու կարողությունները, գպրոցականների պայքարը գերազանց ուսման, գիտակցական կարգապահության բարձրացման համար:

* * *

1954 թվականին Թբիլիսիում լույս տեսավ Մ. Թորգոմյանի «Անմար կրակներ» ծավալուն վեպը: 1955 թ. հրատարակվեց նույն վեպի վերամշակված վարիանտը: Հեղինակը ոչ միայն դուրս է գցել ավելորդ, մտացածին գլուխները, այլև գեղարվեստորեն միավորել է առանձին գլուխներ, որոնք ավելի հետաքրքրությամբ են կարդացվում և բխում են վեպի սյուժեից:

Այդ կրճատումներով հեղինակն ավելի կուռ է դարձրել վեպը: Հիմա շատ թե քիչ նկատելի է դրական և բացասական կերպարների գործողության ընթացքը, նպատակը, դրված հարցերի լուծումը և մեկնաբանման ուղիները, չնայած հեղինակը ոչ բոլոր դեպքերում է կարողացել ազատագրվել շատախոսությունից և ավելորդ նկարագրություններից: Այսպես, օրինակ, գրքի 2-րդ մասում թիթեղագործ Կարոյի արկածային թափառումների և քրոջը՝ Տիգրանուհուն ազատագրելու տեսարան-

ներում մտացածին, ոչ բնական շատ տեսարաններ կան: Սակայն, ժողովուրդների բարեկամության հարցերը, Լևոն Արծրունյանի, Կարոյի և նրա զինակիցների գաղափարական ծրագիրը տրված է որոշակիորեն ու պարզեցված ձևով, մի բան, որ վեպի առաջին վարիանտում մշուշապատ էր ու անհասկանալի: Պետք է խոստովանել, որ առաջին գրքում եղած թերությունները այս նոր հրատարակության մեջ հիմնականում վերացված են ու նոր հրատարակությունը ավելի ամբողջական ու գեղարվեստորեն ավելի լավ մշակված գործի տպավորություն է թողնում:

Վասպուրականի դեպքերն անսպառ նյութ են տվել հեղինակին: Մ. Թորգոմյանի ստեղծագործությունների ճնշող մեծամասնությունը շոշափում է Վասպուրականի ժողովրդի կենցաղը, նրա անլուր տառապանքները թուրք բռնակալների լծի տակ, աշխատավորների դեպի ոռա մեծ ժողովուրդը տածած սերն ու համակրանքը: 1956 թ. հրատարակված «Հերոսի մահով» ժողովածուի նյութերի մեծ մասը դարձյալ շոշափում է այդ ժողովրդի կյանքի առանձին դրվագները: Թեման ընդգրկում է անցյալը, Վանի իրականությունը: Հերոսների մեծ մասը իրենց տառապալից կյանքին վերջակետ դնելով Թուրքիայում, սովետական կարգերում են միայն կարողանում հանգիստ շունչ քաշել և մարդավայել ապրել: Սյուժետային կառուցվածքով այդ պատմվածքները նոր բան չեն ավելացնում մինչև այժմ շոշափած մեզ հայտնի թեմաներին, սակայն կարևորն այն է, որ նրանք գրված են նյութին ծանոթ մարդու կողմից և ընթերցողի առաջ նորից բացում են այն ահավոր, անիծյալ անցյալի ծալքերը, որտեղ հայ աշխատավորը օր ու հանգիստ շունք թուրք բռնակալների տիրապետության տակ:

* * *

Մերուն Թորգոմյանը Վրաստանի սովետահայ ավագագույն բեղմնավոր գրողներից մեկն է: 40 տարվա ընթացքում նա շատ բան է կատարել սովետահայ գրականության զարգացման համար, հայ աշխատավորներին կոմունիստական դաստիարակություն տալու ուղղությամբ: Նրա աշխատությունները սիրով են կարդում մեր լայնածավալ երկրում: Եթե չլինեք նրա տկարությունը, ապա նա էլ ավելի մեծ թափով կըստեղծագործեր: Սակայն այն, ինչ տվել է Թորգոմյանը, խոսում է այն մասին, որ հեղինակն ապրում է իր երկրի ու ժո-

ղովրդի վերածնունդով, նոր մարդկանց հերոսական սխրագործություններով, որոնք Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ՍՍԽՄ եղբայրական ժողովուրդների միասնական ընտանիքում, ռուս մեծ ժողովրդի աջակցությամբ դարբնում են իրենց երջանիկ կյանքը և հաստատակամորեն պայքարում իրենց Կոմունիստական վաղը կերտեչու համար:

1940—56 թ. թ.:

ԲԵՆԻԿ ՍԵՅՐԱՆՅԱՆ

Վրաստանի սովետահայ արձակագիրների մեջ Բենիկ Սեյրանյանը իր ուրույն տեղն է գրավում: Որպես ինքնատիպ գրող նա աճում է օրեցօր: Վերջին տարիները նա ավելի մեծ ուշադրություն է դարձնում իր գրվածքների գաղափարական բովանդակությանը, սովետական արդիական թեմաներին մոտենալով պարտիական սկզբունքայնությամբ և սովետական գրողին հատուկ հայրենասիրությամբ: Առաջնորդվելով սոցիալիստական ռեալիզմի մեթոդով, Բ. Սեյրանյանը ավելի խստապահանջ է դարձել իր նկատմամբ, նա էլ ավելի մեծ ուշադրություն է դարձնում իր գրվածքների լեզվական մշակույթին, գեղարվեստական նպատակասլաց համեմատություններին, պատկերավոր ոճին, հերոսների ներքինը ռեալիստորեն, հոգեբանորեն ճիշտ բացահայտելուն, նրանց գործունեությունը իրականության պարարտ հողը տեղափոխելու խնդիրներին, որ իր հերթին ավելի բնորոշ ու ցայտուն է դարձնում հերոսների վարքագիծն ու գործելակերպը:

Բ. Սեյրանյանի գրական հերոսները օժտված են միշտ նորի, առաջավորի համար պայքարողի, դժվարությունները հաղթահարողի և ապագային պայծառ աչքերով նայող սովետական մարդու բարձր հատկություններով: Հեղինակն ունի ստեղծագործական խիզախություն, անկեղծություն, հերոսների հուզաշխարհը խոր ճանաչողությամբ և ռեալիստորեն բացահայտելու ձիրք, պատկերավոր, սահուն գրելաձև, նովելային ժանրին հատուկ լակոնիկ ոճ: Ունենալով սուր դիտողականություն, նա կարողանում է տալ իր հերոսների կենդանի պորտրետները: Բ. Սեյրանյանի մոտ գեղարվեստական պատկերը պայմանավորվում է հերոսների արտաքին ու ներքին խառնվածքով: Որպես հայրենասեր գրող, նա կապված է իր հողին ու ջրին, լավ գիտի Գուգարքի ֆուկլորը, ժողովրդական առածներն ու ասացվածքները և դրանք տեղին օգտագործում է իր պատմվածքներում ու վիպակներում: Այդ բոլորը նպաստում են, որ հեղինակը էլ ավելի գեղեցիկ նկա-

րագրի Գուգարքի բնաշխարհը, ուր ճոճվում են մոշենու ցողաթաթախ ճիթերը, արևի ճառագայթների տակ սվավում են ոսկեծամ նարգիզը, լեռնային շուշանը, կապույտ զանգակը, կանաչ պսակաթերթիկներով սիրի-սիրին: Գուգարքի ալպյան կանաչում աճում են եղախոտի փնջերը, դաշտերում՝ մասրենին, մխրատանձենին, դարչնագույն խաշամը, անտառում գոգավոր տերևներով շմփեռնովը, մոռտարը, հացենին, բոխենին, լոռենին, կաղնին, հաճարքին ու թղբին:

Բ. Սեյրանյանի վարպետորեն նկարագրած Աղ-Բուղայի ջրերի կարմրախայտը, շալտիկ թևերով ջրածիտը, ոսկեթեփուկ ձկնիկը, հովիտներում խլրտացող նապաստակը, քնատ հավքերը, վայրի աղավնին, թմբլիկ կաքավը, մոշահավը հարստացնում են ընթերցողի երևակայությունը: Սեյրանյանը այդ բոլորը կարողանում է տալ կենդանի, գրավիչ գույներով, խոսեցնել հայրենի բուսական և կենդանական աշխարհը:

Բ. Սեյրանյանի պատմվածքներում ու վիպակներում, սակայն, ավելի վեհ շնչով է պատկերվում բնաշխարհի մարդը: Հեղինակը ամենից շատ սիրում է իր հերոսներին ու հերոսուհիներին, որոնք ապրում են սովետական մարդուն հատուկ հայրենասիրական զգացմունքներով, խոհերով, մարդկային լուսապայծառ վսեմ գաղափարներով: Ահա այստեղ հեղինակը կարողանում է շերմացնել ընթերցողի սիրտը, ընթերցողն ապրում է հերոսների հուզաշխարհով, զգում է նրանց յուրաքանչյուրի վեհությունը, աղնվությունը, ուզում է քայլել նրանց հետ, նմանվել նրանց, ապրում է նրանց խոհերով, դառնություններով ու հաղթանակներով: Այդպիսի է Բ. Սեյրանյանը, որը վերջին տաս տարում հրապարակ եկավ պատմվածքների ու վիպակների մի քանի ժողովածուներով:

Բ. Սեյրանյանի պատմվածքներից աղբյուրներն են թարգմանված է «Անթեղած կրակները», վրացերեն՝ նրա աչքի ընկնող գործերը, այդ թվում՝ «Ռուսական սիրտը», «Կրոշկա», «Ճամբարում», «Բարեկամները», «Բնկերները», «Ծաղկած հուշարձան», «Վերադարձած մանկություն» և ուրիշ շատ պատմվածքներ: 1952 թ. «Մոլորայա գվարդիա» հրատարակչությանը լույս տեսավ ոտաերեն լեզվով «Նովելներ» ժողովածուն:

Հեղինակի աշխատություններից առանձին գրքով լույս են տեսել «Քարափի կածանը» (1935 թ.), «Ծիրանաբար» (1946 թ.), «Ծաղկած հուշարձան» (1948 թ.), «Լեռնային բյուր»

րեղ» (1949 թ.), «Ձուլարանի կրակները» (1950 թ.), «Աղբյուրներ» (1953 թ.), «Ճանը և դպրոցում» (1955 թ.): Մտախի պապազյում Վրացպետհրատի հրատարակչությանը վրացերեն լեզվով լույս կտեսնի հեղինակի պատմվածքների նոր ժողովածուն:

Քենիկ Սեյրանյանը աշխատակցել և հիմա էլ ակտիվորեն աշխատակցում է Անդրկովկասի ռեսպուբլիկական բոլոր հայերեն թերթերին ու ժուռնալներին և իր պատմվածքներով, նովելներով ու գեղարվեստական հուզիչ ակնարկներով նվաճել է ընթերցող լայն մասսաների սերն ու համակրանքը: Նշելով հեղինակի ստեղծագործական որոշ ձախողումները, մամուլը միշտ էլ բարձր է գնահատել հեղինակի աչքի ընկնող գործերը, նրա աննախընթաց նվաճումները և խոստումնալից հեռանկարները:

Բ. Սեյրանյանը ծնվել է 1913 թվականին Իջևանում: Միջնակարգ կրթությունը ստացել է Թբիլիսիում: Մի տարի գյուղում ուսուցչություն անելուց հետո ծառայության է մտնում «Սովետական Վրաստան» թերթի խմբագրատանը և մինչև այսօր աշխատում է այնտեղ, ղեկավարելով թերթի պատասխանատու բաժիններից մեկը:

* * *

Բ. Սեյրանյանը գրական ասպարեզ իջավ 30-ական թվականներին: Ինչպես արձակագիրների մեծ մասը, այնպես էլ նա, գրական առաջին թոթովանքներն սկսեց բանաստեղծություններով, բայց շատ շուտով գրական այդ շավիղը փոխեց և անցավ գեղարվեստական ակնարկին ու պատմվածքին, չնայած նա իր երիտասարդության վաղ շրջանում խոր ապրումներով թոթովում էր:

Ձահելություն՝ կամուրջն իմ կյանքի.
Քո անուշ բույրով եմ շնչում,
Քո եռուն թափովն եմ գործում
Ձահելություն՝ կամուրջն իմ կյանքի:
Վաղը, երբ քայլս փոխեմ,
Կջնջի շավիղը կյանքի,
Քո անուշ բույրով եմ շնչում
Ձահելություն՝ կամուրջն իմ կյանքի:

Բ. Սեյրանյանը գրեց առակներ, երգիծական բանաստեղծություններ, բայց դրանք լույս փորձեր էին, մինչև արձակի քնագավառում նա մեկեն աչքի ընկավ:

մահանդից դժվարություններ, քարափի կածանով տուն էր գր-
նում, Աթինը սկսում է մտամտալ.

— Մեր ապրուստն էլ մի սճենց կածան ա, էլի, գիշեր
ցերեկ շարշարվում ենք ու ծերը ծերին չի գալիս: Վարում
ենք, ցանում, արտը հասցնում ու մին էլ, կամ երաշտն ա
տանում, կամ կարկուտը... Համա ուրիշ է կոլխոզը... Մի
արտը, որ կարկուտը տանի, երկու հանդի մասիլը ցավը կը
ծածկե... մի խոսքով կոլխոզն էլ էն ներքի դուզ ճամբեն ա...
(էջ 16):

Նվ իսկապես, կոլտնտեսությունը օրեց օր ձեռք էր բե-
րում շոշափելի նվաճումներ. կոլտնտեսությունում աշխատող-
ները վայելում էին իրենց աշխատանքով ձեռք բերած բա-
րիքները, իսկ ուլբեր դեռ կոլտնտեսություն չէին մտել, հա-
մոզվում էին նրա առավելությունների մեջ: Բայց այդպես չէին
մտածում դասակարգային թշնամիները, Բեգլար աղի տղա-
ները և կուլակ Աբելը, որոնք, շտանելով կոլտնտեսության
հաջողությունները, այրում են համայնական գոմը և սպանում
Գիգոլիին: Այդ եղեռնական գործին ակնատես է լինում
Աթինը, որից հետո նա հանգիստ խղճով մտնում է կոլտնտե-
սություն և ապրում է երջանիկ կյանքով, միշտ վառ հիշելով
իրենց երջանիկ և ունեւոր կյանքի համար պայքարող ման-
կության ընկեր Գիգոլիին, որը զոհվեց դասակարգային թըշ-
նամու ձեռքով:

Բ. Սեյրանյանի այդ առաջին և ծավալով մեծ պատմը-
վածքը կարդացվում է հետաքրքրությամբ: Այն գրված է ջեր-
մորեն, ումանտիկ գույներով և ցույց է տալիս հեղինակի սրա-
տեսությունը, ինտրիգան զարգացնելու կարողությունները,
չնայած պատմվածքը գեղարվեստական մշակման տեսակետից
թերի է: Հոգեբանորեն ճիշտ է տրված Հեշանց Աթնի կերպա-
րը, նրա տատանումները, շրջադարձը և դասակարգային ինք-
նագիտակցության գալը: Ալեկի թույլ են Աբելի և Բեգլար
աղի տղաների բնութագրերը: Նվ դա բնական է, երիտասարդ
արձակագրի առաջին ծավալուն գործը, ինչ խոսք, կունենար
իր առանձին թերությունները:

Նրկորդ ծավալուն գործը «Վառվում են Կոլխիդայի
կրակները» պատմվածքն է, որի թեման շինարարությունն է:
Կոլխիդայի ճահճուտները, կլանելով տասնյակ հազարա-
վոր հեկտար հողեր, զրկել են վրաց գյուղացուն ունեւոր և
երջանիկ ապրելու հնարավորությունից: Դարեր շարունակ
վրաց ժողովուրդը երազել է ցամաքեցնել ճահճուտները և

օգտագործել իրենց նախնիների արգավանդ հողերը: Սակայն
ոչ մի ուժ չէր կարողանում վրաց ժողովրդի դարավոր երա-
զանքը իրականություն դարձնել: Ընդհակառակը, առօրյա կոռ-
ու բեգլարից բացի, գյուղացիները տարվա մեջ մի քանի ան-
գամ գյուղի թավադի համար իջել են Կոլխիդայի ճահճուտը՝
մտել են «անտառների և եղեգնուտի մեջ «սյուրագ» արել,
որպեսզի դարանամուտ ազնվականները առատ որս անեն,
վայելեն վայրի վարագի միսը, հիանան գեղատես սիրամար-
գերի հուրհրատող փետուրներով» («Քսան տարի», ալմանախ,
1941 թ. էջ 166):

Կոլխիդայի դարավոր ճահճուտները ցամաքեցնելու հարցով
առաջին անգամ զբաղվեց միայն Սովետական իշխանությունը:
Նա սկսվեց շինարարությունը: Հատկացվեցին խոշոր գու-
մարներ: Սակայն շինարարության մեջ սողոսկած դասակար-
գային թշնամիները՝ մի կողմից մենշեկիկյան բանակի կադրա-
յին սպա, այժմ անհայտ ճանապարհներով ինժեներ դարձած
Թեյմուրազ Լուկիանիչը, մյուս կողմից թավադ Բեսարիոնի
որդին՝ Յասոնը, որն իր և Թեյմուրազի անցյալը թաքցնելով,
սողոսկել էր Կոլխիդային, ձախողում են Կոլխիդայի ճահճուտ-
ները ցամաքեցնելու աշխատանքները:

Ահա այդ օրերին շինարարություն՝ աշխատանքի է գալիս
Շալվա Չնելյաձեն: Նա մեծ խանգավառություն է լծվում է աշ-
խատանքի, ուսումնասիրում է շինարարության գործում եղած
թերությունները և իր գործնական առաջարկություններով մո-
բիլիզացնում է շինբանավորներին: Աշխատանքի պրոցեսում
Շալվան ճանաչում է նաև ծպտյալ թշնամիներին և պարտժո-
ղովում հանդես գալիս մերկացնող ճառով: Թեյմուրազը հա-
կանալով, որ վաղ թե ուշ Շալվան դիմակազերծ է անելու շի-
նարարության գործի իսկական խանգարիչներին, Յասոնին
առաջարկում է մեջտեղից վերացնել Շալվային, քանզի
Թիոնգէսի վտակի պատնեշը, որի կառուցումով սանձահար-
վեցին հեղեղատներից առաջացող ջրերը և ստեղծեցին ճահ-
ճուտը ցամաքեցնելու աշխատանքները արագացնելու պայ-
մաններ:

Շալվայի դեմ մահափորձ կատարելուց հետո, Յասոնը
Իսիդորին ստիպում է պատնեշը քանդել, վերջինս «ուզեց իր
աջ ձեռքի աշխատանքը ձախ ձեռքով ջրին տալ, կամ ձախ ու-
սով բերած գերանը՝ աջ ուսով գետը նետել» (նույնը, էջ 191):
Սյդ բոլորը Իսիդորը պատմում է աղչկան՝ Թինային, նա էլ
իր հերթին հայտնում է ուր հարկն է: Հետախուզական օրգան-

ները գործը քննելուց հետո մերկացնում են դասակարգային թշնամիներին: Կառավարությունը շինարարության ցեղամասն է ուղարկում նոր կադրեր, որոնք շարունակում են Կոլխիդայի ճահճոտները ցամաքեցնելու աշխատանքը:

Ինչպես տեսնում ենք, պատմվածքն ունի հարուստ բովանդակություն: Հեղինակը դասակարգային թշնամիների կողքին դուրս է բերել մի խումբ հայրենասերների, որոնք նվիրված են Կոմունիստական պարտիային և Սովետական կառավարությանը: Հանձինս Շալվայի, Գաթիկոչի, Իսիգորի և Թինայի Սեյրանյանը տվել է հին աշխարհի դեմ անձնվիրաբար պայքարողներին, որոնք սովետական կարգերի ամրապնդման, շինարարության հաղթանակի և արդար աշխատանքի մեջ տեսնում են վաղվա մեր պայծառ ապագան: Գործողությունների զարգացումը ընթանում է համաշափ, հանգույցների լուծումը տրված է ճիշտ, կերպարները կենդանի մարդիկ են, որոնց գործի և խոսքի մեջ չկա չափազանցություն: Նյութի խոր ճանաչողությունը հեղինակին օգնել է ստեղծելու ռեալիստական մի գործ, որի ողմանտիկ երանգավորումները ոչ թե վնասում, այլ բարձրացնում են պատմվածքի գեղարվեստական կառուցվածքը:

Պետք է ասել, որ Բ. Սեյրանյանը կարողանում է լիրիկական զեղումներով լի պատկերները հմտորեն զուգակցել ռեալիստական թշնամիներին: Անգամ սոցիալական կնճառոտ հարցերի լուծմանը նա մոտենում է ողմանտիկական պատկերների, սիմվոլների միջոցով, ավելի ցցուն դարձնելով գրվածքի իդեական կողմը: Այդ բանը մենք տեսնում ենք ինչպես «Կիրանցի ձորը», այնպես էլ «Կաթնաղբյուր» պատմվածքներում:

«Կաթնաղբյուր» ավանդավիթ է, գրված լիրիկական խոր շնչով, ողմանտիկ գունավորումով: Սոցիալական այն թեման, որ շոշափում է հեղինակը, այնքան հուզիչ մոմենտներ է պարունակում իր մեջ, որ ընթերցողը դայրույթով է լցվում հին աշխարհի բռնակալների դեմ:

Նյութը վերցված է Գուրգարքի լեռնաշխարհից, որը հարուստ է բազում աղբյուրներով, որոնցից ամեն մեկը ունի իր ավանդավիթը: Կաթնաղբյուրն էլ ունի իր սրտառուչ պատմությունը, նրա անվան հետ կապված է մի ամբողջ գերդասանի տխուր հառաչանքը հին աշխարհի տիրակալների դեմ:

«Ինչ են մրմնջում կաթնաղբյուրի ջրերը,— գրում է հեղինակը,— որ շրջապատի ծառերն անգամ կարեկցանքով

ձուռ են իրենց կատարները, ապա հաղորդում են իրար և անտառը ալիքավորվում է կապուտակ ծովի պես:

Արդյոք ու՞ր են վազում այդ զուլալ ջրերը, որ քերծի լանջի ճկում թփերն անգամ անձկությամբ նայում են նրանց ետևից ու մեղմորեն փսփսում. «Ուշ է, ափսոս, ուշ է...»:

Գուցե իրոք, կաթնաղբյուրի ջրերը պատմում են ցավոտ դեպքեր, որոնցից անտեղյակ են ծառերը, հազարամյա անտառի այդ համր բնակիչները:

Բայց գուցե նրանք ոչինչ չեն պատմում, այլ՝ լեռնաշխարհի մյուս ջրերի նման սևահողի տակ կաթիլ առ կաթիլ հյուսվում են իրար, ապա լույս աշխարհ գալով, շրմած վազում են բաղեղուտի միջով:

Օ, ոչ. ասում են, կաթնաղբյուրի երևույթով մի գթառատ մայր է մրմնջում, իսկ ջրերը նրա զուլգ ստինքներից բլթող կաթի ալիքներն են, որ վազում են ճոճի մեջ թողած ծծկեր մանկան ու բանտի պատերում մեռնող ծերունի հոր մոտ» («Արշալ», № 2, 1939 թ. էջ 34):

Այս լիրիկական զեղումներով լի նախաբանից հետո հեղինակը ընթերցողի առաջ բացում է կաթնաղբյուրի անվան տակ թաքնված տխուր պատմությունը:

Լեռնաշխարհի տիրակալը, որն իրեն անբախտ է համարում, դերվիշի խորհրդով ուզում է գտնել իր տիրապետության տակ ապրող ամենաբախտավոր մարդուն, որպեսզի նրա շապիկը հագնելով, բախտը իր թևերով այցի գա իրեն: Նրա մանկավիհները շրջում են ամբողջ աշխարհը, բայց չեն գրտնում այդպիսի մարդու, ընդհակառակը բոլորը հուսախաբնում անիծում են իրենց վիճակը: Բայց օրերից մի օր պալատ են բերում ցնցոտիների մեջ կորած մի ծերուկի, որին հարց ու փորձ անելով՝ տիրակալը համարում է, որ նա իրեն ամենաերջանիկ մարդն է համարում:

— Դե, խոսիր, ծերուկ, — շարունակեց տիրակալը, — եթե գու իրոք, ամենաբախտավորն ես ամբողջ աշխարհում, պատմիր քո ծով հարստության մասին, կյանքի և ապրուստի մասին: Վերջապես ո՞րն է քո երջանկության աղբյուրը...

Պալատի քար լուծվյալ մեջ լեռնաշխարհի աղնիվ աշխատանքով ապրող ծերուկը հպարտորեն պատմում է.
«— Իմ կյանքի ու ապրուստի մասին, դե, ի՞նչ պատմեմ, տեր իմ.

Մայր մտնող արևի հետ զուլալ դնում եմ քարին, ծա-

գող արևից էլ շուտ ոտքի եմ ելնում: Երկու ոչխար ու մի այծ առաջս առած քշում եմ դեպի ծանոթ լեռները, ապրում եմ լեռների գրկում, լեռները հետ, լեռների պես ազատ:

Էս ծով երկնքի տակ մի աղջիկ ունեմ միայն, մի վեսա ու մի նորածին թոռնիկ: Աղջիկս — արևն է հոգուս աշխարհի, փեսաս — լուսինն է հոգուս գիշերի, թոռնիկս — աստղն է հոգուս կամարի...

Լեռնաշխարհի տիրակալը, որ իր ամբողջ կյանքում ժառանգի այտ շէր համբուրել, մռայլվեց, բայց շարունակեց լըսել:

— Եվ եթե մի օր աշխարհի արևը հանդիչ—իմ արևն ինձ ջերմություն կտա, տեր իմ, եթե լուսինը խավարի, իմ լուսինն ինձ լույս կտա, եթե աստղերն աղոտվեն, իմ աստղն ինձ ցոլք կտա, — ավարտեց ու լռեց ծերունին:

— Ուրեմն իմ բախտի բանալին քո այդ ծվենների տակ է թաքնված եղել, — երջանկության դողով խոսեց տիրակալը, — դե, շուտ, ծերուկ, էլ ու՛մ ես սպասում, հանիր շապիկդ, տուր ինձ, և դրա դիմաց պահանջիր՝ ինչ սիրտդ կամենա:

Ծերունին կծկվեց ցնցոտիների մեջ ու դիվահարի նման մի քանի քայլ ետ-ետ գնաց...

— Ինչու՞ ես շշմեմ... խոսիր... հը՛մ, ուրախությունից լեզուդ պապանձվեց... —

— Բայց ես, — դողաց ծերունին, — ես շապիկ չունեմ, — վերջին խոսքերի հետ աշխարհի միակ բախտավորը ցնցոտիները ետ տանելով, ցույց տվեց իր մերկ կուրծքը...

— Աա՛ ահ, — կորստաբեր ձայնով ճչաց տիրակալը, — ուրեմն ես ցմահ դժբախտ եմ մնալու, — ապա բռնեց ծերունու օձիքից և հատ հատ բռներով մոլտաց:

— Եվ դու քեզ բախտավոր ես համարում...

— Ամենաբախտավորը, տեր իմ...

— Քաղցած ու տկլ՛որ...

— Այո՛, քաղցած ու տկլոր...

Եվ լեռնաշխարհի տիրակալը մի կատաղի հրումով ծերունուն տապալեց գետին ու ճչաց:

— Հե՛յ, բանտապետ, սովորական մահը քիչ է այս քավթառի համար, գցիր իմ ստորերկրյա բանտի ամենամուրթ նկուղը և թող առանց մի փշրանք հացի ու մի կաթիլ ջրի շանսատակ լինի: Թող գետնի երեսի այս բախտավորն էլ գետնի տակ անցնի...

— Քո կամքին՝ դեմ գնալ չի լինի, տեր իմ, — հատաչեց

ծերունին, — բայց թույլ տուր մինչև մահս գոնե հոգուս արևը աղջիկս, մեկ-մեկ այցի դա... Թող լուսինն ու աստղը հեռու լինեն, բայց աղջիկս, օ՛...

Տիրակալը լուռ մնաց» (Նույնը, էջ 35 — 36):

Այդ դեպքից հետո մռայլվում է տիրակալը, որի հույսերը խորտակվել, արևը խավարել, իսկ ամարաթը ավերակ էր դարձել: Անցնում են ամիսներ: Տիրակալը զարմանում է, երբ բանտապետից իմանում է, որ ծերունին կենդանի է: Կասկածը տանջում է նրան, վճռում է բանտային հսկիչի համազգեստով հետևել ծերունու աղջկան: Եվ ինչ զարմանք, նա տեսնում է, ինչպես աղջիկը հոր մոտ գալուց հետո, ոսկրացած ծերունուն կերակրում է իր ստինքներով: Տիրակալը հրամայում է գրվախատել անզգամ աղջկան և մարմինը անզգների բերանը նետել: Նրա հրամանը կատարվում է: Աղջկան գլխատում են հրնամենի քերժի կատարին և նետում ձորը: Հետևյալ գարնանը հնամենի քերժի տակ մի քաղցրահամ աղբյուր է բլթում՝ ջրերը պարզ ու վճիտ, մրմունջը շուրթներին:

«Ասում են, — եզրափակում է իր ավանդավեպը Սեյրանյանը, — այդ աղբյուրը նման չէ լեռնաշխարհի մյուս աղբյուրներին: Նրա ջուրը գլխառատ մոր ստինքներից վիժող կաթն է — արդարություն ու գթություն կաթը, որ թորվում է սեահողի մեջ, ապա գետնի երես դուրս գալով վազում է շնչահեղձ մանկանն ու սովամահ հորը կերակրելու համար» (Նույնը, էջ 28):

Սա մի սրտաճմլիկ պատմություն է, որի տակ թաքնված է ոչ միայն աշխատավոր գյուղացու ընտանիքի ողբերգական վախճանը, այլև տիրակալների դեմ ժողովրդի ցասումնալից արդար բողոքը: Բ. Սեյրանյանը ավանդալիպում առաջ է քաշում տիրակալների բռնակալական ուժի ներքո աշխատավոր ժողովրդի տառապյալ, անարև կյանքը: Նույն սոցիալական հարցին է նվիրված նաև «Կիրանցի ձորը» ավանդավեպը (տես «Արշավ», № 4, 1938 թ.), ուր տրված է յոթ որմնագիր եղբայրների ողբերգական մահը: Երկու և կես էջանոց պատմը վածքում հեղինակը խտացրած, թանձր գույներով նկարագրում է աշխարհակալ իշխանի բռնակալությունը և ժողովրդի ծոցից դուրս եկած հանձարեղ որմնագիրների հոգու խորությունը, իրենց վաստակը գնահատող, մարդկային բարձր արժանապատվությամբ օժտված շինարար եղբայրների կյանքի վերջալույսը: Այդ եղեռնական դեպքից հետո լայն մասսաները ոտքի են կանգնում, ավերում են իշխանի պալատը, իսկ իրեն՝ գոռոզ են կանգնում, ավերում են իշխանի սրածայր գմբեթ, այնտեղից

նետում են ձորը: Ավանդավեպում միջանկյալ պատմվում է լեռնաշխարհում երբեմն տեղի ունեցած դասակարգային պայքարի դրվագներից մեկը, դասակարգային պայքար, որն ուղղված էր տիրող սոցիալական անարդարությունների դեմ:

Երկու ավանդավեպերն էլ գրված են ջերմորեն, այստեղ աչքի է ընկնում խոստումնալից հեղինակի գրչի գորուծյունը, գեղարվեստական խոսքի ձևունությունը, ժողովրդական բառու բանը խելացիորեն և տեղին օգտագործելու հմտությունը:

Լեռնաշխարհի մոտիկ անցյալի ունուցիտն պայքարի պատմությանն է նվիրված «Սաղափ ամին» պատմվածքը, որի գեղարվեստական մշակումը ավարտված է: Պատմվածքում կան կենդանի մարդիկ՝ Սաղափ Ամին, Վաստն, Գասին, որոնք պայքարում են դաշնակցական մարիոնետային կառավարության դեմ: Նրանք կապված են բուլշևիկյան ընդհատակյա կոմիտեի հետ, ստանում են համապատասխան ցուցումներ և կազմակերպում ժողովրդական վրիժառուների ջոկատ: Ծաքար աղի և նրա կնոջ՝ Նագի խանումի կերպարներում և նրանց բնավորությունների մեջ նկատում ենք վիպին անհրաժեշտ հարուստ նյութ, բայց ափսոս, որ հեղինակը այդ բոլորը տվել է շտրիխներով: Ընդհանուր առմամբ այդ պատմվածքը հարուստ է սուր բախումներով, բայց հեղինակը կծկել է պատմվածքի սահմանները, ուստի դրական և բացասական կերպարները գեղարվեստական ընդհանրացում չեն ստացել: Նույնը պետք է ասել «Ռեպի ծանոթ լեռները» պատմվածքի մասին: Դա նույնպես անկատար է մնացել: Այդ երկու պատմվածքներն էլ վիպական հարուստ նյութ են պարունակում և եթե հեղինակը ապագայում անդրադառնա դրանց մշակմանը, մենք կունենանք լեռնաշխարհի նախառևույցիտն շրջանի բանվորական ունուցիտն քուրայում կոփված դրական հերոսներ (Սաղափ ամի, Շահո), որոնք պրոլետարական գաղափարները գյուղ բերելով՝ աշխատավոր գյուղացիներին նախապատրաստում էին ունուցիտն մարտերի համար:

Իր գրվածքների թերություններով հանդերձ, Բ. Սելրանյանը իր գրական գործունեության առաջին շրջանում հարուստ փորձ կուտակեց, ձեռք բերեց գրականության մեջ տեղ գրավելու իրավունք: Իսկ այդ բանը կատարվեց հեղինակի ստեղծագործական վերընթացի երկրորդ շրջանում, երբ լույս տեսավ նրա հանրածանոթ «Միրանաքար» ժողովածուն:

* * *

«Միրանաքար» խորագիրը կրող պատմվածքների ժողովածուի մեջ աչքի է ընկնում սովետական մարդուն հուզող թեման՝ հայրենասիրությունը: Այստեղ հերոսները, սնված «ցավին՝ ցավակից, վշտին՝ կարեկից» հումանիստական խոր գգացմունքներով, Հայրենական Մեծ պատերազմի օրերին իրենց խառնվածքին հատուկ ժողովրդասիրությամբ հանդես են գալիս որպես մեր աշխարհաշեն էպոխայի կոփված քաղաքացիներ:

Նովելների ու պատմվածքների միջավայրը մեզ արդեն ծանոթ լեռնաշխարհի հայ գյուղն է, հերոսները՝ հայ կոլտընտեսականները և ինտելիգենցիան: Ժողովածուն սկսվում է լեռնաշխարհի հրաշագեղ բնության լիրիկական ու ոգեշունչ նկարագրությամբ:

«Երկնահաս սարեր ունի Գուգարքը՝ մշուշե երազը ճակատներին, ցողաթաթախ հովիտներ ունի, որոնք ծաղկի բուրմունք են խնկարկում, մուրազ աղբյուրներ ունի, ջրերն աչքան սառը, որ եթե մատդ մեջները թաղես՝ սառույց կկըտտիր»: Բ. Սելրանյանը սիրում է հայրենի Գուգարքի յուրաքանչյուր անկյունը, իր օրրանը, որտեղ լեռնաշխարհի շնչունկան հովը մեղմորեն ձոճում է մոշենին, ինչպես մայրն իր մանկանը, սիրում է Գուգարքի ծաղկաթագ սարերից հոսող Աղ-Բուղայի ջրերը, որոնք իրենց հետ բերում են ծաղիկների բույրը:

Տխուր էր հայրենական պատերազմի օրերին հեղինակի հարազատ լեռնաշխարհը, որի ջահելները Հայրենիքի կսկիծը սրտում՝ խիզախորեն պայքարում էին նենգ թշնամու դեմ: Լեռնաշխարհի յուրաքանչյուր մարտիկ պարտիայի և կառավարության կոչով գնացել էր ռազմաճակատ՝ ամոթով ետ չգալու համար: Եվ ոչ միայն ռազմաճակատի, այլ և թիկունքի հայրենասերները իրենց սխրագործություններով թև ու թիկունք էին տալիս Հայրենիքին, օդնելով ռազմաճակատին մթերքներով, ամրապնդելով՝ կոլտնտեսությունը քաղաքականապես և կազմակերպորեն: Թիկունքի և ռազմաճակատի հայրենասերների քաղաքական-բարոյական այդ անխորտակելի ուժը, Հայրենիքի նկատմամբ նրանց տածած անհուն սեփը և թշնամու նկատմամբ տածած ատելությունն իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել հեղինակի պատմվածքներում:

Յուրաքանչյուր պատմվածքում ընթերցողը գտնում է սովետական ժողովրդի անօրինակ, աննկուն կամքի պատկեր-

մարտիկներին, որպեսզի նրանք միշտ մաքուր, առույգ և կայ-
տառ լինեն: Սակայն Պետյան գոհ չէր իր աշխատանքից, նա
երազում էր գոնե մեկ անգամ խորհի գնալ: Պետյան խնդրում
է կապիտանին, որը երկար խորհելուց հետո, համաձայնում
է. «Ո՞րքան շուտ է, եթե դու երկուսն էլ հհասցնես, — պատաս-
խանում է կամարովը, — կարծում եմ հրամանատարությու-
նըն ընդառաջ կգա քո ցանկությանը»:

Այնուհետև Պետյան, որպես հետախույզ հերոսական
գործեր է կատարում ինչպես «լեզու» որսալու, այնպես էլ
թշնամու դիրքերի, դասավորումների մասին կարևոր տեղե-
կություններ հասցնելու գործում: Վերջին անգամ նա իր խիզախ
ընկերների հետ միասին դժվարին պայմաններում շարքից
հանում է թշնամու առաջավոր հետախույզներին և գնդի զին-
վորներին զինաթափ անելուց հետո գերի է վերցնում մար-
տիկներին և գնեցալին:

Պետյան սխրագործությունների, մաքառումների գնով է կա-
տարում իր հայրենասիրական պարտքը, դրանով վարակելով
նաև մյուս հետախույզներին: Ձյան հաստ շերտը ճեղքելով, լուռ
ու անձայն հետախույզները սողում են առաջ: «Յուրտը կտրում է
ապակու պես, ձյունը լցվում է նրանց զինվորական վերար-
կունքի թևերը և թվում է, թե ուր որ է կատաղեն, կմնան տե-
ղում: Իայց ոչ, Հայրենիքի սերը ջերմացնում է նրանց սիրտը
և մղում առաջ»: Ահա այդ հայրենասիրական վեհ գաղա-
փարներով տոգորված սափրիչ Պետյային է նվիրված պատ-
մըվածքը, որն ունի դաստիարակչական և ճանաչողական մեծ
նշանակություն:

Չբոքտարցի Արսենտին («Պրիդոն Սավին») իր որդու՝
Պրիդոնի մահից հետո սահմանապահ զորամասն է բերում
կրտսեր որդուն, հրամանատարությանը խնդրելով ընդունել
նրան այն պայմանով, որ նա կանգնի նույն պահակադիր-
քում, որտեղ հերոսաբար ընկավ Չովաշիյի արծիվ՝ Պրիդո-
նը: «Թող սա էլ Պրիդոն արծիվս պես ջլատի թշնամու կուրծքը,
կովի նրա պես ու մեռնի, ոնց նա մեռավ...»:

Հեղինակը կենդանի, տիպական հանգամանքներում նը-
կարագրում է Պրիդոնի հերոսական մահը, որը մինչև իր
վերջին րոնչը թշնամուց պահպանել էր վառողի պահեստը:

Սովետական ջերմ հայրենասիրությամբ է տոգորված
նաև ռազմաճակատային Արմեն Արմենյանը («Երգը»): Հեղի-
նակը առանձնապես հուզիչ է տալիս այն մոմենտները, երբ

Արմեն Արմենյանը մարտադաշտից ազատում է վիրավոր,
գնդապետին, փրկում է գնդի պատիվը՝ նրա գրոշը ու մար-
տական պարգևները:

«Միրանաբար» ժողովածուի ծավալով մեծ գործերը՝ «Ան-
թեղած կրակներ» և «Միրանաբարի անտառապահը» գողտրիկ
պատմվածքներն են:

Առաջին գործում հեղինակը բացահայտում է Սևումյանի
և Վերգինեի լիրիկական զեղումներով հարուստ սիրո պատ-
մությունը, որը վերջանում է սովետական բարոյականության
հաղթանակով:

Պատահական հանդիպումով ծանոթացած Սևումյանը և
Վերգինեն գողունի սիրում են միմյանց: Նրանք չեն կարողա-
նում փոխադարձաբար հայտնել իրենց սերը:

Սեյրանյանը հանձին Վերգինեի տալիս է սովետական
ընտանիքի սրբությունը պահպանող կնոջ կերպարը. Վեր-
գինեն րոպեական հաճույքով չի ուզում արտավորել իրեն և
ընտանիքի պատիվը: Այդպես չէ Սևումյանը, որը սիրային
արկածներով ու դիպվածքներով լի կյանքի ուղի է անցել և
այնքան ծաղկից-ծաղիկ անցել, որ թվում է, թե կյանքը նրա
համար «այլևս նոր բան չունի պահած»: Վերգինեն չու-
զեց Սևումյանի անմեղ զոհերից մեկը դառնալ: Սևումյանը
հաշիվ չէր տալիս, որ իր բախտավորությամբ ինչպիսի դժ-
բախտություն կպատճառեր Վերգինեի ամուսնուն՝ Տիգրան
Ավետիսյին, որը օժտված էր սովետական գիտնականին ան-
հրաժեշտ տվյալներով և մի համակրելի անձնավորություն էր:
Սովետական կնոջ բարոյական հատկություններով զինված
Վերգինեն կանխում է բոլոր շարիքները:

Հեղինակը Վերգինեի և Սևումյանի սիրո պատմությանը
ուղղորդված տալիս է Գուգարքի պատմական հուշարձանների,
բերդի, Քարվանսարայի (Իջևանի) նկարագրությունները, ո-
րոնք լրացնում են պատմվածքում շոշափած իդեան: Այսպես,
որինակ, խոսելով Շամիրամի պես գեղեցիկ աղջկա և Ման-
թաշի սիրո առասպելական պատմության մասին, Սեյրա-
նյանը մեջ է բերում Գուգարքի ժողովրդի բարքերը, որոնք
տանել չկարողացան օրենքով չճանաչված սերը: Վերգինեն
ընթանում է իր նախնիների կողմից հաստատված սուրբ օ-
րենքով: Նա ոչ թե կուրորեն հետևում է ֆեոդալական աշխար-
հի ստեղծած բարքերին, այլ գիտակցորեն պահպանում է

հայրենի օջախի սրբությունը, որը դարերի խորքից հասել է մեզ հաստատված սուրբ օրենքով:

Վերդինեի և Սևույանի սիրավեպը ոմանք համարում են ոչ տիպական, գտնելով, որ Վերդինեի նամակի բովանդակության ու նրա պարտեզում հայտնվելու գործողության մեջ կա ինչ-որ հակասություն, որ բարոյական կինը, որպիսին ներկայացնում է հեղինակը Վեդդինեին, յայտք է աներ արքայը, ուրիշ կերպ ասած՝ նման կանայք իրավունք չունեն կյանքում ոչ մի տղամարդու, թեկուզ պատմվածքում նկարագրվածի սահմաններում, համակրել, սիրել: Կա այնքան էլ ճիշտ չէ: Վերդինեն վերին աստիճանի բարոյական կին է, բայց միաժամանակ նա զուրկ չէ մարդկային զգացմունքներից և այդ զգացմունքները արտահայտելու նուրբ ձևերից: Նա կարող էր համակրել Սևույանին, անգամ սիրել, և առերես ցույց տալ, բայց միաժամանակ նա հավասարակշռված բընավորության տեր կին էր, ուստի կարողացավ կուլմինացիոն կետում իրեն հաշիվ տալ: Եվ նա, իրոք, անտարբեր չըմբնաց դեպի Սևույանը, բայց և անձնատուր չեղավ նրա կրթերին: Վերդինեի մեջ և առաջին և երկրորդ դեպքում խոսեց մարդկայինը, գիտակցականը: Այդ նկատի ունենալով է գրել հեղինակը պատմվածքը, ուստի այն համարել գաղափարապես անընդունելի, ճիշտ չէ: Հեղինակին կարելի է մեղադրել միայն մի բանում, որ նա պարտեզում հանդիպելու տեսարանը մի փոքր չի պատճառարանում, որպեսզի ընթերցողը երկմտանքի մեջ չընկնի:

Ընտանիքի սրբությանը և պատերազմում հերոսաբար ընկած զինվորական ամուսնու հիշատակը հավերժացնող կնոջ բարձր բարոյական գծերը շոշափված են նաև «Մաղկած ալիքներ» նովելում: Ընթերցողը խոր պատկանանքով է հիշում երիտասարդ կնոջը, որ ամեն օր Աղ-Բուղայի կարկաչուն ջրերին է հանձնում լեռնաշխարհի երփներանգ ծաղիկները, դրանով մի պահ սանձելով իր հոգում կուտակված վշտի փոթորիկը, որը առաջացել էր սիրած զինվորին կորցնելուց հետո: Նովելը գրված է բանաստեղծական շնչով, և կնոջ, և շրջապատի բնության նկարագրությունները այնքան հարազատորեն ու ներդաշնակ են տրված, որ ընթերցողը նովելը կարողալուց հետո, երկար, շատ երկար նրա տպավորությունն ասել մտնում է մտորումների աշխարհը, մոռանալով կարողալ գրքի մյուս էջերը:

Ժողովածուն վերջանում է «Միրանաբարի անտառապահը»

գողտրիկ պատմվածքով, որտեղ հեղինակը նորից անդրադառնում է հայրենական պատերազմի օրերին հայ գյուղի իրեն ծանոթ թեմային: Պատմվածքը կարդացվում է լարված հետաքրքրությամբ: Հեղինակին հաջողվել է կուտ սյուժեի հետ միասին ստեղծել հետաքրքրական հանգույց, կենդանի կերպարներ, որոնք տիպական են թե իրենց գործունեությամբ և թե դրանից բխող հուզական աշխարհով: Լեռնաշխարհի բնության սքանչելի նկարագրությունների հետ միասին երկը իդեական-գեղարվեստական տեսակետից ավարտված գործ է: Հեղինակը խիզախորեն դրսևորում է սոցիալիստական կարգերում կոփված կոլտնտեսականների հոգեկան հարստությունները, դեպի Հայրենիքը և մարդը տածած անհուն սերն ու ակնկալությունները, որոնք կարող է ունենալ միայն և միայն սովետական մարդը, որին դաստիարակել, ուղղություն է տվել և դաստիարակում և ուղղություն է տալիս մեծ կենիսի հանճարով ստեղծված կոմունիստական պարտիան:

Կարդալով պատմվածքը, մարդ ակամա զգում է այն որակական տարբերությունը, որ կա նախկին մենատրնտեսի, իր մեջ ամփոփված, չուրթին ու արորին կառած գյուղացու և սոցիալիստական Հայրենիքի, եղբայրական ժողողացու և սոցիալիստական Հայրենիքի միջև: Պատվորդների հոգսերով ապրող կոլտնտեսականի միջև: Պատմվածքի արժանիքը հենց այդ է: Ընթերցողը սովետական մարդու բարոյական այդ բարձր հատկություններով սնվում, մարդու բարոյական այդ բարձր հատկություն է ստանում և աշխատում է հոգեկան մեծ բավականություն է ստանում և աշխատում է նմանվել նրան: Այդ տեսակետից ուշադրավ է Միրանաբարի նմանվել նրան: Այդ տեսակետից ուշադրավ է Միրանաբարի նմանվել նրան: Այդ տեսակետից ուշադրավ է Միրանաբարի նմանվել նրան: Այդ տեսակետից ուշադրավ է Միրանաբարի նմանվել նրան:

Երբ գյուղի երիտասարդները ռազմաճակատ են մեկնում, գորակոչիկներին ճանապարհող համապետողացիների մեջ առանձնահատուկ է հնչում Ուսեփ ամու բաժակաճառը.

« — Դե, բարով գնաք, բարով էլ ետ գաք, իմ աղիք բալեք: Աշխարհը, դիտե՛ք, մի անքնների անտառ ա՛՛ հազար տեսակ ծառով, հազար տեսակ պտղով ու տերևով: Մեկի պտուղը մեկի պտուղն է, մեկինը՝ թթու, մեկինը՝ կծու, մեկինը՝ կարմիր, մեկինը՝ դեղին, մեկին էլ կա, որ սկի պտուղ չունի: Երկու ծառնույն հողից հյուսիս են առնում, համա մեկը նույն ա տալիս, մեկինը

հայրենի օջախի սրբությունը, որը դարերի խորքից հասել է մեզ, հաստատված սուրբ օրենքով:

Վերգինների և Սևուսյանի սիրավեպը ոմանք համարում են ոչ տիպական, գտնելով, որ Վերգինների նամակի բովանդակության ու նրա պարտեզում հայտնվելու գործողության մեջ կա ինչ-որ հակասություն, որ բարոյական կինը, որպիսին ներկայացնում է հեղինակը Վերգիններին, չպետք է աներ այդ քայլը, ուրիշ կերպ ասած՝ նման կանայք իրավունք չունեն կյանքում ոչ մի տղամարդու, թեկուզ պատմվածքում նկարագրվածի սահմաններում, համակրել, սիրել: Դա այնքան էլ ճիշտ չէ: Վերգիններն վերին աստիճանի բարոյական կին է, բայց միաժամանակ նա զուրկ չէ մարդկային զգացմունքներից և այդ զգացմունքները արտահայտելու նուրբ ձևերից: Նա կարող էր համակրել Սևուսյանին, անդամ սիրել, և առերես ցույց տալ, բայց միաժամանակ նա հավասարակշռված բընավորության տեր կին էր, ուստի կարողացավ կուլմինացիոն կետում իրեն հաշիվ տալ: Եվ նա, իրոք, անտարբեր չըմընաց դեպի Սևուսյանը, բայց և անձնատուր չեղավ նրա կրքերին: Վերգինների մեջ և առաջին և երկրորդ դեպքում խոսեց մարդկայինը, գիտակցականը: Այդ նկատի ունենալով է գրել հեղինակը պատմվածքը, ուստի այն համարել գաղափարապես անընդունելի, ճիշտ չէ: Հեղինակին կարելի է մեղադրել միայն մի բանում, որ նա պարտեզում հանդիպելու տեսարանը մի փոքր չի պատճառաբանում, որպեսզի ընթերցողը երկմտանքի մեջ չընկնի:

Ընտանիքի սրբությանը և պատերազմում հերոսաբար ընկած զինվորական ամուսնու հիշատակը հավերժացնող կնոջ բարձր բարոյական գծերը շոշափված են նաև «Մաղկած ախքներ» նովելում: Ընթերցողը խոր պատկանասքով է հիշում երիտասարդ կնոջը, որ ամեն օր Ադ-Բուղայի կարկաչուն ջրերին է հանձնում լեռնաշխարհի երփներանգ ծաղիկները, գրանով մի պահ սանձելով իր հոգում կուտակված վշտի փոթորիկը, որը առաջացել էր սիրած զինվորին կորցնելուց հետո: Նովելը գրված է բանաստեղծական շնչով, և կնոջ, և շրջապատի բնության նկարագրությունները այնքան հարազատորեն ու ներդաշնակ են տրված, որ ընթերցողը նովելը կարգալուց հետո, երկար, շատ երկար նրա տպավորության տակ մտնում է մտորումների աշխարհը, մոռանալով կարգալ գրքի մյուս էջերը:

Ժողովածուն վերջանում է «Ծիրանաքարի անտառապահը»

պողտրիկ պատմվածքով, որտեղ հեղինակը նորից անդրադառնում է հայրենական պատերազմի օրերին հայ գյուղի իրեն ծանոթ թեմային: Պատմվածքը կարդացվում է լարված հետաքրքրությամբ: Հեղինակին հաջողվել է կուտ սյուժեի հետ միասին ստեղծել հետաքրքրական հանգույց, կենդանի կերպարներ, որոնք տիպական են թե իրենց գործունեությունում և թե դրանից բխող հուզական աշխարհով: Լեռնաշխարհի բնութսյան սքանչելի նկարագրությունների հետ միասին երկը իդեական-գեղարվեստական տեսակետից ավարտված գործ է: Հեղինակը խիզախորեն դրսևորում է սոցիալիստական կարգերում կուլմած կուլտուտեսականների հոգեկան հարստությունները, դեպի Հայրենիքը և մարդը տածած անհուն սերն ու ակնկալությունները, որոնք կարող է ունենալ միայն և միայն սովետական մարդը, որին դաստիարակել է, ուղղություն է տվել և դաստիարակում և ուղղություն է տալիս մեծ կենսի հանճարով ստեղծված կոմունիստական պարտիան:

Կարդալով պատմվածքը, մարդ ակամա զգում է այն որակական տարբերությունը, որ կա նախկին մենատընտեսի, իր մեջ ամփոփված, շուրթին ու արորին կառչած գյուղացու և սոցիալիստական Հայրենիքի, եղբայրական ժողովուրդների հոգսերով ապրող կուլտուտեսականի միջև: Պատմվածքի արժանիքը հենց այդ է: Ընթերցողը սովետական մարդու բարոյական այդ բարձր հատկություններով սնվում, հոգեկան մեծ բավականություն է ստանում և աշխատում է նմանվել նրան: Այդ տեսակետից ուշագրավ է Ծիրանաքարի մեծ անտառապահ Ուսեփ ամին, որի մարդկային բարձր արժանիքները կարծես դրսևորվեցին Հայրենական Մեծ պատերազմի օրերին: Նա ունի իր փիլիսոփայական խոհերն ու դատողությունները, որոնք իմաստավորված են դարավոր անտառի մասունքներով:

Երբ գյուղի երիտասարդները ուղարկվում են մեկնում, զորակոչիկներին ճանապարհող համագյուղացիների մեջ առանձնահատուկ է հնչում Ուսեփ ամու բաժակաձառը.

« — Դե, բարով զնաք, բարով էլ ետ գաք, իմ ազիզ բալեք: Աշխարհը, գիտե՞ք, մի անքննելի անտառ ա՛, հազար տեսակ ծառով, հազար տեսակ պտղով ու տերևով: Մեկի պտուղը մեկից քա, մեկից՝ թթու, մեկից՝ կծու, մեկից՝ կարմիր, մեկից՝ դեղին, մեկն էլ կա, որ սկի պտուղ չունի: Երկու ծառ նույն հողից հյուսիս են առնում, համա մեկը նույն ա տալիս, մեկը

փուշ: Մասն իր պտղով կհիշվի: Էն պտուղն ասածն էլ մարդի գործն ա, նրա անունը, նրա հիշվելիքը: Բարի գործով բարի անուն թողեք, իմ ազիզ բայեք, ու հենց արեք, որ մենք էլ մեր փափախը միշտ բարձր դնենք: Ասում ա՝ լավ եզը լծի տակ կերևա, լավ մերը՝ օրորոցի, լավ տղեն՝ կուլի մեջ: Տա ասոված, որ նամուռով ու պատվով էս սիրուն հանդերի տեսությանը արժանանաք, մենք էլ՝ ձեր թանկագին տեսությանը: Դե բարով գնաք...» («Միրանաքար», էջ 100):

Գյուղը դատարկվում է, աշխատող ձեռքերը պակասում: Հազար ու մի հոգսեր են բարդվում գյուղացիների վրա: Նենգ թշնամին սողոսկում է մեր երկրի խորքերը, Հայրենիքը վրտանգի մեջ է, պետք է փրկել նրան: Ռազմաճակատայինները փառքով են պսակում իրենց անունը, իսկ թիկունքը, ինչով կարող է: Պարտիան և կառավարությունը կոչ արին ժողովրդին՝ բազմապատկել իրենց աշխատանքային եռանդը, ամրապնդել թիկունքը, որպեսզի թշնամու ջախջախումը արագացվի: Պարտիայի և կառավարության կողին ջերմորեն արձագանքեցին լեռնաշխարհի մարդիկ, նրանք միահամուռ կերպով կրկնապատկեցին իրենց ուժերը, աշխատանքի լծվեցին կանայք, ծերունիները և մանուկները: Ուսեփը հնձվորների հետ դաշտ է դուրս գալիս, կատարածու տրիբունալ Հաբուլը մասնակցում է բերքահավաքին, բոլորի մեջ եռում է աշխատանքային խանդավառությունը, կոլտնտեսությունը պատվով է կատարում պետական առաջադրանքները և դրանով օգնում ռազմաճակատին, կուլում թշնամու դեմ:

Բայց դրանով չեն սահմանափակվում լեռնաշխարհի մարդկանց բարձր հասկությունները, բոլորը, այդ թվում՝ Ուսեփ ամին նամակներ են գրում ռազմաճակատայիններին, ոգևորում են նրանց և իրենք էլ ոգևորված՝ բարձր են պահում յուրաքանչյուր մարտիկի գյուղում թողած սրտի գանձերը: Ռազմիկներից շատերը գյուղում թողել էին իրենց ծեր մայրերին, շատերը կանանց ու երեխաներին, իսկ մի քանիսն էլ իրենց սիրած աղջիկներին: Գյուղը ոտքի կանգնած օգնում է ռազմաճակատայիններին, բայց ամենից ուշագրավը այն է, որ ողջ գյուղը մի մարդու պես պաշտպան է կանգնում Զիվանու հարսնացուին, և դիմադրում են, որպեսզի «ոչ ոք չհամարձակվի աչք դնել դիմվորի հարսնացուին»:

Սալվինազի 24 տարի պահած այն գաղտնիքը, որ Զիվանը ոչ թե իր, այլ Ուսեփ ամու հարազատ որդին է, և դրա հետ կապված հանգուցի լուծումը հեղինակը տվել է համարձակորեն և

հոգեբանորեն պատճառաբանված: Նույն ձևով էլ նա պատկերում է Ուսեփ ամու հոգեկան ապրումները, երբ նա ամեն առիթով վճռում է Զիվանու առջև բացել իր սրտի գաղտնիքը, բայց միշտ էլ հետաձգում է:

«Միրանաքարի անտառապահը» ժողովածուի ամենաուժեղ և հեղինակի իրեական և գեղարվեստական տեսակետից ամբողջականացրած գործն է:

Ժողովածուի ձախողված գործերից պետք է համարել «Կյանքի քառուղին» պատմվածքը, որի թեմայի կեղծութամբ պայմանավորված է նաև կերպարների կեղծությունը: Այդ կարգի թերություններով հանդերձ, «Միրանաքարը» հանդիսացավ հեղինակի համար կարևոր քննություն, այն ցույց տվեց, որ նա կանգնած է ստեղծագործական ճիշտ ուղու վրա, ուստի հասարակայնությունը ողջունեց գրողի մուտքը հայ գեղարվեստական արձակի ասպարեզ: Անկասկած է, որ Բ. Սեյրանյանը շատ բանով է պարտական հայ կլասիկ նովելի վարպետներին, որոնց ստեղծագործությունները, ինչ խոսք, նա բարեխղճորեն ուսումնասիրել է, յուրացնելով դրանց լավագույն տրագիցիաները:

* * *

1949 թվականին լույս տեսավ Բ. Սեյրանյանի «Լեռնային բլուրեղ» պատմվածքների ժողովածուն:

«Միրանաքարից» մինչև «Լեռնային բլուրեղը» Բ. Սեյրանյանը անցել է դժվարին, բայց գրողի համար ուսանելի, ստեղծագործական բեղմնավոր ուղի: «Լեռնային բլուրեղում» հեղինակը մեր ժամանակի այրող հարցերի լուծմանը մոտեցնում է գեղարվեստական խոսքի նոր հնարքներով, չկրկնելով Բ. Սեյրանյանի «Միրանաքարի» հեղինակին: Եթե «Միրանաքարում» Բ. Սեյրանյանն ընդգրկում է բացառապես գյուղը և նրա մարդկանց, «Լեռնային բլուրեղում» հեղինակին լիքք տվողը մարդկային արտաբնական արտույտությունների ճակատի աշխատողներն են, որոնք անցած հնգամյակների պլանների կատարման համար մղած պայքարում հանդես են գալիս սովետական մարդուն բնորոշ բարձր հատկություններով:

Բովանդակության խորությամբ և գեղարվեստական խոսքի արտահայտչական հնարքներով «Լեռնային բլուրեղ» պատմվածքների ու նովելների ժողովածուն ավելի բարձր է «Միրանաքարից»։ Ընթերցողը հավանություն է տալիս հեղինակի դրական հերոսների վարքագծին, հավատում է նրանց գործու-

որից շահում է վիպակը թե՛ բովանդակության, թե՛ գեղարվեստական տեսակետից:

Այսպես, օրինակ, Վահանի և Արմինեի, Վահանի և Սերգեյ Արկադիչի փոխադրանքներով յուրանների կծիկը բացելիս Սեյրանյանը տեղին էքսկուրս է կատարում՝ տալով նրանց կյանքի բնորոշ դժերը: Ընթերցողը հավատում է Վահանի, որպես պարտկազմակերպության քարտուղարի, ամենավճռական պահերին հավասարակշռությունը պահպանող մարդու գծերին: Այդ գծերը նրա մեջ արմատացել են դեռևս մանկության տարիներին, երբ նա թափառաշրջիկ, բոկոտն որբուկ՝ քաղաքից-քաղաք էր չվում իր գոյությունը պահպանելու համար: Այդ հավասարակշռությունը նա պահպանում է նաև իր առաջին սիրած աղջկա՝ Արմինեի, ինչպես նաև Սերգեյ Արկադիչի նկատմամբ, որին մեղադրում էին իր գյուտը և իրեն հասանելից հոնորարը չտրացնելու մեջ: Մի այլ անձնավորություն կարող էր այլ կերպ վարվել, գործին այլ ընթացք տալ, սակայն Վահանը, այդ կյանք տեսած և կյանք ապրած մարդը, որը շրջապատին ճանաչելու իր պարտիական մոտեցումով տարբերվում էր մյուսներից, հանգույցը ուզում է լուծել խոհեմությամբ, ամենաազնիվ ճանապարհով:

Վահանը ճաշակել է կյանքի բոլոր դառնությունները: Թրժվել է գործարանային կոչեկտիվում, պատերազմի դաժան մարտերում: Նա խորապես ճանաչել է մարդկանց և զգացել, որ ամեն անգամ մարդկայինը պետք է փնտրել ոչ թե՛ վատի, այլ վսեմի մեջ: Նա, ինչպես խաղաղ տարիներին, այնպես էլ պատերազմի դաժան օրերին տեսել է մարդկանց մեջ վսեմը, բարձրը: Դիմելով գործարանի դիրեկտոր Արտավազդ Արսենիչին, Վահանը ասում է. «Նա տեսա մարդկային այնպիսի հատկություններ, որոնց մոտ լեռնային ամենաընտիր բյուրեղը կնստմանար և որոնք ոչ մի դարում, ոչ մի աշխարհում և ոչ մի արևի տակ այնպես պայծառորեն չեն դրսևորվել ու շողողացել ինչպես մեզ մոտ, մեր օրերում, մեր մարդկանց մեջ... Եվ եթե դուք գտնում եք, որ ծանր, դժվարին, անելանելի պայմանները Սերգեյ Արկադիչին կարող էին հրել դեպի թուլություն, դեպի կեղծիք, ապա ինչ ու չեք ընդունում, որ ընդհակառակը, այդ նույն դաժան պայմանները նրա մեջ կդրսևորեին առաքինին, վրսեմը, նվիրականը, որոնք մեր օրերում շատ ավելի մարդկային են, քան թուլությունը»: Եվ ահա հենց այս խոսքից հետո Վահանը պատմում է լրակցաց գինվոր Սանթոքի պատմությունը, որը ռազմաճակատում ամենավճռական մոմենտին

ունակները գոտուց կապած իրեն նետում է հակառակորդի տանկի թրթուրների տակ, գոհվում է, բայց թշնամուն չի թողնում գրավել կարևոր բարձունքը: Վահանը գտնում է, որ Սանթուքը ամենավճռական մոմենտին մարդկայինը գտավ ոչ թե փախուստի, ոչ թե թուլամորթության, այլ անձնագոհության մեջ:

Ամենավճռական մոմենտին մարդկայինը անձնագոհության մեջ էին տեսնում առաջավոր բանվորներ Զակոմուլդինը, Վարդան Գուլյանը, Սկանդալ Իվանիչը, ինչպես նաև Արմինեն, Սերգեյ Արկադիչը: Անձնագոհության, վսեմության մեջ է փնտրում մարդկայինը նաև Լեոն Մուրադյանը, որը կամավոր կերպով մարդաճակատ է մեկնում և հերոսի մահով մեռնում Հայրենի-ռազմաճակատ է մեկնում և հերոսի մահով մարտերում: Երևի ազատության ու անկախության համար մղվող մարտերում:

Ճիշտն ասած, Բենիկ Սեյրանյանը «Լեոնային բյուրեղ» վիպակում ձգտել է տալ հենց այդ բարձր արժանիքներով օժտված մարդկանց պատմությունը: Այդ վիպակը գեղարվեստական մի պոեմ է, որտեղ դրսևորված են ամենավճռական մոկան մի պոեմ է, որտեղ դրսևորված են ամենավճռական մոկան մի սովետական մարդկանց ոչ թե դեպի թուլությունը, այլ անձնագոհությունը դիմող հոգու բյուրեղյա հատկությունները: Մարդկային այդ բարձր հատկությունները ընթերցողը տեսնում է ինչպես ռազմաճակատի, այնպես էլ խաղաղ աշխատանքի բոլոր բնագավառներում գործող մարդկանց մեջ:

Վիպակի բոլոր դրական հերոսները կենդանի մարդիկ են, մենք նրանց հանդիպել ենք և հիմա էլ հանդիպում ենք յուրաքանչյուր գործարանում: Այդ նրանք էին, ու հնգամյակի տարիներին մեր երկիրը գոտևորեցին ծանր ինդուստրիայի գինատներով, այդ նույն մարդիկ Հայրենական պատերազմի տարիներին գիշերը ցերեկ դարձնելով՝ օրնիբուն աշխատեցին մինչև ատամները գինված թշնամու տապալումը արագացնելու համար, և այդ նույն մարդիկ պատմական հաղթանակից լու համար, և այդ նույն մարդիկ պատմական հաղթանակից հետո վերականգնեցին մոխրակուլտի վերածված մեր քաղաքներն ու գյուղերը, կյանքը նորից իր հունի մեջ գրեցին: Հեղինակը այդ պարզ, հասարակ մարդկանց սխրագործություններն առօրյան է նկարագրում, որոնց ինքնատիպ գոյավիճակը ուսանելի շատ բան է տալիս ընթերցողին և ճանաչողական նշանակություն ունի:

Եթե վիպակն ունի թերություն, այդ այն է, որ բացասական կերպարները տրված են գորշ ֆոնի վրա: Մալուխյանի, Սահակյանի կերպարները բնութագրելիս հեղինակը ավելի դափ Սերգեյի կերպարները բնութագրելիս հեղինակը ավելի

շատ դատողութիւններ է անում, քան թույլ տալիս, որ նրանք գործեն և իրենց ստիկերոտ դեմքը ցույց տան գործողութիւնների զարգացման ընթացքում:

* * *

1953 թվականին Հայպետհրատը լույս ընծայեց Բենիկ Աւերախանի «Աղբյուրներ» նովելների և պատմվածքների նոր ժողովածուն, որտեղ բացահայտված են գյուղի և քաղաքի սովետական մարդկանց կյանքն ու նրանց անձնվեր աշխատանքային սխրագործությունները:

Ինչպես նախորդ երկու ժողովածուներում, այնպես էլ «Աղբյուրներում» զգացվում են հեղինակի կողմից յուրաքանչյուր պատմվածքի վրա կատարված լուրջ աշխատանքի հետքերը: Պատմվածքները գրված են խոր յիբիզմով, հարազատ բնաշխարհի գեղեցկությունը վեր հանող հատվածներով, հերոսների հուզաշխարհը դրսևորող կենդանի և սրտառու պատկերներով ու գործողություններով:

Իբրիկական մեծ շնչով են գրված «Քարտաշի սերը», «Գեղանիկ» և «Մեծ աղբյուրը» նովելները, որոնք միաժամանակ բացահայտում են սովետական երիտասարդության փոխհարաբերությունները, նրանց քաղաքական-բարոյական բարձր հատկությունները, աշխատանքի նկատմամբ ցուցաբերած նվիրվածությունը:

Ժողովածուն սկսվում է «Քարտաշի սերը» նովելով: Հեղինակը հանձին երիտասարդ քարտաշ Հուսիկի՝ տալիս է մեր ժամանակի երիտասարդի հոգեբանությունը: Այդ երիտասարդը, ոգեշնչված սիրած աղջկանով, մեկը-մյուսից առավել գեղեցիկ շենքեր է կառուցում Չաղի ձորում, ուր «հազար հավթ է գեղգեղում... հազար աղբյուր կարկաչում, հազար առու խոխոչում: Բայց նրանցից ոչ մեկն այն երգի հմայքը չունի, որ ամեն առավոտ պոկվում է մի ջահել սրտից, տարածվում ձորով մեկ, ողողում անտառն ու նրա սաղարթները գրկած բարձրանում, բարձրանում...»:

Դա ջահել քարտաշի՝ Հուսիկի երգն է, «ջահել սրտի գեղգեղանք, ինքը ջահել, սիրտը ջահել, սերը ջահել: Երկու մուրճ ունի այդ քարտաշը, երկու հրաշագործ մուրճ, մեկն իր ձեռքում, մյուսը՝ կրծքի մեջ:

Մեկով նա տաշում է վարդագույն տուֆաքարը, ձև ու կերպ տալիս, հետո շարում իրար վրա ու կառուցում աննման

շենքեր: Մյուսը նրա կրծքի խորքում գիշեր-ցերեկ, անխոնջ ու անդադրում բանդակում է լուսե պատկերն այն սիրուն աղջկա, որին նա հանդիպեց Չաղի ձորում, որին նա սիրեց Չաղի ձորում և որի սիրուց դյուլված, կառուցում է ու երգում» («Աղբյուրներ», էջ 4—5):

Երազներ ունի քարտաշը, ոսկե երազներ, որոնք պատկանում են ոչ միայն իրեն՝ քարտաշին, այլև բոլորին: Հուսիկը տեսնում է, թե ինչպես Չաղի ձորը գեղեցկանում է, դառնում է սոցիալիստական բանվորական ավան: Նա ապրում էր ոչ միայն ներկայով, այլ Չաղի ձորի ապագայով, երբ հանքախորշում ելումուտ կանեն էլեկտրատարների շարասյունները, ձորի խորքից կբարձրանան ծխի բուլաները, երբ ստեղծարար աշխատանքով տարված, քրտնաթոր դեմքերով մարդիկ կանցնեն նրա փողոցներով և կլսվեն նրանց հեքն ու ոգելից բացականչությունները, այդպիսին էր Հուսիկը, բանաստեղծական հարուստ երևակայությամբ օժտված այդ երիտասարդը, որը հենց այդ բանաստեղծական անզուսպ պաթոսով էլ կառուցում էր վարդագույն շենքեր, նրանց կառուցման և ավարտման հետ կապելով իր սիրավեպի ավարտումը:

«Մեծ աղբյուրը» նովելում ընթերցողն իրեն նորից գտնում է Գուգարքի բնության գեղատեսիլ գրկում, այս անգամ ծանոթանալով կաթնաղբյուրի նման վճիտ Գերասիմի և Այծեմիկի սիրավեպին:

Երկու պատանիները գյուղական դպրոցն ավարտելուց հետո մեկնում են Երևան, որտեղ նրանց մտերմությունը փոխվում է ջերմագին սիրո: «Ուսանողական երեկույթներում, Նորվի աշգիներում, Զանգվի վճիտ ջրերի ափին զարնան ծիծեռնակի նման ծլվում են նրանց ջահել սրտերը» («Աղբյուրներ» էջ 42):

Բայց դա երկար չի տևում: Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը: Սիրող զույգերը մեկնում են ռազմաճակատ, ուր կատաղի մարտերից մեկում զոհվում է աղջիկը և պայծառ հուշ դառնում Գերասիմի համար:

Օրերից մի օր հիվանդանում է Գերասիմը և պահանջում է լեռնաշխարհի այն աղբյուրի ջրից, որի մոտ տարիներ առաջ հանդիպել է իր սիրած աղջկան՝ Այծեմիկին:

Գերասիմը առողջանում է և երբ առիթը գալիս է, նա ընկերներին պատմում է աղբյուրի մոտ զգացած իր մեծ վիշտը, որը կապված էր պատերազմի տարիներին ապրած իր գուպալ սիրավեպի հետ:

Իր հարազատ լեռնաշխարհի բնությունը և մարդկանց հուզաշխարհը նկարագրելիս Սեյրանյանը սիրում է սավառնել պաթեռիկ հուզականության ոլորտներում, և այդ ավելի քան զգացվում է «Մեծ աղբյուրը» կտավում: Դա որքան էլ ոտմանա-տիկ գունավորում է տալիս նովելին, գեղեցիկացնելով նրա մեջ եղած նկարագրականը, նույնքան էլ վնասում է նովելի ռեալականությանը, որից պետք է խուսափի հեղինակը, որովհետև այդ լիբրիկական շեղումների մեջ աղոտանում է կենդանի մարդը:

Նույնը կարելի է ասել նաև «Գեղունիկ» նովելի մասին: Հարուստ բովանդակություն ունեցող այդ կտավում հեղինակը մարդկանց փոխհարաբերությունները գրեկտրում է բունաղբյուրի իրադրության մեջ, որից տուժում է նովելի ռեալիստականությունը: Այսպես, օրինակ, հրաշալի է տրված լեռնաշխարհի գյուղի այսօրը, որը հակադրված է քաղցի ճիրաններում գալարվող ու խարխափող հին գյուղին, սակայն, երբ ուզում է նոր, բարեկեցիկ կյանքով ապրող մարդկանց հույզերի կծիկը բացել, փոխանակ նրանց փոխհարաբերությունները ռեալ իրականության մեջ տալու, հեղինակը շինծու կերպով Սուրենին տեղափոխում է ապագա մեծ կառույցները, որից հետո նրա սիրած աղջիկը՝ Սոնան հնարավորություն է ստանում կապվել Սուրենի հետ: Անբնական է նաև որսկան Հակոբի համառությունը Սուրենի հանդեպ:

«Աղբյուրներում» ռեալիստորեն են տրված «Դաժան ափեր» և «Ռուսական սիրտը» վիպակները:

«Դաժան ափեր» գրվածքում հեղինակը շոշափում է ետպատերազմյան կապիտալիստական Ամերիկայի բարքերն ու աշխատավորների խաղաղության համար մղվող պայքարի դրվագները: Չնայած հեղինակը չի տեսել Ամերիկան, բայց այն դաժանությունը, որը ամերիկյան ռեակցիոն ուժերը գործադրում են աշխատավորների և մասնավորապես նեգրերի նկատմամբ, տրված է այնքան ռեալ պայմաններում, որ պատմվածքը կարողացվում է առանց ձանձրուլի: Գործողությունը կատարվում է հեռավոր Միսսիսիպիի ափերին, ուր գտնվում են միսսոր Դեխիսի կալվածքն ու բամբակի, ծխախոտի պլանտացիաները, որտեղ օրն ի բուն աշխատում են նեգրերը: Ուժեղ են տրված դաժան Դեխիսի և նրա վերակացուի կերպարները, սրտառուչ են գրված հալածված նեգր, ծեր Կլեմիսի ու հայ ընտանիքների պատմության էջերը: Հաջող են տրված փոքրիկ նեգրի՝ Ուիլիսի հայ երիտասարդի և միսսոր Դեխիսի եղբոր աղջկա՝ Ջեննիի կեր-

պարները: Հանձին կոննի հեղինակը բացահայտել է խաղաղության համար պայքարողներից մեկին, որը պատերազմի տարիներին մի ձեռքը կորցնելուց հետո, ամեն տեղ անարդարությունների հանդիպելով, բռնում է միլիոնների ուղին, որոնց զաղափարական դրոշակի վրա գրված է—կորչի պատերազմը, խաղաղություն խրճիթներին: Պատմվածքը ընթերցողի մեջ առաջ է բերում ատելություն դեպի ամերիկյան բարքերը, համակրանք հասարակ մարդկանց նկատմամբ:

«Ռուսական սիրտը» պատմվածքի թեման նորություն չէ, բայց որովհետև հեղինակը երևույթները, գործողությունները օժգրագացրել ու հանգույցները լուծել է յուրովի, պատմվածքը օտարվել է որոշ արժանիքներով: Հեղինակին հաջողվել է ստեղծել ռեալիստական ճշմարտապատում մի գրվածք, որտեղ շոշափված են ռուս-հայ ժողովուրդների բարեկամության գաղափարը, սովետական մարդկանց վարքագիծը և բարոյական բարձր հատկությունները:

Դովլաթյանների ընտանեկան խաղաղությունը խախտվեց, երբ պատերազմի տարիներին կորցրին տանկիստ որդուն: Այնուհետև նրանք որդեգրում են Երևան կայսրանում ծնողներին կորցրած փոքրիկ Պավլիկին, որը օրեցօր տեղ էր գրավում ամուսինների սրտերում: Պատերազմի ավարտվելուց հետո գտնվում են Պավլիկի ծնողները, որ խիստ ազդում է Դովլաթյանների վրա, ոչ թե Պավլիկի ծնողների երևան գալու, այլ երեխայից զրկվելու իմաստով, որին նրանք մերվել էին ծնողական սիրով և նրանց համար դժվար էր անջատվել Պավլիկից:

Գործարանի դիրեկտոր Արամ Դովլաթյանը ժամանակին հայտնում է ուր հարկն է, և Պավլիկի հայրը՝ Սուրվյուլը գալիս է Երևան: Այցելելով Դովլաթյաններին, Սուրվյուլը տեսնում է, որ երեխան ջերմորեն կապված է Դովլաթյանների հետ, վերադառնում է Լենինգրադ՝ հարցի վերջնական լուծումը թողնելով Պավլիկին և կնոջը:

Սակայն Սուրվյուլը երկար, շատ երկար խորհելուց հետո է երեխային թողնում Դովլաթյանների տանը:

«—Այս մի շաբաթվա ընթացքում, — ասում էր Սուրվյուլը, — ես լիովին զգացի, թե դուք ինչպես եք կապված Պավլիայի հետ, թե նա ինչպես է կապված ձեզ հետ: Ես այդ ամենի մասին կպատմեմ իրենային. նա խելոք է, նա ապրած մայր է և կհասկանա ինձ: Դուք չկարծեք, թե խմբագրությունը նամակ ուղարկելիս մենք չենք մտածել

Պավկային որդեգրողներին՝ նրան 7 տարի պահպանողներին մասին: Ոչ, հանցանք կլինեք շատածեյ: Միայն ծալրահեղ էգոիստը կարող էր այդպես անել: Մենք մտածել ենք, մի քիչ էլ... խոսել, Պավկայի կողմից ես ոչինչ չեմ կարող ասել, Իրինայի կողմից՝ նույնպես, որովհետև կվերադառնամ Լենինգրադ, կխոսեմ նրա հետ, իսկ իմ կողմից՝ բոլոր սըրտով երջանկություն եմ ցանկանում ձեր ընտանիքին: Միայն թե՛ երկու պայման՝ Սերգեյ Արամիչ: Դրանցից մեկն այն է, որ Պավկան պետք է գիտենա իր իսկական ծնողներին, ոչինչ գաղտնիք չպիտի մնա նրանից: Եվ հետո՝ մեր երկու ընտանիքների միջև պետք է ստեղծվի ամենաշեղծ բարեկամություն: Հեռավորությունը մեզ չի խանգարի այդ բանն ասել, քանի որ մենք կունենանք Պավկայի պես մի զորեղ կամուրջ: Ես ձեր ուս եղբայրը այնտեղ՝ Լենինգրադում, դուք իմ հայ եղբայրը այստեղ՝ Երևանում: Համաձայն եք, տվեք ձեր ձեռքը...»:

Սերգեյ Արամիչը ամուր սեղմելով Սոլովյովի ձեռքը, բաշում է դեպի իրեն և ցերմորեն ողջագուրվում են:

«— Ծնորհակալ եմ, Լեոնիդ Անդրեևիչ, անշափ երախտապարտ եմ, — Սոլովյովի գրկից անջատվելուց հետո հուզաթափավ ձայնով խոսեց Գովլաթյանը: — Այդպիսի մեծ ու բարի սիրտ ուս մարդը կարող է ունենալ: Եթե նույնիսկ Պավկան շմնա էլ մեզ մոտ, ձեր մեծ ու հզոր սրտի բարեկամությունը բախտավորություն է ինձ համար»:

Ընթերցողին էլ բան չի մնում: Այստեղ ավարտվում է պատմվածքի իդեան, որի բացահայտմամբ շեղմորեն տրված է ուս և հայ ժողովուրդների դարավոր բարեկամության ուժը, ուս ժողովրդի անզնահատելի ծառայությունները, նրա մարդկային մեծ կարողությունները, որոնց մասին դեռևս 100 տարի առաջ այնքան սրտառուչ կերպով խոսում էր հայ գրականության և գրական լեզվի հիմնադիր և շաշատուր Աբովյանը:

Թերևս շատ - շատերի համար Բ. Սեյրանյանի այս պատմվածքը համարվի արհեստական, ոչ բնական, բայց կյանքը ցույց տվեց, որ նման երևույթներ ոչ միայն կարող են լինել, այլև եղել են: Հեղինակը բազում եղելույթներից վերցրել է մի գրվագ և այնտեղ դրսևորել է մարդկային կենդանի միջավայրը և նույնքան կենդանի, զեղարվեստորեն ամբողջականացված կերպարները: Ժամանակին մամուլը բարձր գնահատեց Բ. Սեյրանյանի այդ գործը, գտնելով, որ հեղինակին հաջողվել է հիանալի մարմնավորել գաղափար

րական մտահղացումը և ռեալիստական՝ ընդհանրացումներ կատարել: Պատմվածքը շեղմ ընդունելություն գտավ ոչ միայն հայ, այլև ուս, վրացի ընթերցողների կողմից:

* * *

Մաքսիմ Գորկին երեխաների համար պատմվածքներ գրելիս իր աշխատանքը կառուցում էր՝ ելնելով ՍՄԿՊ կենտկոմի գիրեկտիվներից: Սոցիալիստական ռեալիզմի հիմնադիրը ակտիվ կերպով առաջ էր քաշում սովետական մանկական գրականության զարգացման, հետագա աճման հիմնական հարցերը, նա առաջինն էր, որ ցույց տվեց այն ուղիները, որոնցով պետք է ընթանան մեր ժամանակակից մանկական գրողները:

Գորկին խորապես հավատում, սիրում և գիտեր իր միլիոնավոր պատանի ընթերցողներին: Որպեսզի երեխաները դաստիարակվեն և դառնան համաշխարհային պրոլետարիատի ակտիվ գործիչներ, նա գտնում էր, որ գրողները պարտավոր են մանուկներին փոքր հասակից զինել անհրաժեշտ գիտելիքների ամբողջ ուժով՝ հին կենցաղի պահպանողականությանը, բարացած, քաղթենիական միջավայրի ազդեցությանը դիմադրելու համար:

Մանուկների համար գրքեր գրելն այնքան էլ հեշտ գործ չէ: Մանկական գրողը պետք է լավ ճանաչի պատանի հեղինակը, գրի պարզ, մառչելի լեզվով, զեղարվեստական լուսին, գրի պարզ, մառչելի լեզվով, զեղարվեստական պատկերները պետք է լինեն համոզիչ, գրվածքը շողախաված պետք է լինի այնպիսի ներդաշնակություն, որ պատանի ընթերցողը հավատա հեղինակի յուրաքանչյուր բառին, մտքին, նախադասությունը:

Բենիկ Սեյրանյանը մեկն է մեր այն արձակագիրներից, որոնց համար մանկական գրականությունը զբաղվելը ոչ թե ժամանց, այլ ստեղծագործական անհրաժեշտություն է: Հեղինակը իր գրական առաջին քայլերն սկսել է մանկական «Կարմիր ծիլեր» ամսագրում զետեղելով իր փոքրիկ պատմվածքները, հեքիաթները և առակները: Նա աշխատակցել է նաև «Հոկտեմբերիկին», «Պիոներին»: Մանկական մի շարք պատմվածքներ են տպագրվել «Ավանգարդում» և այլն: Նրա պատմվածքների ժողովածուների մոտ կեսը տպագրվել է ՀԿԵՄ Կենտկոմին կից մանկապատանեկական գրականության բաժնի կողմից: Հեղինակի «Արյան գիմաց արյուն»,

«Հանդիպում», «Տոնածառ» մանկական պիեսները ժամանակին բեմադրվել են Քբիլիսիի պատանի հանդիսատեսի հայկական և վրացական թատրոններում: Պատանի ընթերցողները և հանդիսականները մեծ հաճույքով ընդունեցին Բ. Սեյրանյանի պատմվածքներն ու պիեսները, որոնց մեջ բացահայտված են մեր գրականության այրող հարցերը, այն է՝ երիտասարդությանը աշխատանքի նկատմամբ սիրո, առույգության, անվահերքության, մեր գործի հաղթանակի նկատմամբ վատահույսության, սոցիալիստական Հայրենիքի նկատմամբ անսահման նվիրվածության ոգով, պատերազմի հրձիգներին, իմպերիալիստական ազդեցություններին խորտակիչ հակահարված տալու մշտական պատրաստակամության ոգով դաստիարակելու հարցերը:

Պատանի ընթերցողները լավ են հիշում «Ծաղկած հուշարձան» պատմվածքների ոչ ստվար, բայց բովանդակությամբ հարուստ ժողովածուն, որտեղ կենդանի, սրտառու և հուզիչ կերպով տրված են Հայրենական Մեծ պատերազմի լեգենդար դուստրի, Սովետական Միության Հերոս գնդապետ Լևոն Դարբինյանի մարտական սխրագործությունները: Ժողովածուի աղն է կազմում «Կրողական» պատմվածքը, որի մեջ ընթերցողը տեսնում է պատանի ուսու մարտիկի կյանքի հայրենասիրական դրվագները: «Շեկ մազերով, կապույտ աչքերով, կոծակի պես կլոր քթով փոքրիկ տղան» մեր պատանի ընթերցողների սիրելի հերոսներից մեկն է:

Պատմվածքում Կրողական անունով հայտնի փոքրիկ Ֆեդյայի մորը ֆաշիստները սպանում են երեխայի առաջ, հայրը պատերազմի սկզբից ռազմաճակատումն է: Նրան որդեգրում է Դարբինյանի պիսավորած գունդը, նա դառնում է խիզախ կապավոր, հետախույզ, իր երգեցիկ ձայնի տվյալներով գնդի բոլոր մարտիկների սիրելին: Ֆեդյայի սխրագործությունները հայտնի էին շուրաքանչյուր մարտիկի, նա առաջին իսկ օրը մեծ ծառայություն մատուցեց գնդի հրամանատարությանը ցույց տալով ֆաշիստական ոհմակի որջը: Նա «ասեղի պես ծակում ու անցնում էր թշնամու դիրքերով, շղիկի պես դուրս էր թռչում լարափակոցների միջից: Չէր վախենում ոչ մի կենդանի գիշերներից, ոչ ահավոր անտառներից. նեղանում էր, երբ իր վրա նայում էին որպես փոքրի, միշտ ինքն էր նոր առաջադանք խնդրում: Չնայած իր վտիտ մարմնին, Կրողական շափազանց դիմացկուն տղա դուրս եկավ. ցեխն ու անձրևը, օրերով երթը՝ կամ անքուն մնալը նրա համար սովորական բաներ էին: Այդ

խելոք ու հնարամիտ պատանին զորամասի հրետանավորներին շատ անգամ էր փրկել մահվան վտանգից» («Ծաղկած հուշարձան» էջ 8—9):

Պատմվածքում հուզիչ է տված այն տեսարանը, որտեղ պատանի Կրողական երգում է հիվանդների համար: Այդ պահին պալատի մի ծանր հիվանդ մոտենում է դռանը, բայց չհասած՝ ուշաթափ ընկնում է: Հետագայում գնդապետը իմանում է, որ այդ հիվանդ մարտիկը Ֆեդյայի հայրն է: Գնդապետը ուզում է հարմար առիթով երեխային նորից տանել հոսպիտալ հորը հանդիպելու համար, սակայն երբ նրանք հասնում են հիվանդանոցին, տեսնում են վերջինս ավերակ վիճակում: Ֆաշիստական ռմբակոծիչները շարքից հանել էին հիվանդանոցը և մոխրտուկույտի վերածել: Փլատակների տակ երևում էին փոշոտված անկողինների, մարդկային մարմինների արյունոտ ծվեկներ:

«Ու թեև Դարբինյանը գիտեր, որ Ֆեդյան ավելի ցնցող տեսարանների է ահանատես եղել, բայց չգիտես ինչու, նա չուզեց, որ պատանին այս մեկն էլ տեսնի: Գնդապետն իր դողահար ափով իսկույն փակեց նրա դեմքը, պատանու գլուխը ամուր սեղմեց իր կրծքին և շոֆերին կարգադրեց մեքենան ետ շրջել»: (Նույնը, էջ 21):

«Զուպարանի կրակները» պատմվածքների ժողովածուում Բ. Սեյրանյանը շոշափում է ժողովուրդների բարեկամության («Բարեկամություն»), ընկերասիրության («Ընկերները»), արտագրության մեջ երիտասարդության դերի («Զուպարանի կրակները»), «Գործարանի պատիվը» թեման, ինչպես նաև պատանի բնասերների աշխատանքային փորձը: 1955 նաև պատանի բնասերների աշխատանքային փորձը: 1955 թվականին լույս տեսավ հեղինակի «Տանը և դպրոցում» մանկական պատմվածքների ժողովածուն, որը նվիրված է երեկաների՝ տանը և դպրոցում կատարած աշխատանքին:

Բ. Սեյրանյանը այդ նոր գրքում շոշափում է ընկերասիրության, փողոցի ազդեցության տակ մի խումբ երեխաների բուրժուազարքերը դպրոցական և պիոներական առողջ կուլեկտիվների ջանքերով վերացնելու հարցերը: Երեխաները զղջում տիվների ջանքերով վերացնելու համար և սոցիալիստական հուն են իրենց վատ արարքների համար և ազդեցությամբ դարձի մանիգմի, կոմունիստական բարքերի ազդեցությամբ դարձի մանիգմի, կոմունիստական բարքերի ազդեցությամբ դարձի մանիգմի: Հեղինակը սկզբից մինչև վերջ ընդգծում է հնի, քաղաքի հիստության սովորատ կողմերը և նորի, առաջավորի, կոմունիստական բարձր գաղափարների ազդեցությունը երեխաների վրա:

Հեղինակը շոշափում է նաև ընտանիքի և երեխաների, դպրոցի և ընտանիքի, արտագրության և դպրոցի հետ կապված հարցերը:

Փողովածուում իր ծավալով աչքի է ընկնում «Իսկական ընկերը» պատմվածքը: Հեղինակը 6-րդ «բ» դասարանի առօրյա կյանքի նկարագրության ֆոնի վրա ցուցադրում է աշակերտների փոխհարաբերությունները: Գործողությունները զարգանում են սրբնթաց: Ինտրիգան զարգանում է, մի կողմից, Ռազմիկի և նրա համախոհների, մյուս կողմից՝ Գարուշի և նրան համակրողների միջև: Այդ երկու աշակերտների և նրանց կողմնակիցների բախումները, հոգեկան տատանումները տրված են ռեալիստորեն: Հեղինակի նպատակադրումը առողջ է ու այժմեական, պատմվածքի առաջին էջից դասարանը լարված վիճակումն է: Գարուշը իր սխալ հուշումով անհարմար վիճակի մեջ է գցում Սուրիկին, որը մինչ այդ ուսուցչի հարցերին պատասխանում էր համարձակորեն: Չիհներ Գարուշի «կատակը», չէին հուզվի Սուրիկը, դասդեկ Անահիտ Գասպարյանը, չէին հուզվի դասարանի մյուս աշակերտները, որոնք պահանջում էին, որ Գարուշը խոստովանի իր հանցանքը: Գարուշը կամակորուսվում է անում, լինելով դյուրագրգիռ երեխա, նա ստորություն է համարում բոլորի առջև ներողություն խնդրել Սուրիկից, ուստի հակադրվում է ամբողջ դասարանին, դպրոցին: Առաջին հայացքից Գարուշի քայլը, նրա հոգեկան պայթարը, եսասիրությունը թվում են անբնական: Հեղինակն զգում է այդ, ուստի հերոսի արածը պատճառաբանելու համար նրան ներկայացնում է իր ամբողջ էությունը: Գարուշը կապված է զրսի ընկերների հետ, որոնք իրենց օրը անց են կացնում բիլիարդանոցում և դարեջրատանը: Գարուշը մեծ հաճույքով է ընկերակցում նրանց, վայելում նրանց հյուրասիրությունը զարեջրատանը, բիլիարդ է խաղում նրանց հաշվին: Բայց նրա ինքնասիրությունը մի օր նրա սրտին թելադրում է, որ պետք է ինքը ևս ինքնուրույն կերպով հյուրասիրի ընկերներին: Բայց ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով: Նա ծրագրում է իր հասակին անվայել գործողությունների մի շարան, բայց սթափվում է... Գարուշը զգում է, որ ինքն արդեն խաղալիք է դարձել խուժանների ու նրանց ղեկավար՝ ձեկոյի ձեռքին: Դուրս գալ այդ շրջապատից դժվարանում էր, վերադառնալ դպրոցական ընկերների մոտ՝ ինքնասիրությունը թույլ չէր տալիս: Տանջվում է Գարուշը, և նրա այս

ծանր ապրումների մեջ ընթերցողն զգում է, որ երեխան դեռ կորած չէ, կարող է փրկվել: Գարուշին փրկում են դպրոցական ընկերները, որոնցից նա խույս էր տալիս: Պատմվածքն ավարտվում է իսկական ընկերների հաղթանակով:

Բնեկի Սեյրանյանը Գարուշի դարձը և հոգեկան ծանր ապրումները պատճառաբանելիս մերկացնում է ընտանեկան դաստիարակության մեջ տեղ գտած քաղքենիական սովորությունները, արտագրության առաջավորների դեպի երեխաներն ու դպրոցն ունեցած օտարոտի վերաբերմունքի փաստերը, ընդգծում, որ երեխաների դաստիարակության հարցերը ոչ միայն դպրոցի և ուսուցչի, այլև բոլորի, սովետական հասարակության, ընդհանուրի գործն է: Ահա այն առողջ մտահղացումը, որը հետապնդում է հեղինակը, որից և շատ բան է շահում ընթերցողը:

«Զղջում» պատմվածքում հեղինակը ցույց է տալիս դպրոցից դուրս տանը և բակում երեխայի ապրած առօրյան, և դրա նկարագրության ֆոնի վրա, մանկան հուզաշխարհը: Պատմվածքն ունի խրատական բնույթ և խոշոր դաստիարակչական նշանակություն մեր պատանի ընթերցողների համար:

Փայլակը, որին սիրում էին ամբողջ բակի բոլոր բնակիչները և դոնապան Ասատուրը, որքան մեծանում, այնքան անտանելի է դառնում իր ամենօրյա շարժման շարժումները:

- Ո՞վ կտորեց ապակին:
- Փայլակը...
- Ո՞վ պոկեց ճյուղը:
- Փայլակը...

Շատերը համոզված էին, որ երբ Փայլակը դպրոց հաճախի, իսկույն կփոխվի: Բայց դպրոցն էլ չօգնեց: Փայլակի բոլոր անկարգություններից ամենավատը դոնապան Ասատուրի գլխին սարքած «կատակն» էր, որ որքան վայրկենական զվարճանք, նույնքան էլ փոթորկահույզ ցնցումներ պատճառեց Փայլակին:

Երեխան զվարճության համար՝ պարտեզում քնած Ասատուրի վերմակի տակ մտցնում է ռետինե խողովակը, և ջուրը լցնում է դոնապանի անկողինը: Ասատուրը թոքերի բորբոքում է ստանում: Նրան տանում են հիվանդանոց: Բոլորը հուզվում են. բայց ամենից շատ տատապում է հանցագործ Փայլակը:

Փայլակը ամեն օր հաճախում է հիվանդանոց, նրա հուշումները կրկնապատկվում են հիվանդի ճգնաժամի օրերին:

Այստեղ հեղինակը ճիշտ է տալիս երեխայի հոգում ժամ առ ժամ ուռճացող խոտվահույզ փոթորիկը, առավել ևս Տիգրան Տիգրանիչի առաջ նրա անկեղծ խոստովանությունը: Երբ Փայլակը Տիգրան Տիգրանիչի միջոցով իմանում է, որ Ասատուրի կյանքը փրկված է, նա իրեն թեթևացած է զգում: Երևիսան ծերունի գրողից բաժանվում է թեթևացած: Բակով անցնելիս Փայլակը լքելով որսում էր մաղվող փաթիլները և մի այնպիսի հաճույք զգում, ինչպիսին նա երբեք չէր զգացել»:

Փայլակի խոստովանության հիման վրա Տիգրան Տիգրանիչը գրում է մի պատմվածք, որն ըստ իր սովորության կարգում է բակի երեխաների և առողջացած Ասատուրի ներկայությամբ: Բացվում է կծիկը: Փայլակը բոլորի առաջ կըշտամբում է իրեն և խոստանում, որ էլ նման «կատակներ» չի անի: «Կատարելուց առաջ միշտ մտածեցեք հետևանքի մասին» — պատմվածքի շուրջը տեղի ունեցած զրույցը եզրափակում է Տիգրան Տիգրանիչը: Այդ երեկո երեխաները, և այդ թվում Փայլակը, ուսանելի շատ բան ստացան: Եվ ոչ միայն նրանք: Բենիկ Սեյրանյանի «Ձղջում» պատմվածքը կարգացող մեր բոլոր դպրոցականներն էլ շատ բան կսովորեն: Եվ այդ է հեղինակի հաջողությունը, պատմվածքի առավելությունը:

Ժողովածուի մեջ գեղարվեստական ընդհանրացում չի գտել «Հայրը» պատմվածքը. այստեղ մտացածիրը գերակշռում է: Գա ինքնին թուլացնում է տպավորությունը: Պատմվածքում դժգույն են տրված նաև ուսուցիչների կերպարները, ավելի շուտ՝ չի զգացվում նրանց դաստիարակչական ուժը: Եվ Աշխեն Գաբրիելյանը («Հայրը») և Անահիտ Գասպարյանը չեն դրսևորում սովետական ուսուցչի հոյակապ կերպարը: Այդ թերություններով հանդերձ՝ ժողովածուն մի համեստ նվեր է մեր պատանի ընթերցողներին:

Մանկական պիեսներից հիշատակության արժանի է «Հանդիպումը», որտեղ հեղինակը տալիս է Հայրենական Մեծ պատերազմի օրերին պիոներ - թիմուրականների խելացի, անձնվեր և հերոսական աշխատանքը: Պատանի թիմուրականների հայրենասիրական սխրագործություններին առընթեր պիեսում բացահայտված են թիկունքում անձնագոհ կերպով աշխատող կոլտնտեսականները և բանվորները, որոնք այդ

ահեղ օրերին ցուցաբերեցին դեպի Հայրենիքը տածած իրենց անկեղծ նվիրվածությունը և զոհունությունը:

Պատանի թիմուրականների ծավալուն շարժումը Հայրենական պատերազմի օրերին մեծ ալիքով ընդգրկեց Սովետական Միության բոլոր դպրոցականներին, հայրենասիրատական հրդեհ առաջ բերեց նրանց փոքրիկ, բայց քաջարի սըրտերում: Թիմուրականները պատերազմի հենց առաջին օրից կոչ էին անում բոլոր դպրոցականներին՝ օգնել կոլտնտեսություններին բերքահավաքի ժամանակ, օգնել գործարաններին, ֆաբրիկաներին, անհրաժեշտ բանվորական ուժ տրամադրելով և այլն: Ահա այդպիսի մի օրինակելի նախաձեռնություն են ցուցաբերում «Հանդիպում» պիեսի պատանի պիոներ-թիմուրականները, որոնք դիմում են բոլոր պիոներ-դպրոցականներին՝ միջոցներ հավաքելու ուժեղացնելու համար: Որպես գործի նախաձեռնողներ, նրանք մեկ-ցելու համար: Որպես գործի նախաձեռնողներ, նրանք մեկ-ցելու են գյուղ, աշխատում են «Ավանգարդ» կոլտնտեսությունում, իրենց աշխօրերից ստացած եկամուտը մուծելով «Ձոյայի» անվան ուժեղացնելու ընթացիկ հաշվում: Պատանի թիմուրականների հետ է նաև էվակուացիայի ենթարկված վալերի Զիպցովը: Վալերիին որդեգրել է երկաթուղային բանվոր վարպետ Մինասը:

Հեղինակը տալիս է թիկունքի հայրենասերների կողմից դեպի այն երեխաները ցուցաբերված հայրական հոգատարություն փայլուն և սրտառու մոմենտները, որոնց ծրարողները զոհվել են գերմանական զավթիչների դեմ մղված պայքարում:

Պիեսում ցույց է տրված ֆաշիստական գործակալ՝ գյուղատնտես Դեկոյանի սև աշխատանքը: Նա զբաղվում է վնասարարությամբ և հակասովետական պրոպագանդայով, թիմուրականներն իրենց աշխրջությամբ դիմակազերծ են անում ֆաշիստական գործակալին, որն ի դեպ, բաղաձուլ էր լիցիտացիայի հայրը, կասկածի մեջ զցելով վալերիի ընկերներին: Որինական հայրը, կասկածի մեջ զցելով վալերիի ընկերներին: Վալերին վերջում պատահական կերպով իր հոր տեսնում է հոսպիտալում, որտեղ պատանի թիմուրականներն իրենց ուժերով կազմակերպել էին համերգ վիրավոր մարտիկների համար:

Ժամանակին այդ պիեսը բնագործից թրիլսի պատանի հանդիսատեսի թատրոնում և ջերմ ընդունելություն գտավ

հանդիսականների կողմից: Պիեսը թարգմանվեց վրացերեն
և բեմադրվեց պատանի հանդիսատեսի վրացական թատրոնի
կողմից:

* * *

Բենիկ Սեյրանյանը աճող գրող է. նա չի բավարարվում
ձեռք բերածով, նա հոտ չի մնում կյանքից և իր ամբողջ էու-
թյամբ ապրելով մեր գեղեցիկ իրականությունում և նույնքան էլ
ավելի գեղեցիկ ապագայով, այսօրվա մեր իրականության
հաջողությունների գիրքերից նայում է պայծառ գալիքին: Այ-
այն, ինչ նա տվել է երեկ և այսօր, մենք սիրով ընդունում
ենք և նրան ցանկանում հաջողություն մեր վաղվա իրակա-
նությունը երգելու և մարդկանց դրսևորելու ասպարեզում:

1955 թ.

Թրիլիսի

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՅԱՆ

Հովհաննես Կարայանը վրաստանի սովետահայ խոս-
տամնալից պոետներից մեկն է: 1948 թվականին լույս տե-
սավ նրա «Հայրենական», իսկ 1956 թվականին՝ «Սլացում»
բանաստեղծությունների ժողովածուները, որտեղ երևում են
պոետի լիրիկական շունչն ու կորովը, երևույթներն անմիջա-
կանորեն ընկալելու և պատկերավոր վերարտադրելու կարող-
ությունները:

Կարայանի բանաստեղծությունների թեմատիկան լայն ու
խորունկ է, պոետը շնչում է մեր առօրյայով, քայլում է կյան-
քին համընթաց, նրա անհատական խոհերը, ներքին զգաց-
մունքները, սովետական երջանիկ ներկայի և է՛լ ավելի պայ-
ծառ ապագայի՝ կոմունիզմի նկատմամբ տածած առողջ ա-
կրնկալությունները համահնչուն են մեր օրերին:

Կարայանն ունի ուրույն պոետական լատենվածք:
«Սլացում» բանաստեղծությունների ժողովածուն դրա լավա-
գույն ապացույցն է: Ժողովածուում զետեղված բանաստեղ-
ծությունները բովանդակությամբ և գեղարվեստական պատ-
կերավոր խոսքի հնչեղությամբ ցույց են տալիս պոետի գա-
ղափարական-քաղաքական հասունությունը, սոցիալիստա-
կան ռեալիզմի մեթոդին տիրապետելու նրա ջանքերը:

«Սլացում» ժողովածուն բացվում է «Ազատության օրո-
րան» բաժնով, որտեղ զետեղված բոլոր ոտանավորներում
զղացվում է հեղինակի՝ Հայրենիքի, սովետական մարդու,
Կոմունիստական պարտիայի նկատմամբ տածած անկեղծ
սերն ու նվիրվածությունը: Կարայանի համար ամենից թանկն
ու վսեմը սոցիալիստական Հայրենիքն է ու Կոմունիստական
պարտիան: Երկուսն էլ հոգում են սովետական մարդու աճ-
ման, նրա բարօրության, ազատության ու հարատև խաղաղ
կյանքի մասին: Իրոք, որ ազատության օրորան է մեր Հայրենի-
քը, գոչում է պոետը: Այդ նա՝ մայր Հայրենիքն է տվել պոե-

տին թե՛ լեզու, թե՛ ձայն, իր լայն գրկի մեջ փայփայել նրան,
լսել պոետի առաջին կանչը, մտահոգացումը: Հայրենի երկիրն-
քը պոետի ձայնին պարզեցել է թևեր, և այդ ձայնը շանթերի
հետքով որպես մի արծիվ ճախրել է թևեղ, հայրենի ծովերը պո-
ետի ձայնին տվել են կովի շունչ, արևածագից մինչև մայրա-
մուտ ձգված ստեպաները՝ իրենց հոգու լայնությունը լուրթի,
ժողովուրդը իր լույս տենչերի, խոհերի ու բազմամյա պայ-
քարի փորձով իմաստավորել է պոետի խոսքը, իսկ Կոմունիս-
տական պարտիան իր ամենօրյա հոգատարությունը բանաս-
տեղծի երգին տվել է խրոխտություն, հզորություն: «Ազատու-
թյան օրորան» բաժնում ղետեղված յուրաքանչյուր բանաս-
տեղծության մեջ զգացվում է Հայրենիքի ու պարտիայի՝ դե-
պի պոետը, սովետական մարդը ցուցաբերած շերմությունը,
հարազատությունը:

Բայց կարճ էր ազատության օրորանը ազատ շնչել, ե-
թե պարտիան գինված շիներ իր ստեղծողի՝ անմահ Լենինի
վեհ գաղափարներով, որը լուսավորում է Հայրենիքի և պար-
տիայի ուղին, նրանց տանում հաղթանակից հաղթանակ: Պո-
ետը առանձին սիրով ու հավատով է ներշնչված Լենինի գա-
ղափարներով և ինչպես ժողովածուի առաջին՝ «Անմահու-
թյուն», այնպես էլ մյուս բանաստեղծություններում, մենք
տեսնում ենք Լենինի գաղափարների խոր ազդե-
ցությունը:

Անմահ է Լենինը, որովհետև անմահ է նրա ծնող սովի-
տական ժողովուրդը, անմահ է Լենինի գաղափարները, որովհետև անմահ
է նրա ստեղծած Կոմունիստական պարտիան, որն անշեղորեն
ընթանում է Լենինի գծած ուղիով: Լենինը ամենուրեք հայրե-
նական հող ու ջրից անբաժան, հայրագործով ժպտում է մեզ,
թեպետում, լիցք տալիս ու առաջնորդում է դեպի կոմու-
նիզմ:

Կանգնած է նա որպես արձան լուսակերտ,
ճակատը բաց խոսք է ասում... ու կրկին
Հզոր ձեռքը աստղի նման հնգաթև
Պարզել է վառ, երջանկաշող գալիքին...
Լենին՛ն, — հա՛, ամենուրեք՛ք, ամեն ժամ, —
Գործարանում, ծով արտերում, թե հանքում —
Նույնքան հզոր, անպարտելի, անսասան՝
Իր բանակն է գործում անդու ու արթուն:

Բանակն իր՝ հզոր պարտիան Լենինյան,
Որ փրկարար ձեռք է մեկնել աշխարհին,
Այդպես, մի օր, խաղաղ կոչը Լենինյան
Շողա՛ց, ինչպես արևի շողն առաջին...
Լենին՛ն... այո՛, պարտիայի հետ անսասան
Կանգնած է նա՛, դարի սիրտն ու միտքը վառ,
Նա՛ է խոսում, և աշխարհին ասում այն,
Ինչին այնպե՛ս, այնպե՛ս ծարավ է աշխարհ...:

Կարայանը նույնպիսի սիրով երգում է Կոմունիստական
պարտիային («Պարտիան մեր մեծ»), որի կամքով «անապատ-
ներն էլ կյանքով փոթորկում՝ ծովեր են ծնում...», պարտիան
սովետական ժողովրդի առաջնորդն է, նա Հայրենիքի և ժողո-
վրդի բարօրության համար չի փնտրում անդորր, քանի որ

Հաղթանակից ետ՝ կրկնակի համառ
Նետվում է խիզախ պայքարի մի նոր...

Պարտիայի կամքով տափաստաններն ու խոպան հողերը
դառնում են բերքի ծով, հորդում են ջրանցքները ուրախ
բերքի ծով, ելնում են փառապանծ գէսերը, ինչպես արևներ,
բարձրանում է շենքը վեհ կոմունիզմի: Պոետը գգում է պար-
տիայի կամքի ուժը և ավարտում ոտանավորը:

Եվ աշխարհաշեն կամքն իր կհաղթի, —
Կամքը պատմության ու ժողովրդի:

«Ազատության օրորան» բաժնում ղետեղված ոտանավոր-
ներում իրենց ինքնատիպությունը ու բարձր գաղափարայնու-
թյամբ աչքի են ընկնում նաև «Մորս հետ», «Դեկտեմբեր»,
«Երգ տարիների մասին», «Կրեմլյան ղողանջներ», «Մոսկվա»,
«Հավերժ գարուն» և «Վերադարձ» բանաստեղծությունները:
Վերջին բանաստեղծությունը նվիրված է Խ. Աբովյանի անմահ
հիշատակին:

Շատերն են երգել անմահ լուսավորչին, Կարայանն էլ իր
խոսքն է ասում, բայց ասում է ինքնուրույն, ինքնատիպ ձե-
վով: Դիմելով Աբովյանին, պոետը գրում է.

Ասում են՝ մահդ առեղծված է հին...
Ո՛չ մի առեղծված ու ո՛չ մի գաղտնիք, —
Դու հին աշխարհում շե ս գտել շիրիմ,
Իսկ նոր աշխարհում գտար Հայրենիք...

Բանաստեղծի ինքնատիպությունը, թևավոր խոսքի ուժը, պատկերավոր արտահայտության խորությունն է՛լ ավելի խրատացած կերպով տեսնում ենք «Գոգոլն էր եկել...» ոտանավորում.

Հին Ռուսաստանի Փոքր թատրոնում
Չորրորդ արարն էր «Վերաբննիչի»,
Խլեստակովի մոտ կեղծում էր, քծնում
Շչեպկինի կերտած բիրտ Գորոզնիչին:
Սուր ծաղրանք էր այդ հին, նեխող կյանքի,
Ու քրքրում էր դահլիճը անսանձ.
Մեկ էլ ճոնչաց դուռը օթյակի
Եվ կիսամթնում Գոգոլն երևաց...
Բոլոր դեմքերը դեպի նա դարձան,
Բեմն էլ հասկացավ դեպքը կատարված, —
Այո... կեղծիքի, ոսկու, բռնության
Խարազանողն էր ներս մտել հանկարծ...
Եվ Գորոզնիչին՝ նստած դահլիճում՝
Ձգաց, որ նրան չի կարող բանտել,
Որ քննիչն այդ վեհ՝ Ռուսիայից հետո
Օվկյաններ կանցնի, կքննի այնտեղ...

Կարայանի սիրած թեմաներից մեկը հանդիսանում է Վրաստանը, նրա գեղեցիկ բնությունն ու եղբայրական վրաց ժողովուրդը: Բազմաթիվ բանաստեղծություններում պոետը գովերգում է վրաց ժողովրդի պանծալի զավակներին, որոնք սովետական կարգերում առաջին անգամ ժողովրդի և եղբայրական թյունների են հասել երկրի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի զարգացման ասպարեզում: Հեղինակը պայծառ գույներով է երգում իր ծննդավայրը, Թբիլիսիի գեղեցկությունը, հաճախ իր զգացմունքները արտահայտում է ոչ միայն հալերեն, այլև վրացերեն լեզվով գրած բանաստեղծություններում: Ժողովածուի «Չայն Վրաստանից» բաժնում ապագրքոված «Եղբայրության կաղնին», «Սովետական Վրաստան», «Չայն Վրաստանից», «Քուռն ու Գետափնյան», «Անցյալի պատկեր» ոտանավորները դրա լավագույն ապացույցն են հանդիսանում:

Գեղարվեստորեն և գաղափարապես հագեցված գործ է «Եղբայրության կաղնին», որտեղ պոետը կախեթցի մի ծեր աշուղի բերանով ցույց է տալիս Վրաստանի հերոսական ան-

ցյալի զրվագները և նույնքան պայծառ այսօրը: Աշուղի երգի մեջ կա հույզ, պայքարի հուր, հույսի կրակ:

Չոնգուրն ասես աղբյուր է շինջ
Իր դարավոր կրծքից հոսող,
Մեր մատները գով շիթերից
Կյանքն են ըմպում արևաշող:

Լսում են աշուղի երգը եղբայրական ժողովուրդների զավակները, աշուղ, որը ծերացել է արդեն, բայց սիրտը ջահել է նորից, որովհետև նրա Հայրենիքը օրն-օրին հասունանում, ժպտում է թե իրեն, թե բոլորին:

Եվ ավարտեց իր երգը նա,
Չոնգուրն հենեց կաղնու բնին, —
«Թող միշտ դալար, հաստատ մնա
Եղբայրության հզոր կաղնին»:
Ու միասին շրջան կաղմած
Ռուս, վրացի, հայ, թուրք ու շին
Լուս նայում են այն վեհապանծ
Այն անխորտակ կաղնու բնին...
Եվ տեսնում են նրանք հանկարծ
Որ գնգում է շոնգուրը այն՝
Իր քնքուշիկ մեջքը հենած
Հզոր կաղնուն եղբայրության...
Եվ տեսնում են նրանք նորից՝
Որ կաղնու շուրջ, սիրով անշեջ,
Մի անխորտակ շրջան կաղմած
Գեղեցիկում են սրտերն իրենց:

Կարայանը սիրում է երգը գրել պատկերավոր լեզվով: Նրան այդ հաջողվում է, առավել ևս երբ բնությունն է նկարագրում: Դրա լավագույն օրինակը կարելի է ցույց տալ այդ բաժնում գեանդված «Քուռն ու Գետափնյան» ոտանավորից, որը գեղարվեստական մի ամփոփ ամբողջություն է ներկայացնում:

Երեկոն փոեց թևերն անշշունջ,
Մթածմինդան դարձավ մանուշակի փունջ,
Շիկնած արևի վերջին հուրհրան
Համբույրը վառվեց լանջերին լեռան,

Գո՛ւրս կնայես, և իմ պահած
Բոլոր հույզերն անմեկին
Քեզ կհայտնի ինձնից առաջ
Իմ լա՛վ, ծաղկած նշենին...

Կարայանի գրքի վերջին, «Մաղիկների հետ» բաժնում զետեղված ոտանավորները նվիրված են մեր մատաղ սերունդին՝ մանուկներին: Մանուկների համար հասկանալի լեզվով բանաստեղծություններ պոետը գրել է շատ տարիներ առաջ դեռևս, երբ աշխատակցում էր «Կարմիր ծիլերին»: «Փոքրիկ նկարիչը», «Կարոցի մոտով», «Նաղաղության խնձորը» և մյուս բանաստեղծությունները ցույց են տալիս, որ նա ինչպես մեծերի, նույնպես մանուկների համար ոտանավորներ գրում է ջերմությամբ: Այդ կարգի բանաստեղծություններում պոետը ընտրում է մանկանը հուզող պատկերն ու բառապաշարը, աշխատում է գրել մատչելի ու պարզ:

«Սլացում» ժողովածուն Կարայանի գրական մուտքի առաջընթաց քայլն է: Ժողովածուն ցույց է տալիս, որ երիտասարդ բանաստեղծը հաստատուն քայլերով գնում է դեպի առաջ, քանի որ նրա առաջընթացի ուղին պարզ է ու պայծառ: Սակայն, չի կարելի ասել, որ ժողովածուն զերծ չէ թերություններից:

Ստեղծագործական հախուռն պահերին երբեմն պոետը բնականաբար չի նկատում, որ կրկնում է նախորդ ոտանավորներում գործածած որոշ հանգեր, օրինակ, պես, վես, ֆեզ և այլն: Անշուշտ, հետադադար գծվար չէր լինի ազատվել այդ կրկնություններից, եթե հեղինակը ուշիմ վերաբերվեր իր գրածներին: Չի կարելի շասել նաև, որ բանաստեղծության տեխնիկային քաջ տիրապետելով հանդերձ, չդիտես ինչու, երբեմն պոետը գործ է ածում թույլ հանգեր, բավարարվում հարկիվ հնչող մի ասոնանսով: Թեև նա այդ անում է խաշաձև հանգավորման ժամանակ առաջին և երրորդ տողերը հանգավորելիս, սակայն, դրանից էլ կարելի էր խուսափել, բանաստեղծությունը դարձնելով ավելի երաժշտական: Այդ ձևով «Գալիքի թևերը» բանաստեղծության մեջ հանգավորել է «Կարմիր» և «գարի», իսկ «Մոսկվա» բանաստեղծությունում «Մոսկվայում» և «Հայելում» բառերը: Դժվար չէ կուսել, որ այդպիսի մանրուքները երբեմն թուլացնում են ինքնըստինքյան գողարիկ բանաստեղծությունների ներգործուն ուժը:

Պոետը շատ անելիքներ ունի, նա պետք է հեռու մնա պա-

րադայնությունից, շրջանակների մեջ դնի թե՛ իրեն և թե՛ բանաստեղծությունը, խուսափի ավելորդ պատկերներից, ավելորդ բառերից ու արտահայտություններից, որոնք մթազնում են բանաստեղծական հղացումը և թուլացնում գաղափարական ներգործության ուժը, է՛լ ավելի խորանա մարքսիզմ-լենինիզմի գաղափարների մեջ, որպեսզի լիարժեք կերպով ստեղծագործի ու երգի մեր մեծ էպոխայի, աշխարհաշեն Հայրենիքի մեծությունը, նրա հերոսական մարդկանց սխրագործությունները և այդ սխրագործությունների բովում թրծվող մարդկանց հոգեկան բազմաբովանդակ աշխարհը:

Ա. Կ. ԲԵՐՈՅԱՆ

Վրացական ՍՍՌ ժողովրդական արտիստ Ա. Կ. Բերոյանը Քբիլիսիի Հայկական Պետական թատրոնի աչքի ընկնող գործիչներից մեկն է: 60 տարի է նա մեծ եռանդով ծառայել և հիմա էլ ծառայում է մայրենի բեմին: Ժողովրդի ծոցից դուրս եկած արտիստը ռեալիստական իր խաղարկեստով նպաստել է ժողովրդական թատրոնի զարգացման գործին, ստեղծել է կերպարների մի ամբողջ դալերեա, դաստիարակել է երիտասարդ կադրերի, որոնք ներկայումս աշխատում են ինչպես Քբիլիսիի, այնպես էլ Հայաստանի մի շարք թատրոններում:

Վերին աստիճան կարգապահ, արվեստի հարցերում իր և բոլորի նկատմամբ պահանջկոտ դերասանի բեմական և հասարակական կյանքի ուսումնասիրությունը շատ ուսանելի բան կտա երիտասարդ կադրերին, որոնք արդեն մտադր են գործում արվեստի աշխարհը:

* * *

Արտեմ Կոնոյի Բերոյանը ծնվել է 1878 թվականին Քբիլիսիում, մանր արհեստավորի ընտանիքում: Վերջացնելով ծրայական դպրոցը, նա սկզբում սկսում է աշխատել հոր ձուլարանում, իսկ մի տարի անց՝ Քբիլիսիի դեպոյում: 1898 թվականին Բերոյանը մեկնում է Բաբու և աշխատում է այնտեղի ձուլարաններից մեկում:

Դեռ պատանի հասակից Բերոյանը ձգտում է դեպի բեմական արվեստը: Մասնակցելով Ավճալյան առդիտորիայի ժողովրդական ներկայացումներին, նա սերտ կապ է պահպանում ակումբներում գործող սիրողների հետ: 1899 թ. Բերոյանը առաջին անգամ բեմ է բարձրանում «Զոհի փոխարեն գոհ» պիեսում: 1901 թ. որպես պրոֆեսիոնալ դերասան աշ-

խատում է հայկական դրամատիկ խմբում: Թատերական նրա առաջին ուսուցիչները եղել են հայ բեմի կորիֆեյներ՝ Սիրանուշը, Հ. Աբելյանը և Գ. Պետրոսյանը:

Բերոյանը ակտիվ կերպով մասնակցել է Ռուսաստանի և Անդրկովկասի հայաբնակ բոլոր քաղաքներում, գյուղերում և ավաններում կազմակերպված հայկական ներկայացումներին:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան Բերոյանի համար բաց արեց ստեղծագործական լայն ասպարեզ: Սովետական իշխանության առաջին իսկ օրից նա մասնակցում է ձևով ազգային, բովանդակով՝ սոցիալիստական սովետական թատրոնի վերակառուցմանն ու բարգավաճմանը:

1921—25 թվերին Բերոյանը աշխատում է Հայաստանում, սկզբում Երևանում, այնուհետև Կիրովականում: 1925 թ. աշնանից մինչև այսօր նա աշխատում է Քբիլիսիի Պետական հայկական թատրոնում: 1934 թվականին, արտիստի բեմական գործունեության 35-ամյակի կապակցությամբ Վրացական ՍՍՌ Կենտգործկոմը Բերոյանին շնորհեց Վրացական ՍՍՌ վաստակավոր դերասանի պատվավոր կոչումը, ցական ՍՍՌ վաստակալին՝ Վրացական ՍՍՌ Գերագույն Սովետի իսկ 1941 թվականին՝ Վրացական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության որոշմամբ նրան շնորհվեց ժողովրդական արտիստի բարձր կոչում:

* * *

1903 թվականին Բերոյանը պրոֆեսիոնալ դերասանի երեք տարվա ստաժ ունեւր: Երեք տարին դերասանական աշխարհում մեծ ժամանակ չէ, սակայն, երիտասարդ Բերոյանը իր աշխատասիրությամբ և ընդունակություններով այնքան աչքի ընկավ, որ հիմն սկզբի կապակցությամբ արտիստի բեմական լը լռելով, գրավոր փաստաթուղթ շթողեց արտիստի բեմական լը լռելով, գրավոր փաստաթուղթ շթողեց արտիստի բեմական լը լռելով իր վճռական խոսքն ասել բուրժուական կարգերի ամեն մի պատահականությունների ենթակա սկսնակ դերասանի մասին, որը էպիգոգիկ դերերում անգամ հանդես էր բերում ճկունություն և խաղի պարզություն:

* * *

1904—1905 թվականներին Սիրանուշը գտնվում էր Անդրկովկասում: Օրվա խոսակցությունների նյութը հանրա-

հրաժարած են. մուսլամաժ մարդիկ, որ շարունակ տրրամուխյան քող մը կընեսեն մարդկութեան երեսին վրա»:

Սիրանուշի գլխավորած գաստրոլալին խմբի ներկայացումների և Բերոյանի խաղարվեստի մասին բարձր գնահատականներ են տալիս նաև ուսական «Բակինսկայա Իդվեստիա» (№ № 90, 255, 267, 258) և «Պրիագովսկի կրայ» (№ 98, 1906 թ.) թերթերը:

* * *

1909 թվականից մինչև Անդրկովկասում սովետական իշխանութեան հաստատումը Բերոյանը անցել է դերասանի դժվարին ճանապարհ: Այդ ժամանակաշրջանում նա ոչ թե ընդօրինակում է հին սերնդի խաղարվեստը, այլ իր սեփական ստեղծագործական շունչն ու կորովն էր հանդես բերում:

Թբիլիսիի նախկին ֆաներայի գործարանի և Բաքվի նավթաշխարհի բանվորը, որը հաղթահարել է դերասանական արվեստի բոլոր դժվարությունները, ջերմորեն ընդունեց հարազատ սովետական կարգերի հաստատման լուրը:

* * *

Իր բեմական գործունեության պատմության ընթացքում արտիստ Բերոյանի բեմական տաղանդը դրսևորվել է մի շարք դերերի մեջ: Նա խաղացել է ավելի քան 400 դեր, հանդես է եկել բազմաթիվ հեղինակների գործերում, բայց, առանձնապես փայլել է Յ. Շիլլերի, Գ. Սունդուկյանի, Ա. Շիրվանզադեի և ժամանակակից սովետական հեղինակների գործերում:

Մեր առջևն է Բերոյանի խաղարվեստով կերտված Ֆերդինանդը, որը Շիլլերի «Նարդալանք և սեր» դրամայի հերոսն է: Ժամանակին այդ պիեսը ումբի պես պայթեց իր վերջալույսը ապրող գերմանական նեխված ֆեոդալական-արիստոկրատիկ վերնախավերի գլխին: Ըստ Յ. Էնգելսի դիպուկ արտահայտության այդ պիեսը ամենառևոլյուցիոն, ամենառեալիստական «գերմանական առաջին քաղաքական տենդենցիոզ դրաման է»: Հեղինակը իրական կյանքի դեպքերի զարգացման ֆոնի վրա սուր քննադատության է ենթարկում գերմանական արիստոկրատիկ ուժերը, ցույց է տալիս միահեծանութեան անսահմանափակ իշխանության

անբարոյականացնող դերը: Դա փայլուն կերպով երևում է ինչպես Ֆերդինանդի և Լեդի Միլֆորդի բացատրությունների, այնպես էլ այն տեսիլներում, երբ Ֆերդինանդը հանդես է գալիս որպես դասային նախապաշարմունքների, դասային միջնորմների առաջին և խիստ քննադատի դերում: Ատելով արիստոկրատներին, որոնք պետական խոշոր աստիճանների հասել էին ինտրիգների, խարդախությունների և այլ ներքին հասել էին ինտրիգների, խարդախությունների և երրորդ ստոր ճանապարհներով, Ֆերդինանդը միանում է երրորդ դասին. նա նույնիսկ ատում է հարազատ հորը, որը որդու «երջանկությունը», «փայլուն» ապագան փնտրում է ազնվատոհմիկների վերնախավերում: Այդ ուղին ատում է Ֆերդինանդը, ուստի որոշակիորեն հասկացնում հորը. «...եթե ես միայն ոճրագործություններ կարող եմ քոնը լինել, ապա իմ սրտում բավական ուժ կա, որպեսզի ես քեզանից ընդմիջտ հրաժարվեմ»:

Ֆերդինանդ-Բերոյանի մասին մամուլը միշտ էլ դրական է արտահայտվել: 1934 թվականին «Պրոլետար» թերթի թատերական ղեկավարը անդրադառնալով Բերոյան-Ֆերդինանդի խաղարվեստին, գրում էր, որ արտիստը Ֆերդինանդի կերպարը բացահայտելիս «տվեց սիրո ու խարդավանքի ցանցերում տանջվող անզոր պայքարող, իր գործած ոճրագործական գիտակցությամբ մեռնող դժբախտ երիտասարդի իր դառն գիտակցությամբ մեռնող դժբախտ երիտասարդի հրապուրիչ նկարագիր»:

Ֆերդինանդը, որը սիրո և խանդի ոլորապտույտում միապետության բռնակալական կաշկանդումների դեմ մղվող պայքարի մարտում դիմում է ինքնաթիռում մահան հավասար մարտում դիմում է որպես ֆեոդալական-կալոյանի խաղարվեստով մնում է որպես ֆեոդալական-կալվածատիրական կենցաղային ալյանդակությունների, սովորությունների դեմ մարտնչող խիզախ «գերմանական պատանի»:

* * *

Հայկական ռեալիստական թատրոնի և դրամատուրգիայի հիմնադիր Գաբրիել Սունդուկյանը վարպետորեն քանդակած իր դրամատիկական կերպարներով դասախարակել է դերասանների մի քանի սերունդ: Նրա մի քանի տասնյակի դերասանների մի քանի սերունդ: Նրա մի քանի տասնյակի հասնող բեմական կերպարների մեջ, զեղարվեստական տիպականությամբ աչքի են ընկնում Զիմզիմովը, Զամբախովը և Փարսիդը: Առաջին անգամ Թբիլիսիի հայ բեմի վրա

է բերել մարդկանց զընկելով, հասարակական գումարները կոր-
զելով: Փարսիդի համար խաբէլը ոչ միայն արհեստ է, այլև
անհրաժեշտութիւն: Նրա տանու ծառան՝ Միխոն, որը դեռ չի
յուրացրել կյանքի ճանաչողութեան Փարսիդյան դպրոցի այ-
բուքները, դժվարանում է վեց արշին կտորից ստանալ 6 և կես
ու դեռ ավելին: Այնինչ, Փարսիդյան դպրոցի նշխարները ճաշա-
կած խանութի գործակատար Դարշոն դիտե, թէ ինչպէս կա-
րելի է 6 արշին կտորից 7 և ավելին ստանալ: Փարսիդի
դերում Բերոյանը կերպարի ներքինը դրսևորելիս, ոչ միայն
օգտագործում է սեքստը, այլև իր տարիները ընթացքում
ձեռք բերած բեմական փորձը: Հավասարակշռված խոսքերի
հետ դերասանի հավասարակշռված արտաքին շարժ ու ձեւ-
քը չափահաստում են Փարսիդի հրեշտակին միտումները: Ու-
սերի, աչքերի, ունքերի արտահայտիչ հնարքներով Բերոյա-
նը կարողանում է ընդգծել զիմզիմովյան տիպի հարամկաթ-
նակեր Փարսիդի ամբողջ էությունը: Սովետական դերասա-
նը առանց ընդօրինակելու իր նախորդներին, քննադատորեն
յուրացնելով հայ ռեալիստական թատրոնի կորիֆեյների ար-
վեստի լավագույնը, միանգամայն նոր մեկնաբանութեամբ,
ինքնուրույն է դրսևորում հայ մեծ դրամատուրգ՝ Սունդուկ-
յանի կերտած Փարսիդի կերպարը: Ով գեթ մեկ անգամ տե-
սել է Բերոյանին Փարսիդի դերում, նա առանց վարանումնե-
րի կարող է ասել, որ արտիստը այդ դերում անդուզական
է: Բերոյանը այդ դերն ուղղակի քանդակել է տարիների իր
անխոնջ աշխատանքի փորձով, միս ու արյուն է տվել կեր-
պարին, դարձրել է կենդանի, հշութեղ, բնական ու կոլորի-
տային: Հանդիսատեսը հավատում է Բերոյան-Փարսիդի
յուրաքանչյուր քայլին, խոսքին, արարքին: Արտիստի յու-
րաքանչյուր շարժումը, դետալը կատարվում է մաթեմատիկա-
կան ճշտութեամբ: Փարսիդի դերը Բերոյանը կատարել է
մի քանի հարյուր անգամ: Եվ պետք է ասել, որ հիմնակա-
նում չընդվիւծով այդ կերպարին բնորոշ հատկութիւններից,
արտիստը յուրաքանչյուր ներկայացման ժամանակ կերպա-
րի առանձին ռեալիստները, տեսիլները, հոգեբանական
նյութանները հարստացնում է նոր միզանսցենաներով, ու-
րոնք էլ ավելի ցցուն են դարձնում Փարսիդի հրեշտակին մի-
տումները, նրա ոչ մարդկային արարքները, հոգին ծախած
վաճառականի ներքին էությունը:

Բերոյանը Թբիլիսիի հայ թատրոնի աչքի ընկնող վարձ

պետներին մեկն է: Նա հանդես է եկել Սունդուկյանի պիես-
ներում դեռևս դրամատուրգի կենդանութեան օրոք: Նա իր
կաշվի վրա վզացել է Սունդուկյանի ռեփրոյորական ռեփրմի
այնպէս ասած «խատուկունը», լսել է Սունդուկյանի դերա-
սաններին տված բարի խորհուրդները: Հաճախ դրամա-
տուրգը դերասաններին հրավիրել է իր տուն և ժամերով
պարապել նրանց հետ, որպէսզի վերջինները կերպարները
ճիշտ դրսևորեն: Այդ բանն բազմիցս տեսել, լսել և խորա-
պես ապրել է Բերոյանը, ուստի, երբ հանդես է գալիս
Սունդուկյանի պիեսներում, կարողանում է առանց իրեն
ձնշելու և բեմում ձնշվելու, ճիշտ քանդակել հայ մեծ դրա-
մատուրգի վրձինով կերտած միշտ կենդանի ապրող հոյա-
կապ կերպարները:

* * *

Բերոյանի սիրած մյուս կլասիկ հայ հեղինակը դրամա-
տուրգ Ա. Ծիրվանզադէն է: Արտիստը մեծ սիրով կերտել է
Բարխուդարի («Նամուս»), Սաղաթելի, Բագրատի, Սուրենի
(«Պատվի համար»), Արտաշեսի («Կործանվածը») կերպարնե-
րը: Հայկական մամուլը Բերոյանի մասին իր առաջին ջերմ
տողերը գրել է Ծիրվանզադէի «Պատվի համար» պիեսի բե-
մադրութեան կապակցութեամբ:

Նովելիստ Գրիգոր Զոհրաբը Բագրատ—Բերոյանի խաղ-
արվեստի մասին գրել է. «Բերոյանը ոչ նվազ հաջողութեամբ
երևան բերավ Բագրատի դերի մեջ դրական իմաստավորու-
թեամբ խիտալարակ սերունդի մը շոր ու ցամաքած սիրտը» (Ժա-
մանակ): Այս մեջբերումը ասում է այն մասին, որ արտիստը
լավ ըմբռնելով կերպարի սոցիալական բովանդակությունը,
ռեալիստական իր խաղարվեստով Բագրատի կերպարը տվել
է կենդանի, պայծառ գույներով:

Բանաստեղծ Վահան Թեքեյանը, որն ականատես է ե-
ղել Սաղաթելի դերում հանդես եկող դերասաններ Ազյանի
և Բերոյանի խաղարվեստին, ժամանակին գրել է. «... Բերո-
յան, որ Սաղաթելը կներկայացնէ, անշուշտ ավելի մտած-
ված ու ժուժկալ խաղացուածք մը ունի, քան Ազյանը...»:

Վահան Թեքեյանը չի մոռանում հիշատակել նաև այն,
որ շնայած Սաղաթելի կերպարը Բերոյանի մոտ դրսևորված
է ավելի կատարյալ ու բնական, քան Ազյանի մոտ, բայց
է այնպէս «ճիշտ Պ. Արեւյանի շարժը ... քիչ մը կվնասեն
և այնպէս «ճիշտ Պ. Արեւյանի շարժը ... քիչ մը կվնասեն

իրեն» (այն է Բերոյանին): Այդ հանգամանքը չի ժխտում նաև արտիստը: Սա մի անկեղծ խոստովանութիւնն է մի դերասանի կողմից, որը ինչքան էլ ընդօրինակել է մեծանուն դերասաններին, նույնքան էլ ոգի ու շունչ է տվել իր ինքնուրույն մեկնաբանութիւններով Շիրվանզադեի կերտած դրամատիկական կերպարներին:

* * *

Արտիստ Բերոյանի բեմական գործունեության ավելի բան երկու երրորդը անցել է սովետական իշխանության պայծառ արևի տակ: Այդ ժամանակաշրջանում կերտված կերպարները նրա խաղացանկի ոսկե ֆոնդն են կազմում: Այդ շրջանում արտիստի բարձրորակ խաղով, կերտած ռեալիստական կերպարները գերազանցում են նախառևտլյուցիոն շրջանում նրա կերտած կերպարներին: Եվ դա բնական է: Եթե մինչև սովետական կարգերը Բերոյանի ստեղծագործական ուղին ընթացել է զիզգազ ճանապարհներով, կանգառներով, թափառական խմբերի և պատահական ռեպերտուարի առկայության պայմաններում, ռեպերտուար, որը կազմվում էր մեծ մասամբ խմբի գերակատարների ուժերը հաշվի առնելով, սովետական շրջանում արտիստը ապրելով ու գործելով մշտական գործող կոլեկտիվի, կաշուն ռեպերտուարի առկայության պայմաններում, բեմական իր հարուստ փորձը ի սպաս է դնում սոցիալիստական Հայրենիքի արվեստի բարգաւաճման գործին:

Հետհոկտեմբերյան ժամանակաշրջանում արտիստի կերտած կերպարների մեջ անմոռանալի և թարմ է մնում մարդկանց հիշողության մեջ Ս. Կորնելյուկի «Պլատոն Կրեչև» պիեսի հերոս Բերեստի կերպարը: Բերոյանի պատկերած Բերեստը պարտիական խոշոր գործիչ է: Հանձին Բերեստ-Բերոյանի հանդիսատեսը տեսնում է քաղաքական, պարտիական և պետական աշխատանքի հարուստ փորձ կուտակած հայրենասերի, որի յուրաքանչյուր քայլը, խոսքը, գործողությունը հավասարակշռված են: Նա սկզբունքային է, հեռատես, և որ գլխավորն է, այդ բոլորով հատկությունները պայծառավորված են բարձր գաղափարայնությամբ: Նա վճռական է, եթե գործը պահանջում է: Երբ համոզվում է, որ Բոչկարյովը պի-

տանի չէ գործի համար, իսկույն նրան աշխատանքից ազատելու հրաման է տալիս: Սկզբունքայնության այդ համոզված գիծը նա երևան է բերում նաև Լիդիայի նկատմամբ, երբ համոզվում է, որ վերջինիս կազմած նախագիծը գերծ է թեոուլյուններից:

Բերոյան-Բերեստի մեջ խոստով է շիտակ ու ազնիվ սովետական գործիչն ու քաղաքացին, իսկական բոյշեկիր, որը պարտիական-սովետական ճիշտ գիծը կարողանում է անցկացնել իր ղեկավարած աշխատանքի տեղամասում: Որպես օրինակելի հայր Բերեստը աչքի է ընկնում նաև իր ընտանիքում: Կոմունիստական բարոյախոսության համար պայքարող Բերոյան - Բերեստի բարձր հատկությունները ժամանակին լիցք են տվել սովետական հանդիսատեսին:

Սովետական մարդու հայրենասիրությունը, օպտիմիզմը Բերոյանը ցույց է տվել նաև Վասիլի («Ռուս մարդիկ») և Մորոզովի («Գլխավոր հյուպատոս») կերպարներում:

Վասիլի բնավորության մեջ Բերոյանը տեսնում է Բերեստի բոլշևիկյան սկզբունքայնության, հայրենասիրության, թշնամու նկատմամբ տածած խոր ատելության իրեն ծանոթ դծերը:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրից պարտիան սովետական կաշազորի շտաբի պետ է նշանակում նախկին սպա Ալեքսանդր Վասիլիչ Վասիլին, որն իր պարտքը ճանաչող և գործը սրբորեն կատարող զինվորական է: Նա չոր է այնտեղ, ուր անհրաժեշտ է մերկացնել հայրենիքի դավաճանին, լրտեսին: Նա իր քրոջ որդուն՝ ֆաշիստական լրտես Կոզլովսկուն արգար դատարանի առջև է կանգնեցնում ճիշտ այնպես, ինչպես նա այդ կաներ յուրաքանչյուր այլ զավթիչի նկատմամբ: Բերոյանի կերտած Վասիլը մարտերում կոփված, ռազմական ցուրտ տեղափոխված արտիստին ծանոթ Բերեստն է:

Բերոյանը վարպետորեն կերտել է նաև մի շարք բացասական տիպեր՝ Խեչան («Շափարի ճանկերում»), Մելիք-Դավիթ («Դավիթ բեկ»), Լյազուշին («Հրաբխի վրա»): Դավիթ Ուրացուղի և մորթեպաշտ Արխիպի փառամոլությունը, ժողովրդին կեղեքելու և հայրենիքին դավաճանելու նրանց ստոր գծերը արտիստը տվել է մեծ վարպետությամբ:

Սովետական ժամանակաշրջանում Բերոյանը ռեալիստական պայծառ գույներով է կերտել Եսկուշի («Ռուզատիան կրակի օղակում»), Սևադայի («Գեորգ Մարգարտու-

նի»), Լեշինի («Թշնամիներ»), Գրոմովի («Արիստոկրատներ»), Մոնտանելիի («Քոռ»), Անդրեյ Վալկովի («Ճրիտասարդ գվարդիա»), Խարիտոնովի («Ի պատիվ նրանց, ովքեր ծովումն են»), Վանյուշինի («Վանյուշինի գավախներ»), Ստեպան Ստեպանիչի («Սիրո գարուն»), Զաքարիայի («Սայաթ - Նովա»), քեռի Արմենի («Վուսակերտի աղջիկը») և այլ կերպարները:

* * *

Արտիստ Արտեմ Կոնոյի Բերոյանի արվեստը ռեալիստական է: Հանդես գալով հայ ռեալիստական թատրոնի կարկառուն ներկայացուցիչ Հովհաննես Աբելյանի անմիջական ղեկավարության տակ, նա դաստիարակվել է իր ուսուցչի տրադիցիաներով: Հովհաննես Աբելյանի դերասանական հաջողությունը պետք է բացատրել ոչ միայն նրա բնատուր տաղանդի ավայնեցումով, այլև նրանով, որ նա շարունակել է իր նախորդների գործը: Առանց այդ ռեալիստական առաջավոր արվեստի տրադիցիաների Աբելյանը չէր ունենա հաջողություն:

Հովհ. Աբելյանը ոչ միայն զարգացրեց Գ. Չմշկյանի, Մ. Ամերիկյանի, Պ. Աղամյանի ռեալիստական արվեստը, այլև այն հարստացրեց, զարգացրեց՝ հիմք ընդունելով ռուսական առաջավոր ռեալիստական թատրոնի նվաճումները:

Բերոյանը երկար տարիներ աշխատելով Աբելյանի գրված խավորած խմբում, իրեն մարզեց ռեալիստական արվեստի բնագավառում, նա կերպարները բացահայտում էր ռեալիստական կենսունակ խաղարվեստով, աշխատում էր և հիմա էլ աշխատում է հավատարիմ մնալ իր ուսուցիչների տրադիցիաներին, ժողովրդական առաջավոր արվեստի տրադիցիաներին: Ունենալով կյանքի ճանաչողության մեծ փորձ, նա հիշտ կերպով էր ըմբռնում յուրաքանչյուր պիեսը, էպոխան և այլ անհրաժեշտ դետալներ:

Բերոյանը տիրապետում է դերասանական արվեստի շափի զգացմանը, մի հանգամանք, որը խոշոր գործուն նշանակություն ունի բեմական արվեստում: Տիրապետելով գրիմի արվեստին, նա վարպետորեն կարողանում է գրիմը պայմանավորել դերի հոգեվիճակով:

* * *

Թանկ է Բերոյանը մեզ՝ ժամանակակիցներիս համար, որը 36 տարի անընդհատ աշխատել է հանուն բանվոր դասակարգի արդար գործի: Պատվարժան արտիստը նոր ոգով ու ավելունով այսօր էլ շարունակում է ստեղծագործել, նպաստելով մեր մեծ Հայրենիքի հետագա կուլտուրական բարգավաճման գործին: Նա աշխատասեր է, նրա կյանքն ու ստեղծագործությունը մի պայծառ օրինակ են արվեստի բնագավառում աշխատող մեր երիտասարդ սերնդի համար:

րեր, պառավ կանանց, փոքր աղջիկների, տղաների և մինչև անգամ օպերետներում: Ներկայացումները կրում էին հասարակական կնիք: Այդ ներկայացումները դերասանուհուն, բացի պրակտիկայից, ոչինչ չեն տվել: Այդ տարերային շրջանը երկար չի տևում: Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Ալեքսանդրով կազմակերպվում է պետական խումբ: Խմբի գլուխ անցնում է դերասան Միրզոյանը, որը վերջ է տալիս պատահական և անկազմակերպ ներկայացումներին: Դերասանուհին անհուն սիրով է հիշում Միրզոյանին, որը շատ բան է տվել իրեն բեմական թոթովանքի առաջին շրջանում:

Մ. Մոճոռյանի բեմական ստեղծագործական կյանքի բեղուն շրջանը սկսվում է 1921 թվականից: «Ես իմ իսկական գործունեության շրջանը,— գրում է դերասանուհին,— համարում եմ սովետական կարգերի հաստատումից հետո: Այդ ժամանակ էր, որ ես խաղում էի ուսերեն լեզվով Կարմիր Բանակի զորամասերում»:

Սակայն, նաչաժ այդ բոլորին, Լենինականի թատերական կյանքը ստեղծագործական տեսակետից կազում էր:

1921—22 թատերաշրջանի վերջում Լենինական է գալիս դերասան Արմենյանը: Նա անցնում է թատրոնի գլուխ և բեմադրում ավելի բարդ պիեսներ:

Դերասանուհի Մոճոռյանը, խաղալով հայ բեմի ակադեմիկոս վարպետ Արմենյանի հետ, շատ բան է սովորում նրանից: Առաջին և գլխավոր նորությունը՝ Արմենյանի՝ այդ ռեժիսյոր - մանկավարժի աշխատանքն էր: «Ես գտնում եմ, — գրում է այդ տարիների մասին դերասանուհին,— որ ինչքան էլ վիճելի լինեն Արմենյանի ստեղծագործական պրիոմները և մեթոդները, այնուամենայնիվ... իմ առաջին ռեժիսյոր-ուսուցիչը եղավ նա, և ես սիրով ենթարկվեցի նրան»: Դերասանուհին զգաց, թե ինչ է նշանակում ռեժիսյորը:

1922—23 թատերական սեզոնում Լենինականի խումբը՝ դարձյալ ղեկավարում էր Արմենյանը: Դերասանուհին զգալի առաջադիմություն է ցույց տվել: Այդ սեզոնում նա հանդես է գալիս մի շարք լուրջ և պատասխանատու դերերում, խաղալով Թերեզա («Ժայռ»), Հանրիետտա («Երկու որդ»), Հոռոմ (Դեմիտրյանի «Դատաստան»), Կատրին («Համբարկին»):

1923—24 և 1924—25 թատերաշրջանում Մոճոռյանը խաղում է Թբիլիսիի հայպետդրամայում: Այդ ժամանակ

կաշրջանում նա հանդես է գալիս «Նամուս» (Սուսան), «Բոռ» (Ջեմմա), «Հուլյաի կործանումը» (Մարգարիտ), «Մի կտոր հողի համար» (Յոդիկ) պիեսներում:

1924 — 1925 թատերաշրջանի ավարտումից հետո Մոճոռյանը նորից գտնվում է Լենինականում: 1925—26 թատերաշրջանում Լենինականը պահանատես է լինում գաստրոլային խոշոր ներկայացումների:

Արտասահմանից վերադարձած հայ բեմի խոշորագույն վարպետ Հովհաննես Աբելյանը Լենինականում տալիս է մի շարք ներկայացումներ, որոնց մասնակցում է նաև Մոճոռյանը:

Դերասանուհին մեծ ոգևորությամբ է խաղում Հովհ. Աբելյանի հետ «Պատվի համար» (Մարգարիտ) և «Չար ոգի» (Սոնա) պիեսներում: Հովհ. Աբելյանի գաստրոլների վերջանալուց հետո սկսվում են վահրամ Փափազյանի գաստրոլները:

Մոճոռյանը Փափազյանի հետ հանդես է գալիս «Համբարկին» (Օֆելիա), «Օթելլո» (Բեղդեմոնա), «Ուրիել Ակոստա» (Հուդիթ), «Երկաթե մարդ» (Տլորա), «Ավագակներ» (Ամալիա) պիեսներում:

Այդ գաստրոլները խոր բեկում ստեղծեցին դերասանուհու ստեղծագործություն մեջ: Այդ առթիվ Մոճոռյանը գրում է.

«Այդ մի սեզոնի ընթացքում ես այնքան խոշոր դերեր խաղացի մեր բեմի խոշորագույն արտիստների հետ, որ դա ինձ համար կարող էր ստեղծագործական աշխատանքի աղբյուր լինել առնվազն մի տաս տարվա համար»:

1926—27 և 1927—28 թատերաշրջաններում դերասանուհին աչքի ընկնող դերեր չի խաղում: Դրանցից 1926—27 թ. սեզոնը, ինչպես ինքն է ասում, «անցավ անգույն», իսկ 1927—28 թ. սեզոնը նրա տարբերին նոր բան չավելացրեց:

Հետագա տարիներին նա նորից հրավեր է ստանում Թբիլիսիի հայպետդրամայում աշխատելու համար: Այնուհետև նա ընդմիջում մնում է Թբիլիսիի հայ թատրոնում անցնելով ստեղծագործական մի փայլուն ուղի:

Այդ ժամանակներից նա մեծ լիցքով խաղացել է Մարգարիտի («Պատվի համար»), Սոնայի («Նամուս»), Սոնայի գարիտի («Պատվի համար»), Սոֆիի («Արևելյան» («Չար ոգի»), Անուշի («Բաղդասար աղբար»), Մարգարիտի («Նամուստամնաբույժ»), Էփեմիայի («Պեպո»),

Այո՛, դերասանուհին աշխատում է գտնել խաղի մեջ այն ուղիները, որտեղ քիչ կա խաղ:

Պարզ, զսպված խաղին դերասանուհին հասել է համառ աշխատանքի շնորհիվ:

«Այդ մեթոդով առաջնորդվելով,— գրում է Մոճոռյանը,— դերասանը ոչ միայն կարողանում է գտնել կերպարի ներքին ապրումները ճշմարտացիորեն տալու բանալին, այլև ոգևորությամբ ստեղծագործական ավյունով է գրսևորում իր կարողությունները բեմի վրա:

Գերասանուհի Մոճոռյանի կերտած մի շարք բեմական կերպարներ ունեցել են խաղի իրենց տրադիցիան, բայց ինչպես շատ դերասանուհիների, այնպես էլ Մոճոռյանի մոտ այդ կերպարները երևում են նոր որակով, նոր մեկնաբանությամբ: Ի դեպ, ասենք, որ Մոճոռյանը ամեն մի գեր ստանձնելիս, եթե այդ դերը խաղացվել է անցյալում հայտնի ու անհայտ դերասանների կողմից, ոչ միայն լավ ուսումնասիրել է ստանձնած կերպարը, այլև ուսումնասիրել է իր նախորդ կատարողների արվեստը, որոնք տքնել են այդ դերը կատարելիս:

Մոճոռյանի կերտած կանացի տիպերի մեջ առանձնակի տեղ է գրավում Մարգարիտը («Պատվի համար»):

Մարգարիտի դերն ստանձնելը միշտ էլ մեր դերասանուհիների իգեալն է եղել, որովհետև Մարգարիտը որպես բեմական կերպար դերասանուհուն ոչ միայն հնարավորություն է տալիս գրսևորել թատերական արվեստի ասպարեզում ձեռք բերած իր ունակությունները, այլև այդ կերպարը իր ներքին էությունը արվեստագետին հնարավորություն է տալիս ասպարեզում և ապա իր խաղի միջոցով ասպարեզելու հանդիսատեսին: Մոճոռյանը Մարգարիտի դերը կատարում է շատ վաղուց: Մարգարիտ—Մոճոռյանը բեմահարթակի վրա երևացել է մի քանի անգամ: Եվ բոլոր ժամանակներում էլ դերասանուհին առանց դավաճանելու Մարգարիտին, կարողացել է նոր շունչ ու կորով հանդես բերել այդ ազնիվ ու առաքինի օբիորդի կերպարը կերտելիս: Ամեն անգամ շնորհիմանակելով իր իսկ կերտած Մարգարիտին, նա աշխատել է որքան կարելի է նոր բան տեսնել Մարգարիտի մեջ, թերին շտկելու, Մարգարիտի խորունկ պատկերը երևան հանելու համար:

Մարգարիտի դերը դերասանուհու համար եղել է ճակատագրական: «Բեմ բարձրանալու առաջին քայլերից»,—

գրում է դերասանուհին, — ես խաղացել եմ այդ դերը և մինչև հիմա էլ մեծ սիրով խաղում եմ առանց հոգնելու... Ամեն անգամ առիթ հանդիսացած դեպքում ուրախ եմ լինում էլի մի նոր շտրիխ գտնելու այդ բարձր դերի համար»:

Վերջին անգամ դերասանուհին Մարգարիտի դերում հանդես եկավ 1938—39 թատերաշրջանում: Այդ կապակցությամբ նա գրում է.

«...Պետք է խոստովանեմ, որ անցյալում ես միշտ զուրկ եմ եղել այդ դերը պատշաճ կերպով պատրաստելու հնարավորությունից, որովհետև այդ պիեսի բեմագրությունը միշտ կրել է շտապողականության կնիք: Խաղացել եմ գլխավորապես տաղանդավոր արտիստ Արեյանի գաստրոլներով ժամանակ: Այդպիսի ներկայացումներին ես հնարավորություն եմ ունեցել միայն երկու-երեք փորձից հետո բեմ գուրս գալ, որը շատ քիչ է նույնիսկ տեքստը լուրացնելու համար: Այս տարի ես Մարգարիտի դերը խաղում եմ երկար աշխատանքից հետո և պետք է ասել, որ շատ գոհ եմ այդ աշխատանքից:

...Չնայած Մարգարիտի ուսմանտիկ զծերին, ես աշխատել եմ նրան հասկանալ սեպիստորեն: Ես հեռու եմ մնացել Մարգարիտի վերամբարձ ու վերացական տոնից: Դերը պատրաստելիս ինձ համակել էր մի միտք և զգացում, այն է՝ խոր կերպով թափանցել Մարգարիտի հոգեկան աշխարհը և խաղի մեջ տալ նրա ամբողջական կերպարը: Այդ հնարավորությունը ես ունեի, որովհետև հեղինակը տալիս է աշխատանքի անսպառ ազդեցություններ և ուսումնասիրելու համար, իրեն հատուկ վրձի նի աննման զույներով» (տես «Սովետական վրաստան», № 127, 1939 թ.):

Մոճոռյան - Մարգարիտը բեմի վրա զարգանում է տեսիլ առ տեսիլ, գործողություն առ գործողություն: Գերասանուհին կերպարի ներքին դրամատիզմը խորացնում է գործողությունների զարգացմանը զուգընթաց: Իսկ երբ գործողությունների կուլմինացիոն կետում անհրաժեշտ է երևան բերել այն խոր զգացումները, որոնք Մարգարիտի մեջ երևան են գալիս հարազատ հոր բնավորության մոլթ զծերը հայտարարելուց հետո, դերասանուհին իր բարձր մասնակ Մարգարիտ-Մոճոռյանի խոսքերը հնչում են վեհ

ու խոր, ինչպես ծանր ու խոր է նրա ներքին դրամատիզմը, առավել ևս, երբ նա հորից աղերսում է գողացած փաստաթղթերը՝ ընտանիքի, Օթարյանի և անձնական պատիվը փրկելու համար: Ո՞վ կարող է մոռանալ Մարգարիտ-Մոճուռյանի՝ հորն ուղղած կշամբանքի զգացմունքով լի «հայրիկ» բառը, մի աղջկա կողմից, որը մինչ այդ, դեպի հայրն ունեցած իր ջերմ սիրո համար, երկմտանքով էր ընդունում Օթարյանի քննադատական մտքերը իր հոր հասցեին: Իզուր չէ, որ Շիրվանզադեն, իր դրական գործունեության հիսնամյակի օրը թատրոնի վարչությունից պահանջել էր, որ Մարգարիտի դերում հատկապես հանդես գա Մոճուռյանը:

Մոճուռյանը նույնպիսի լիցքով բացահայտել է նաև Սուսանի («Նամուս»), Սոնայի («Չար ոգի»), Կատերինայի («Ամպրոպ»), Հուլիթի («Ուրիել Ակոստա»), Տատյանա Լուկովայայի («Թշնամիներ»), Նատալիայի («Նաթարալ»), Էֆեմիայի («Պեպո»), Անուշի («Բաղդասար աղբար»), Սոֆիի («Արևելյան ատամնաբույժ»), Լուիզայի («Շարդավանք և սեր») կերպարները:

Կատերինան Մոճուռյանի սիրած երկրորդ և խնամքով մշակված կերպարն է: Կատերինայի դերը նա ուսումնասիրել է ռեժիսոր Լ. Քալանթարի ղեկավարությամբ: Ի միջև այլոց, դերասանուհին մեծ պաթոսով է խոսում ոչ միայն Կատերինայի, այլև «Ամպրոպի» բեմադրության հետ կապված փորձերի ու բեմական սև աշխատանքների մասին:

Ռեժիսյորի մանրակրկիտ աշխատանքը հնարավորություն է տվել նրան ուժեր հավաքել Կատերինայի կերպարը լիարյուն կերպով դրսևորելու համար: «Ես գնում էի փորձերին, — գրում է դերասանուհին, որպես դասի, և գրեթե մոռացել էի, որ այդ դասերի հետևանքը պիտի լինի խաղալ, ցուցադրել այն բեմից: Ես խորին ցավ էի զգում, որ ներկայացման օրերը մոտենում էին, որովհետև պետք է ավարտվեր աշխատանքը պիեսի վրա»: Ահա այդ աշխատանքի արդյունքն էր, որ «Ամպրոպը» բեմադրվեց թբիլիսիի հայ թատրոնում արվեստի կատարելագործությամբ և բարձր գեղարվեստականությամբ: Ամեն մի դերակատար զգում էր, թե ինչ է ասում և ինչու է ասում, ինչ է անում և ինչու է անում: Այս խմբի մեջ իր ճշմարիտ խաղով փայլեց նաև Կատերինա-Մոճուռյանը: Սովետական մամուլը դերասանուհու խաղի մասին գրում էր.

«Կաբանիխայի բնակալուծյան ապառաժի դեմ իր նուրբ մատներն արյունոտ և վերջում իր երազն ու բյուրեղի պես վճիտ սիրտը փշրող Կատերինայի դերում Մ. Մոճուռյանը ցույց տվեց իր բեմական ընդունակությունների լավագույն նմուշները»:

Նրբ պիեսի հերոսուհին իր մեջ կրում է խոր դրամատիզմ, ներքին խուլ ճիշեր, դեպի մաքուր և առաքինի գործը ունեցած անշահախնդիր ու բացարձակ անկեղծ վերաբերմունք, Մոճուռյանը կարողանում է խիզախորեն դրսևորել իր բեմական վարպետությունը:

Այդ բանը ավելի քան երևում է «Ուրիել Ակոստա» պիեսում, երբ դերասանուհին հանդես է գալիս Հուլիթի դերում: Հուլիթը զուսպ է, նա քիչ է խոսում ու գործում, բայց շատ է ապրում, հանդիսատեսին շատ է զգացնել տալիս իր գոյավիճակը:

Ամեն անգամ, երբ Ակոստան ելույթ է ունենում այս կամ այն առիթով, հանդիսատեսը հարց է տալիս իրեն, թե ինչ կմտածեր, ինչ կաներ Հուլիթը, եթե լիներ Ակոստայի մոտ: Եվ միշտ էլ գտնում է դրական պատասխան, որ Հուլիթը համակարծիք կլիներ Ակոստային, այնքան համոզեցուցիչ է դրսևորված Հուլիթի բնավորության գծերը Մոճուռյանի խաղի մեջ: Հուլիթը ևս անզոր է միանգամից կուլի դուրս գալ իր շրջապատի և առաջին հերթին հոր դեմ, բայց վրձնական է իր դավանած սկզբունքների մեջ և զոհվում է այդ սկզբունքների ոչ սիրո համար:

Փամանակին մեր սեցենդենտները, ճիշտ է, դրական, բայց շատ անզույն ու երկիմաստ արտահայտվեցին Հուլիթ-Մոճուռյանի խաղի մասին: Միթե կարելի է աչքաթող անել Հուլիթ-Մոճուռյանին Ակոստային կշամբելու տեսիլում, երբ վերջինս արտասանում է «Հայրը ասում է՝ այդպես եմ կամենում և նրա որդիքը այս հրամանը կատարում են կույր հնազանդությամբ: Մեր կյանքը մի փակ բանտ է»:

Հուլիթն առանց վարանման պատասխանում է. «Ակոստա, դուք այդ ասացիք այն միջոցին, կարծես սառն և չոր տարակուսանքով միայնակ թափառելիս լինեք մի ուրիշ տեղ, բայց այստեղ, այս այգում, ուր ներշնչել եք ինձ ամենաջերմ և ամենասքանչելի կյանք, այստեղ չպետք է խոսեք այդ մասին: Ոչ, Ուրիել, այդ ճշմարիտ չէ, դու մի երկնային սանդուխք բարձրացրիր իմ առաջ և ահա ես լողում

եմ եթերում, երբ իմ հոգին սավառնում է մի սուրբ լույսով լուսավորված, դու կամենում ես այդ սանդուխքը ետ վերցնել: Այ, հակառակ ճանապարհով դնալ ես չեմ կարող»:

Հիշեցեք մի պահ այդ տեսարանում Հուզիթ-Մոճոռյանին, որքան պարզություն, խորիմաստություն, մաքուր սեր կա վերը մեջ բերած խոսքերի մեջ, որքան ջերմություն դեպի Ռբիելը, այն է առաջավոր գիտությունը, լույսը, և որքան վճռականություն ու պայքարի կամք խավարի թագավորության դեմ:

Հուզիթի վճռականությունը նրան տարավ դերեզման: Նա թունավորվեց իր դավանած սկզբունքների, մաքուր սիրո համար: Մեռնելուց առաջ Հուզիթը համոզում է Ակոստային, որ նա նորից գնա «դեպի ազատ պատերազմը», ինքն իրեն անգոր է զգում պայքարելու իր շրջապատի դեմ, բայց ուրիշի մեջ զգում է ուժ ու կորով: Նա դրանով իրեն բավարարված ու մխիթարված է զգում: Սակայն մահվան դալարումների մեջ էլ նա դեպի Ռբիելը մնում է մաքուր ու առաքինի:

Հիշեցեք մեռնող Հուզիթ-Մոճոռյանի ներքին գրամատիվում հազեցած անբռնազբոսիկ խաղը և կհամոզվեք, որ նրա կերտած դերը անսպթաք էր:

Հուզիթ-Մոճոռյանի խաղի մասին բարձր տոնով խոսեցին «Զարչա Վաստիկա» և «Մոլոդոյ Ստալինեց» թերթերի թատերական ռեցենզիստները:

Նոր գրամատիկայի ու լիրիկայի խառնուրդով հազեցած խաղ է տալիս Մոճոռյանը նաև Լուիզի («Սեր և խարդավանք») և Անանի («Էլի մեկ գոհ») կերպարները բնութագրելիս: Այդ պիեսներում ևս հարգելի դերասանուհին փայլում է իր խաղի բազմերանգությունը և նրբությունը:

* * *

Գորկու պիեսներից Թբիլիսիի Հայպետգրաման բեմադրել է միայն «Հատակում» և «Թշնամիները»: Վերջինում Մոճոռյանը հանդես է գալիս Տատյանա Լուզովայի դերում: Տատյանան Գորկու այն հերոսուհիներից է, որը կտրվելով իր միջավայրից, ամբողջ էությունը նվիրվում է նորին, ընդհանրապես լույսի և իր անելիքն ու դերը նոր կյանքի համար մղվող պայքարում: Տատյանայի մեջ շատ բան կա ինդիվիդուալիստական: Նա տատան-

վող անձ է: Նա մեկ հայտարարում է, որ բանվորները կըհաղթանակեն, իսկ մի այլ առիթով Նադիային համոզում, որ եթե նա իրեն նվիրի ռեյտուցիային, ապա կկործանվի: Չնայած այդ բոլորին, Տատյանան իր մեջ գտնում է կամքի ուժ և օգնում է Մինցովին՝ ընդհատակյա գրականությունը թաքցնելով տանը:

Մոճոռյանը առանձնապես լավ է խաղում Նիկոլայ Սկրբոտովի հետ տեղի ունեցած տեսարանում: Նա կարողանում է Տատյանայի ամբողջական կերպարը գծել համոզեցուցիչ գույներով:

«Մտանձնելով Տատյանայի դերը... ես աշխատել եմ, — ասում է իր ելույթում Մոճոռյանը, — պատկերացնել այն էպոխան, որն այնպես ցայտուն կերպով տալիս է իր բազմաթիվ երկերում Մաքսիմ Գորկին: Տատյանան թեև ապրում և աշխատում է բանվորների հակառակ բանակում, այնուամենայնիվ նա իր ինտուիտիվ զգացումներով հեռու է այդ միջավայրից և դատապարտում է գոյություն ունեցող հասարակարգը: Հեղինակը դա պատճառաբանում է նրա ծագումով... Տատյանան համակրում է բանվորներին և աշխատում է լսել նրանցից իրեն հետաքրքրող հարցերի պատասխանը: Եվ ես աշխատել եմ պատկերավորել այն իմ խազով» (տես «Նորհրդային Վրաստան», № 116, 1938 թ.)

* * *

Գրամատիկական եռուն կրքերով լեցուն կերպարները դրսևորելուց բացի, Մոճոռյանը հաջողությամբ հանդես է եկել Հակոբ Պարոնյանի և Գ. Սունդուկյանի պիեսներում՝ կենցաղային տիպական դերերի մեջ: Այդ երկու գրամատուրգների երկերում Մոճոռյանը խաղացել է էփեմիայի, Նատալիայի, Անուշի և Սոֆիի դերերը: Դրանցից երկուսը հանդես են գալիս 70-ական թվականների Թիֆլիսի, երկուսը՝ 60—70-ական թվականներին Կ. Պոլսի միջավայրում: Թիֆլիսը և Կ. Պոլիսը անցյալում խոշոր դեր են կատարել հայ կուլտուրայի և մտքի զարգացման ասպարեզում: Հայ ինտելիգենցիան իր երազուն, ումանտիկ ծրագրերը այստեղ տեղի գեցիան իր երազուն, ումանտիկ է առաջացել, հղի է կազմել: Այդ երկու բաղադրերումն է առաջացել, հղի է կազմել ու ալլասերվել բուրժուական, վաշխառուական ըն-

տանիքը: Այդ երկու քաղաքներումն է ուժեղ կերպով ճընշվել հայ էանաֆ ու աշխատավոր ընտանիքը:

Սովետական ջերմ արևի տակ մեծացած դերասանուհին, պարզ է, որ մեծ դժվարությունների առջև պետք է կանգնեն այդ դերերը ստեղծագործելիս: Ճիշտ է, և՛ Պարոնյանը, և՛ Սունդուկյանը մեր թատերական իրականության մեջ ամենասիրված ու ամենատարածված հեղինակներն են, ճիշտ է, որ այդ հեղինակների պիեսները տասնյակ տարիներ շարունակ կազմել են (և դեռ կկազմեն) մեր ազգային բեմի զարդը, բայց որ հիշում ենք դերասանուհու ընդունած թելը՝ կերպարը կատարելիս չկրկնել դերասաններից և ոչ մեկին, կերպարը բացահայտել ժամանակակից կյանքի հասկացողությունների ճառագայթների տակ, հասկանալի է դառնում դերի կատարման բարդությունը դերասանուհու համար:

Սակայն, որքան էլ այդ կերպարները կենցաղային կոլորիտով, արեմտահայ լեզվի և թիֆլիսի հայերի բարբառի ուրույն բառապաշարով դժվարացնում է դերասանուհու ուղին, բայց աշխատասեր դերասանուհին միշտ էլ բաց ճակատով է դուրս եկել, հաղթահարելով բոլոր խոչընդոտները:

Դեռ ավելին, ուշադիր և ջանասեր դերասանուհին, առաջնորդվելով Ստանիսլավսկու սիստեմով, հաղթահարում է ոչ միայն այդ դժվարությունները, այլև հարստացնում է իր բեմական կուլտուրան:

Այդ բանը կարելի է հաստատել հենց Մոճոռյանի խաղարվեստով: 1938/39 թատերական սեզոնը բացվեց Սունդուկյանի «Պեպո»-յով: Մոճոռյանը խաղում էր էփեմիայի դերը: Դերասանուհին «Սովետական Վրաստան» թերթում հանդես եկավ «Լիարյուն տիպի համար» փոքրիկ հոդվածով, որի մեջ է միջի այլոց գրում է.

«Սունդուկյանի հումորով լի, հարուստ լեզուն ուսումնասիրելիս դերակատարի համար բացվում են նոր, մեծ հրեարավորություններ՝ կատարելագործելու իր լեզուն, շեշտադրությունը, արտասանությունը» (տես «Սովետական Վրաստան», № 45, 1938 թ.):

Մի այլ առիթով, մամուլում հանդես գալով Սունդուկյանի «ժաթարալա» պիեսում խաղացվելիք Նատալիայի դերի մասին, Մոճոռյանը գրում է, որ Նատալիայի բնորոշ կողմը գտնելու համար կատարած ուսումնասիրության իր փորձը բերեց այն եզրակացության, որ այդ դերը այնքան

էլ բարդ ու հավիտենական դժվարություն ներկայացնող դեր է:

«Նատալիան, — կարդում ենք այդ հոդվածում, — լինելով իր միջավայրի հարազատ ծնունդը, ժառանգելով բոլոր քաղքենիական արագիցիաները, ապրում է գոհ իր վիճակից և իրեն զգում է միանգամայն երջանիկ:

Սակայն կա մի նուրբ խնդիր, որը պետք է նկատի ունենա դերակատարը. այն է՝ պետք է աշխատել, որ Նատալիան չկորցնի իր գրավչությունը, իբրև շափազանց ինքնագոհ և իր առավելությունները դիտակցող ու զնահատող կին: Անձամբ ես առաջադրել եմ մի խնդիր ևս այս դերի նկատմամբ, խուսափել հնարավոր սայթաքումից և աշխատել գտնել այն բնորոշ շեշտը, որն անհրաժեշտ է Նատալիային Սունդուկյանի այլ պիեսների նույն միջավայրին պատկանող մոտավոր տիպերից (էփեմիա «Պեպո») դատելու համար» (տես «Պրոլետար» № 96 (2859 27/4 37 թ.):

Դերասանուհին խուսափել է ոչ միայն հնարավոր սայթաքումից, այլև Ստանիսլավսկու սիստեմի լույսով, կարողացել է ճիշտ դրսևորել թե՛ էփեմիայի և թե՛ Նատալիայի կերպարները:

Ուսումնասիրության այդ մեթոդով առաջնորդվելով, կյանքում կիրառելով իր և դերի վրա աշխատելու նշանաբանը, նա փայլուն կերպով կերտել է նաև Անուշի («Բաղդասար աղբար») և Սոֆիի («Ատամնաբույժն արևելյան») կերպարները:

Այդ ազգային, կենցաղային տիպերը ճիշտ տալու համար դերասանուհին պետք է հաղթահարեր նախ բարբառային դժվարությունները, երկրորդ՝ էպոխայի հարազատ և հայերին հատուկ կենցաղի բնորոշ կողմերը: Այդ բոլորը հաղթահարելուց հետո նա պետք է գտներ համապատասխան գույներ ու շափ: Մոճոռյանը իր խաղի մեջ բավարար չափով երևան է բերում և՛ առաջինը, և՛ երկրորդը:

Հաղթահարելով պոլսահայ և թիֆլիսահայ կենցաղի բնորոշ կողմերը, բարբառների առողանության յուրահատկությունները, հերոսուհիների ներքին դրամատիզմը ցայտուն կերպով դրսևորող դերասանուհին հաջողությամբ հանդես է գալիս նաև կենցաղային պիեսներում:

Այդ երևույթը Մոճոռյանի արվեստի ամենացայտուն և ուսանելի կողմն է:

«Ռուզան» և «Մոննա Վաննա» պիեսների հերոսուհիները իրենց ներքին ապրումներով և մի շարք գործողություններով շատ նման են իրար: Շատ լավ է, որ թատրոնի դեկավարությունը այդ երկու դերերն էլ տվել էր միևնույն դերասանուհուն: Մոճոռյանը հնարավորություն ուներ Ռուզանի կերպարում դրսևորել այն պակասը, որը նկատվում է Ջիովաննայի մեջ, և Ջիովաննայի միջոցով էլ ավելի ընդգծել այն խոր դրամատիզմը, որը բացակայում է Ռուզանի մոտ:

Մետեոլինգի Ջիովաննան ապրում է Մուրացանի Ռուզանի հոգեբանական ողբերգական վիճակը: Երկուսն էլ անձնվեր հերոսուհիներ են: Ջիովաննայի մեջ կանացիությունը երևում է իր բնական վիճակում: Երբ նրան հայտնում են, որ հայրենիքը վտանգից ազատելու համար պահանջվում է մի գիշերով թշնամու զորավարի վրանում լինել, նա լռում է. «Նա ոչինչ չպատասխանեց: Դժգունեց ու հեռացավ, առանց մի խոսք ասելու»:

Ջիովաննան ամուսնու՝ Գուրգոյի հետ բացատրվելիս գտնում է, որ այն ինչ մտածել է ինքը, դժվար է իրեն համար. «Ես չեմ կարող... եթե ես գեթ մի բառ ասեմ, իմ ամբողջ գործությունս կկորչի... ես չեմ կարող... ես կամենում եմ... ես ամեն ինչ մտածել եմ, ... ես ամեն ինչ գիտեմ... ես սիրում եմ քեզ, ես քեզ շատ բան եմ պարտական... Գուցե իմ կողմից դա մի հրեշավոր քայլ է, բայց և այնպես ես պիտի գնամ»:

Ռուզանը հորը, նույն առիթով բացատրվելիս, սկսում է մի երկար ճառ ասել: «Միրեցյալ հայր, ես պիտի զոհվեմ, ինձ պիտի զրկեք թշնամու բանակը և հանձնեք բռնավորի, որովհետև քո իշխանության և ժողովրդի բախտն այդ անձնավորությունից է կախված: Ես այնքան թուլասիրտ չեմ, որ իմ հայրենիքին այդպիսի մի զոհ բերելու համար վայրկյան անգամ տատանվեմ: Ես վճռել եմ... հայր իմ, ես պարտավոր եմ անել և դրա համար ունեմ արդեն քո հրամանը»:

Ճարտասանությունը Ռուզանին հատուկ է, Ջիովաննային՝ ոչ: Գեղարվեստական ամբողջականության տեսակետից Մոննան ավելի կատարյալ է, քան Ռուզանը: Ռուզանը մեռնում է, Ջիովաննան ապրում: Այդ վիճակը ապրում է նաև դերասանուհին, որը կարողանում է պայծառ գույներով կերտել անձնուրաց հերոսուհիների բեմական կերպարները:

Երբեք չի կարելի մոռանալ Ջիովաննա - Մոճոռյանին: Ահա նա, բեմահարթակի վրա գծում է դեպի Գուրգոն ու

հայրենիքը մեծ սիրով տոգորված կնոջ դեմքը: Ջիովաննան Մոճոռյանի կատարումով երևում է որպես մեծ կամքի, խորթափանց հոգու տեր վառվուռն կին: Նա տանջվում է, երբ շրջապատը չի հասկանում իրեն և խոր վիշտ է ապրում, երբ ամուսինը կասկածում է: Ջիովաննան հոգեբանական ծանր զիջականությամբ միայն կարողանում է ճշմարտությունը թաքցնել ամուսնուց, պնդելով, որ Պրինչիվալեն իրեն տիրապետել է բռնի կերպով և խնդրում է, որ վերջինիս դատաստանը թողնեն իրեն: Գուրգոն մետեոլինգյան ուղիղտիկյան թելադրված այդ գոյավիճակը երազ է համարում, հաշտվում է կնոջ հետ, իսկ վերջինս իր սերը կապում է Պրինչիվալենի և երազը իրականացած տեսնում:

Ե՛վ Ռուզանը, և՛ Ջիովաննան գործում են հայրենիքի համար: Սակայն մեկը, զոհվելով հանուն հայրենիքի, խեղդում է իր ապրելու ցանկությունը, իսկ մյուսը՝ հանուն ազատագրված հայրենիքի ուզում է ապրել նոր կյանքի համար: Ե՛վ այդ է պատճառը, որ Ջիովաննա - Մոճոռյանը ոչ միայն ապրում, այլև ապրեցնում է հանդիսատեսին, նրան միայն ապրում, այլև դեպի պայքար, այլև դեպի երջանիկ կյանքի ուղին:

1941—42 թատերաշրջանում թատրոնը բեմադրեց Ա. Քաջվորյանի «Դևորգ Մարգարետունի» պիեսը: Մոճոռյանը խաղում էր Սահականուշի դերը: Նա մեծ պաթոսով կերտեց հայրենասեր կնոջ կերպարը, որտեղ դրսևորված է Սահականուշի խոր դրամատիզմը: Դերասանուհին նույն տեմպերամենտով դրսևորեց նաև Սյուրիի կերպարը «Դավիթ բեկ» պիեսում:

1943—44 թատերաշրջանում Մոճոռյանը հանդես եկավ Յուլիան - Սուբբատովի «Դավաճանություն» պիեսում, Ջեյնարի դերում: Որքան հուզիչ էր ու տպավորիչ Ջեյնար-Մոճոռյանը, այդ երևում է նրա զուսպ ու մտածված խաղից: Ջեյնար-Մոճոռյանը պիեսի երրորդ պատկերում Օթար բեկի առջև բացելով քսան տարի շարունակ փականքի տակ կրկնված հայրենասեր մոր սիրտը, հանդիսատեսի առաքելությամբ է հայրենասիրության հուրը: Դերասանուհին առաքելով բնական է այն տեսիլում, երբ նա կաթիլ առ կաթիլ Օթար բեկի երակների մեջ սրկում էր դեպի թշնամին տաճած ատելության թույլը: Հանդիսատեսը զգում էր, որ գործողության զարգացումը ընթանում է նորմալ ու բնական պայմաններում:

Վերջին տաս տարում դերասանուհի Մոճոռյանը մեծ ավյունով հանդես է եկել ժամանակակից և կլասիկ ռեպերտուարում, դրսևորելով իր բեմական հարուստ կուլտուրան, կարողություններն ու եռանդը:

Մոճոռյանը հաջողության գաղտնիքը ճշմարիտ խաղն է: Ուսումնասիրելով պիեսը, նա կարողանում է ընտրել և ընդգծել հանգուցային այն հարցերը, որոնք առնչվում են իր խաղացած դերերի ներքնաշխարհին: Բայց բավական չէ լավ ըմբռնել դերն ու այն շրջապատը, որտեղ հանդես է գալիս հերոսուհին և կամ որտեղ կատարվում է գործողությունը: Յուրաքանչյուր հեղինակ հերոսների գործողությունների և ներքին ապրումների միջոցով ընդգծում է ոչ միայն հերոսի դասակարգային բնորոշ հատկությունները, այլև ընդգծում նրանց կենցաղ դարձած հոգեկան ապրումները, էպոխային հատուկ արտահայտությունները:

Կարողանալ դրսևորել հերոսին ու էպոխան այնքան էլ հեշտ բան չէ: Այդ դժվարին գործը գլուխ բերելու համար հարկավոր է քրտնաջան աշխատանք, մի կարևոր հանգամանք, որին տիրապետում է դերասանուհին:

Մոճոռյանը կազմակերպված և ինքնուրույն դերասանուհի է: Նրա խաղի մեջ կա շափի զգացում: Չթերագնահատելով ռեժիսյորին, նա կուրորեն չի ընդունում նրա տվածը, այլ բարձր գնահատելով թատրոնում և դերասանի վրա ռեժիսյորի կատարած դաստիարակչական աշխատանքն ու դրա անհրաժեշտությունը, ինքն էլ իր հերթին դերի վրա աշխատում է մեծ խնամքով: Դա բխում է կուլտուրական դերասանուհու դեպի ռեժիսյորան ունեցած ըմբռնությունից: Ռեժիսյորը ամեն ինչ է, դատում է դերասանուհին, սակայն դերասանն էլ մեռած տարր չէ, թելադրում է նրան նրա գիտակցականությունը: Հենց այդ գիտակցականությունը Մոճոռյանը շատ բան սովորելով ռեժիսյորից, շատ բան էլ ինքը ինքնուրույն ու յուրովի է ձեռք բերում լարված աշխատանքի շնորհիվ:

Մոճոռյանը նման չէ այն տաղանդավոր դերասանուհուն, որի մասին Գիացիստովան իր «Դերասանը և ռեժիսյորը» հոդվածում մի գեղեցիկ օրինակով ապացուցում է մեր ասածը.

«Սա գիտեմ մի տաղանդավոր դերասանուհու, — գրում է Գիացիստովան, — որը այնպես էր աստվածացնում Մտանիսլավսկուն, որ չէր պատրաստում իր դերերը: Նա ասում

էր. «Երեք ամսից հետո կգա Կ. Ստանիսլավսկին և ես բոլորը կհասկանամ, իսկ առայժմս ոչ ոք թող ձեռք չտա». Իհարկե, մեծ էր Մանիսլավսկին, բայց այդ չի նշանակում, թե տաղանդավոր դերասանուհին իրավունք ուներ իր տաղանդը մի կողմ թողնել և դառնալ անընդունակ»: (Տես «Տեսար», № 6, 1939 թ., էջ 11):

Ուսումնասիրելով Վրացական ՍՍՌ վաստակավոր դերասանուհի Մ. Պ. Մոճոռյանի ստեղծագործական անցած ուղին, մենք գալիս ենք այն եզրակացության, որ նա միշտ էլ առաջ է գնացել, ձգտելով ետ չմնալ ո՛չ կյանքից, և ո՛չ էլ թատերական արվեստի իր ընկերներից: Դերասանուհին այսօր էլ շարունակում է ետ չմնալ, լավ հասկանալով, որ ետ մնացողին խփում են: Նա ապրում է ստեղծագործական նոր վերելք:

Արվեստի բնագավառում հաջողության է հասնում այն արվեստագետը, որը առաջին հերթին տիրապետում է իր արվեստի դժվարությունները հաղթահարելու միջոցներին: Այդ միջոցները յուրաքանչյուրը ձեռք է բերում թատերական կլասիկ և ժամանակակից կուլտուրան քննադատորեն յուրացնելու ճանապարհով: Մոճոռյանը այդ ուղին ընտրել էր դեռևս սկսնակ դերասանուհի եղած ժամանակվանից:

Դեռևս երեսուն տարի առաջ Դեզդեմոնա - Մոճոռյանի մասին «Բանվոր» թերթի թատերական ռեցենզենտ Ոսկանը գրել է.

«Դեզդեմոնան փորձաքար է երիտասարդ դերասանուհիների համար: Մոճոռյանը ենթարկվում է այդ փորձությանը խաղալով այդ դերը: Նա ունի անվիճելի դրական կողմեր: Նրկրորդ գործողության մեջ նա իր տեղումն է տալով անկեղծ սիրով, լի հավատով դեպի ամուսինը գնացող աղջկա տիպը»:

Հոդվածագիրը հոգվածը վերջացնում է գտնելով, որ դերասանուհին ապագայում կարող է մեր բեմի լավ դեզդեմոնաներից մեկը դառնալ:

«Բանվորի» մի այլ ռեցենզենտ թատրոնում նոր ոտք դրած Մոճոռյանի մասին գրել է. «... Մոճոռյանի բեմական ընդունակությունները, անբռնազբոսիկությունը, հաջող միմիկան, իրեն բեմականորեն պահելն ու շարժվածքը՝ այս բոլորը մի-մի տվյալներ են օրիորդի ապագա հաջողության»:

Մոճույանն արդարացրեց «Բանվոր» թերթի թատերա-
կան ռեցենզենտի գուշակումները: Այսօր առանց այս մեջ-
բերումների էլ կարող ենք համարձակ կերպով ասել, որ դե-
րասանուհի Մ. Մոճույանը անցել է բեմական փայլուն հա-
ջողություններով լի փառավոր ուղի և կանգնած է նոր, էլ
ավելի փառավոր հաջողությունների նախաչեմքին:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Մերուն Թորգոմյան	3
Բենիկ Սիլրանյան	35
Հովհաննես Կարայան	75
Ա. Կ. Բերոյան	84
Մարիամ Մոճույան	98

Խմբագիր՝ Ա. ՔԱՆՔԱՆՅԱՆ

Նկարիչ՝ Լ. ԱՍԱՆՈՎ

Տեխնիկական խմբագիր՝ և Սրբագրիչ Գ. ԳԱՂՄԱԶՅԱՆ

Հանձնված է արտագրության 13/IV 1957 թ.: Ստորագրված է
տպագրության 30/XII 1957 թ.: Ֆիզ.-տպագր. 3,750 մամուլ: Պայ-
ման.-տպագր. 6,15 մամ.: Հաշվ.-հրատ. 5,5 մամուլ:
Գինը 2ռ. 20 կոպ.:

Պատվեր՝ № 680 Տիրած՝ 2000 ՈՒՆ՝ 04575:

Ա. Ֆ Մյասնիկյանի անվան «Զարյա վոստոկա» տպարան,
Թբիլիսի, Ռուսթավելու պող. 42:

2013

20 05 13

АШОТ АЙРАПЕТЯН

ЛИТЕРАТУРНЫЕ
И
ТЕАТРАЛЬНЫЕ
ПОРТРЕТЫ

(на армянском языке)

Государственное издательство
«Сабчота Сакартвело»

Тбилиси
1958



අඟුළු 2 අ. 204.